Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵՐԲ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՎՏԱՆԳԻ ՄԵՋ Է

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի փոխարեն 3
Այն փոթորկալից օրերին 4
Գործողության նոր ոլորտներ 16
Երբ այրվում է հողը հայրենի 34
Միության կառուցվածքը 38
Շրջանային կազմակերպությունները 39
«Կյանքի ճանապարհը» 52
Բռնագաղթվածների ու փախստականների կողքին 54
ԼՂՀ պետության կայացման առաջին քայլերին ընդառաջ 57
Նաև ռազմավարական և տնտեսական աշխատանքներ 59
Սուրբ սրբոցը 71
Գործունեության նոր դաշտ 74
Վիրավոր ազատամարտիկների կողքին 76
Մեր բարերարները 79
Քարավանները ետ են վերադառնում 81
Պատվավոր նախագահը 84
Հավելվածներ 87

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵՐԲ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՎՏԱՆԳԻ ՄԵՋ Է

(ԷՋԵՐ «ԱՐՑԱԽ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՑԱԾ ՈՒՂՈՒՑ)

ԵՐԵՎԱՆ «ԼՈՒՅՍ» 1997

Գրքի հրատարակությունը հովանավորել են «Դիզակ» հայրենակցական-բարեգործական միությունը (նախագահ՝ Էդիկ Բաբայան) և Ռաֆայել Շահմուրադյանը:

Հ.Բ. Աբրահամյան. *— Երբ հայրենիքը վտանգի մեջ է (էջեր «Արցախ» հայրենակցական միության անցած ուղուց)*

Գրքում պատմվում է «Արցախ» հայրենակցական միության, թեև կարճ, բայց բեղմնավոր ու հայրենանվեր գործունեության, Հայաստանի և Արցախի համար այն ծանր օրերին միության անդամների ծավալած հերոսական աշխատանքի, ինչպես նաև արցախյան հիմնախնդիրը միջազգային ասպարեզ բարձրացնելու նրանց գործադրած ջանքերի մասին:

Գիրքը նախատեսվում է արցախյան հերոսամարտի պատմությամբ զբաղվողների և ընթերցող լայն շրջանների համար:

Ա 97
ISBN
© Հ. Բ. Աբրահամյան, 1997

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Արցախյան գոյամարտը նիրհից արթնացրեց շատերին և նրանց մղեց վեհ ու նվիրական գործունեության: Արցախահայության ազատագրական պայքարի նոր ժամանակաշրջանի կարապետներ Բագրատ Ուլուբաբյանի, Զորի Բալայանի, Իգոր Մուրադյանի և մյուսների բանակին անդամագրվեցին հազարավոր հայորդիներ, որոնք ոչինչ չխնայեցին հայրենի բնօրրանը պաշտպանելու համար: Նրանցից շատերն ընկան հերոսաբար ու հավերժացան:

Հայ ժողովուրդն իր հազարամյա պատմության քառուղիներում բազմիցս մարտնչել է օտար զավթիչների դեմ՝ հանուն իր ազատության և գոյատևման: Ավարայրից մինչև Սարդարապատ, մինչև մերօրյա արցախյան հերոսամարտը հայ ժողովուրդը դրսևորել է աննկուն կամք և հավաստել ապրելու իր իրավունքը:

Վերջին տասնամյակում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարից ծնունդ են առել հարյուրավոր հասարակական-քաղաքական, հայրենակցական և բարեգործական կազմակերպություններ ու ընկերություններ, որոնց շարքում արժանի տեղ ունի «Արցախ» հայրենակցական միությունը: Տողերիս հեղինակը, նախաձեռնելով միության պատմության ամփոփ շարադրանքը, նպատակ է հետապնդել բացահայտել միության ստեղծման անհրաժեշտությունը, ըստ արժանվույն գնահատել բոլոր նրանց, ովքեր կանգնած են եղել նրա ակունքում և, ընդգծել հայրենակցականի խաղացած դերն ու նշանակությունը:

«Արցախ» հայրենակցականի պատմությանը նվիրված սույն ակնարկը գրելիս օգտագործել ենք միության ընթացիկ արխիվը, մամուլում հրապարակված նյութերը, մի շարք հուշագրություններ և հեղինակի մոտ պահվող այլ նյութեր:

Հեղինակն իր շնորհակալությունն է հայտնում Զ. Բալայանին, Յու. Հովհաննիսյանին, Լ. Ալավերդյանին, Ա. Սամվելյանին, Հ. Հարությունյանին, Շ. Մկրտչյանին, Ա. Սուվարյանին, Գ. Խաչատրյանին, Ռ. Գրիգորյանին, Հ. Հակոբյանին, Դ. Դերոսյանին և ուրիշների՝ նրանց կատարած արժեքավոր դիտողությունների և առաջարկությունների համար:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան
Co. D
№ 10807
«07» 11 2018

ԱՅՆ ՓՈԹՈՐԿԱԼԻՑ ՕՐԵՐԻՆ

Ադրբեջանի կողմից հետևողականորեն իրագործվող հակահայկական, պանթյուրքական քաղաքականության հետևանքով խորհրդային տարիներին Ղարաբաղը լքեցին տասնյակ հազարավոր մարդիկ, որոնք սփռվեցին աշխարհով մեկ: Արցախից դուրս ավելի քան մեկ միլիոն արցախահայեր են ապրում: Մայր Հայաստանը, մանավանդ համայն հայության քաղաքամայր Երևանը, դարձել է արցախահայության հիմնական հանգրվանը: Մոր փաղաքշանքի կարոտ արցախահայն ապրում ու գոյատևում էր ապագայի նկատմամբ լավագույն հույսեր փայփայելով: Նրա բազմաթիվ ընդվզումները մարում էին՝ զարնվելով կայսրության իշխանավորների բիրտ վերաբերմունքին: Բայց ոչինչ հավերժական չէ, ինչպես որ հավերժական չէր խորհրդային յոթանասունամյա բռնապետությունը, որի անկասելի քայքայումն արդեն սկսվել էր:

1988 թվական, փետրվար...

Արցախահայության ազատագրական պայքարը թևակոխեց նոր շրջան: Յոթանասուն տարի մխացող կրակից բոց բռնկվեց. արցախահայությունը փոթորկվեց և Մայր Հայաստանի հետ միավորվելու նրա աննկուն կամքը համակեց ողջ հայությանը...

Ղարաբաղից ստացվող տագնապալի լուրերը բորբոքում էին մարդկանց զգացմունքները: Բոլորից շատ անհանգիստ էին այն արցախցիները, որոնք իրենց կամքից անկախ հայտնվել էին Երևանում կամ հանրապետության մյուս բնակավայրերում: Նրանք, մանավանդ մտավորականության այն թևը, որն ամեն կերպ ձգտում էր սատար կանգնել հայրենակիցների արդար ու խիզախ պայքարին, որոնումների մեջ էին: Մայրաքաղաք Երևանում տեղի ունեցող բազմահազարանոց հանրահավաքներին տոն տվողները ծննդով հիմնականում արցախցիներ էին՝ Իգոր Մուրադյան, Զորի Բալայան, Վաչե Սարուխանյան, Գագիկ Սաֆարյան և ուրիշներ: Այդ փոթորկալից օրերին Երևանում բնակվող արցախցիները հավաքվում էին տարբեր վայրերում, խոսում, վիճաբանում, հարցեր քննարկում,

ֆինանսական ու նյութական միջոցներ հանգանակում և ուղարկում հայրենակիցներին:

Սկզբնական շրջանում հավաքներն ու հանդիպումները տեղի էին ունենում մտավորականների նախաձեռնությամբ: Հենց այդ հանդիպումների ժամանակ էլ ծնվեց հայրենակցական ընկերություն ստեղծելու գաղափարը: Արցախին բազմաբնույթ օգնություն ցույց տալու, հայրենակիցների արդարացի պայքարին սատար կանգնելու և նրանց Ադրբեջանի ճիրաններից դուրս բերելուն օգնելու համար հարկավոր էր ստեղծել մի կենտրոն, որն ի վիճակի լիներ այդ բոլոր աշխատանքները կազմակերպել և ծառայեցնել հիմնախնդրին: Արցախցիները նման փորձ ունեցել են ոչ հեռու անցյալում: 1917-1918 թվականներին, երբ Արցախ-Զանգեզուրը ենթարկվում էր թուրք-թաթարական հրոսակների հարձակումներին և ճնշմանը, Թիֆլիսում բնակվող արցախցիներն ու զանգեզուրցիները կազմակերպեցին «Արցախ-Զանգեզուր» հայրենակցական ընկերությունը, որը ղեկավարում էր Լեոն (Առաքել Բաբախանյան): Ընկերության հանգանակած միջոցներով կազմակերպվեց Շուշիի կամավորական գունդը, որի հրամանատարն էր ծնունդով արցախցի, գնդապետ Միքայել բեկ Մելիք-Շահնազարյանը: Գնդի զինվորներն ու սպաները հիմնականում ղարաբաղցիներ և զանգեզուրցիներ էին: Այդ գունդը հետագայում միանալով զորավար Անդրանիկի կամավորական ջոկատին, կարևոր դեր խաղաց Զանգեզուր-Ղարաբաղը պաշտպանելու գործում: Երևանում և ամբողջ Հայաստանում բնակվող նախկին արցախցիներին միավորելու և հայրենակցական միություն ստեղծելու գաղափարն առաջ քաշեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների դոկտոր **Ալեքսանդր Մանասյանը:** Լեռնային Ղարաբաղին գործնական օգնություն ցույց տալու համար Ա. Մանասյանն առաջարկում է միավորել ազգային բոլոր ուժերը: Ստեղծվում է նախաձեռնող խումբ հետևյալ կազմով՝ Զ. Բալայան, Ա. Մանասյան, Ա. Հովհաննիսյան, Ս. Սարգսյան, Ս. Շահմուրադյան և Լ. Ալավերդյան: Միության ստեղծման կազմակերպչական աշխատանքները կատարում էին Ա. Մանասյանը, Տ. Սարգսյանը, Ա. Հովհաննիսյանը և Լ. Ալավերդյանը:

Հայրենակցական միություն ստեղծելու աշխատանքները հիմնականում լայն թափ են ստանում 1988 թվականի աշնանը:

Ա. Մանասյանն իր վրա է վերցնում միության կանոնադրության նախագծի պատրաստումը: Հոկտեմբերի վերջերին և նոյեմբերի սկզբներին տեղի են ունենում Ղարաբաղի Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի և Շուշիի շրջանների ներկայացուցիչների հավաքներ, որտեղ վերջնականապես որոշվում է ստեղծել արցախցիների հայրենակցական միություն: Հավաքներում ելույթ ունեցողները պահանջում են սատար կանգնել հայրենի Արցախի պաշտպանությանը: Շրջանային հավաքներում ընտրված ներկայացուցիչները հավաքվելով և հարցը քննարկելով, որոշում են հրավիրել արցախահայության ներկայացուցիչների ընդհանուր ժողով և ձևավորել «Արցախ» հայրենակցական միությունը:

1988 թվականի նոյեմբերի 4-ին Երևանի ճարտարապետների տանը տեղի է ունենում արցախահայության ներկայացուցիչների համաժողով, որին մասնակցում են ոչ միայն արցախցիները: Համաժողովում նախագահում էր սպառողական կոոպերատիվի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն **Ալբերտ Հովհաննիսյանը**: Համաժողովը քննարկում է «Արցախ» հայրենակցական միության կանոնադրության նախագիծը և ընտրում միության ղեկավար մարմիններ: Կանոնադրության նախագծի մասին զեկուցումով հանդես է գալիս Ա. Մանասյանը: Կանոնադրության նախագիծը հանգամանորեն քննարկելուց հետո համաժողովը հանձնարարում է նախաձեռնող խմբին՝ արված դիտողությունների հիման վրա կատարել լրամշակում ու ներկայացնել հաջորդ համաժողովի հաստատմանը:

Համաժողովը ընտրում է միության գործադիր մարմին (հետագայում այն վերանվանվում է վարչություն) և հաստատում նախաձեռնող խմբի նոր կազմ՝ Սոս Սարգսյան, Զորի Բալայան, Կարեն Սիմոնյան, Ալեքսանդր Մանասյան, Տիգրան Սարգսյան, Ալբերտ Հովհաննիսյան և Լարիսա Ալավերդյան: Միության գործադիր մարմնի կազմում ընտրվում են Մարտակերտի շրջանից՝ Բակուր Կարապետյան, Սուրեն Նարիմանյան, Վիկտոր Բեգլարյան, Աբել Ապրեսյան, Ասկերանի շրջանից՝ Սամվել Գաբրիելյան, Աբիգ Սամվելյան, Նաիրի Հարությունյան, Մարտունու շրջանից՝ Ռազմիկ Դանիելյան, Գագիկ Սաֆարյան, Վաչե Սարուխանյան, Հադրութի շրջանից՝ Շահեն Մկրտչյան, Իգոր Մուրադյան, Սեյրան Մաթևոսյան, Շուշիի շրջանից՝ Միքայել Թավադյան, Վլադիկ Աթայան, Լևոն Տեր-Պետրոսյան, Ստեփանակերտ քաղաքից՝ Իրինա և Կառլեն

Ադամյաններ: Վերստուգիչ հանձնաժողովի կազմում ընտրվում են՝ Սլավիկ Մուքանյան (նախագահ), Արմավիր Բալայան (տեղակալ), Վասիլի Առստամյան, Լյովա Հայրապետյան, Արգիկ Սուվարյան, Վլադիկ Պետրոսյան և Ֆելիքս Առուշանյան (անդամներ):

Միության գործադիր մարմնի քարտուղար է ընտրվում Լարիսա Ալավերդյանը:

Համաժողովն ընտրում է հինգ հանձնաժողով՝ համայնքների, կապի և լրատվության, սոցիալ-տնտեսական կապերի, մշակութային, ժողկրթության և գիտության, սփյուռքի հետ կապերի: Որպես միության խորհրդանիշ հաստատվում է *Պապն ու Տատը*, որի նախագիծը պատրաստել էր քանդակագործ Ս. Բաղդասարյանը: *Պապն* ճանաչվում է Ս. Բաղդասարյանը, իսկ *Այն*՝ ՀՍՍՀ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ընկերության աշխատակցուհի Ժ. Խուրշուդյանը:

Ալեքսանդր Մանասյան

«Արցախ» հայրենակցական միության առաջին համաժողովը միության նախագահ չի ընտրում: Հանձնարարվում է նախաձեռնող խմբի անդամներ Ա. Մանասյանին և Ա. Հովհաննիսյանին մինչև հաջորդ համաժողովը կոորդինացնել միության աշխատանքները: Միության ֆինանսական հարցերի տնօրինումը և պայմանագրային սկզբունքով մարդկանց աշխատանքի ընդու-

նումը թողնվում է միության գործադիր մարմնի քարտուղար Լարիսա Ալավերդյանի վրա:

Միության գործադիր մարմնի առաջարկությամբ համաժողովից հետո Արցախ են մեկնում գործադիր մարմնի մի քանի անդամներ՝ արցախահայությանը տեղյակ պահելու «Արցախ» հայրենակցական միության կայացման, նրա նպատակների և խնդիրների մասին:

1988 թ. նոյեմբերի 18-ին տեղի ունեցած միության գործադիր մարմնի ընդլայնված նիստը քննարկում է ԼՂԻՄ-ին տնտեսական օգնություն կազմակերպելու հարցը, որի վերաբերյալ զեկուցումով հանդես է գալիս Ալբերտ Հովհաննիսյանը: Նա առաջարկում է ընդլայնել գործունեության ոլորտը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի արտադրական ձեռնարկությունների, գերատեսչությունների և երկրամասում ստեղծվող կոոպերատիվների ու մասնաճյուղերի միջև: Հարց է դրվում 4-5 հոգուց բաղկացած ջոկատներ ուղարկել Լեռնային Ղարաբաղ, որոնք պետք է մոտիկից ուսումնասիրեին արցախցիների բոլոր պահանջները և առաջարկություն ներկայացնեին միության գործադիր մարմնին: Բացի այդ, նրանք պետք է մարդկանց համոզեին չմեկնել արտագնա աշխատանքի, համախմբել նրանց և տեղական իշխանությունների հետ համագործակցելով, նոր աշխատատեղեր բացել: Նիստում ելույթ ունեցողները՝ Լ. Ալավերդյանը, Ի. Մուրադյանը, Շ. Մկրտչյանը, Ա. Բալայանը, Ա. Սամվելյանը, Վ. Բալայանը, Ի. Ադամյանը, Ռ. Դանիելյանը, Հ. Ամիրյանը, Ս. Մաթևոսյանը, Վ. Կարապետյանը, Ս. Մուրադյանը և ուրիշներ առաջարկում են ընդլայնվել միության գործունեության շրջանակները, այն համալրել նոր անդամներով, նրանում ընդգրկել հեղինակավոր անձնավորություններ, ձեռնարկության ղեկավարներ, կապ հաստատել միության մյուս շրջաններում ստեղծված հայկական կազմակերպությունների հետ, ամրապնդել Արցախի հետ սոցիալական կապերը, հարց բարձրացնել Հայաստանի կառավարության առաջ սկսել Ջոդից ԼՂԻՄ տանող ճանապարհի շինարարությունը՝ այդ նպատակով օգտագործելով ուսանողական շինարարական ջոկատներն ու «Արցախ» հայրենակցական միության հնարավորությունները, առաջարկել Երևան քաղաքի շրջխորհուրդներին շեֆություն վերցնել Լեռնային Ղարաբաղի շրջանների և գյուղերի նկատմամբ, հարց բարձրացնել հանրապետության իշխանությունների առջև՝ մասնագետներ ուղարկել և հետազոտել Ղարաբաղի բնական հարստությունները, կենտրոնացված ձևով շինանյութ և արդյունաբերական այլ ապրանքներ ուղարկել մարզի տնտեսություններին, հանգանակություն կազմակերպել և հավաքված միջոցները օգտագործել մարզի ճանապարհների շինարարության և ջրատարների կառուցման համար:

Ալբերտ Հովհաննիսյան

Հատուկ ուշադրություն է դարձվում Լեռնային Ղարաբաղում մարդկանց վերաբնակեցման հարցին: Այդ առթիվ առաջարկվում է հնարավորություն ստեղծել և նախկին արցախցիներին վերադարձնել իրենց բնակավայրերը, վերականգնել և շենացնել քայքայված գյուղերը: Բոլոր այդ առաջարկությունները և դրանց հիման վրա ընդունված որոշումը կոնկրետ ծրագիր հանդիսացան միության հետագա գործունեության համար:

Ամեն օր հարյուրավոր նոր մարդիկ էին գալիս հայրենակցական միություն և անդամագրվում արցախյան պայքարին: Բոլորն էլ լի էին վճռականությամբ և պատրաստ էին ոչինչ չխնայել հայրենի Արցախը փրկելու և այն մայր Հայաստանի հետ միավորելու համար:

«Արցախ» հայրենակցական միության կանոնադրության առաջին հոդվածը հայտարարում է, որ միությունը հայրենակցական-բարեգործական ընկերություն է, որը «համախմբում է ծագումով

արցախցի հայերի ջանքերը Արցախի սոցիալ-տնտեսական, մշակութային և հոգևոր վերածննդի, նրա հետագա բարգավաճման և բնաշխարհի պահպանման համար»: Ինչպես երևում է, միության գործունեության շրջանակը բավականին ընդարձակ է: Կարճ ժամանակամիջոցում «Արցախ» հայրենակցականը ձեռք է բերում հեղինակություն և հետզհետե ընդարձակում գործունեության ոլորտները: Միությունը հենց սկզբից համագործակցում է բոլոր այն կազմակերպությունների, հայրենակցական-բարեգործականների հետ, որոնք շատ թե քիչ զբաղվում էին արցախյան խնդրով:

Այդ առաջին օրերին «Արցախ» հայրենակցականի գործունեությանը նպաստում էր Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ Գրիշա Մովսիսյանը: [1]

Արցախահայության ազատագրական պայքարի երկունքից ծնված «Արցախ» հայրենակցականը անում էր ամեն հնարավորը, որպեսզի ինչ-որ չափով թեթևացնի հայրենակիցների ծանր վիճակը և նպաստի նրանց հաղթանակին:

Միությունը բավականին աշխատանք կատարեց նաև Սպիտակի երկրաշարժի օրերին: Միության մի շարք անդամներ անմիջապես մեկնեցին աղետի գոտի և մասնակցեցին փրկարարական աշխատանքներին: Միությունը հանգանակեց դրամ, հագուստեղեն, սննդամթերք և ուղարկեց աղետյալներին:

«Արցախ» հայրենակցականը ջանում էր Արցախից դուրս բնակվող արցախցիների կապերն ամրապնդել հարազատ երկրամասի հետ, հնարավոր բոլոր միջոցներով օժանդակել Արցախի սոցիալ-տնտեսական զարգացմանը, նրան ցույց տալ ֆինանսական և տեխնիկական օգնություն, նպաստել, որպեսզի միության յուրաքանչյուր անդամ անմիջական մասնակցություն ունենա երկրամասի մշակութային և հոգևոր արժեքների վերականգնման, պահպանման և պրոպագանդման գործին: Միությունը նպաստում էր

[1] *Գրիշա Հակոբի Մովսիսյանը* ծնվել է 1937 թ. փետրվարի 10-ին, Արցախի Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղում: Առաջաձորի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետհամալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը և 1960-ին ավարտելով այն, աշխատանքի է անցել Երևանում: 1972-ին նշանակվել է Երևանի քաղաքային գործկոմի ֆինբաժնի վարիչ, 1987-ին ընտրվել է քաղգործկոմի նախագահի տեղակալ: Նա մահացավ 1991 թվականին իր ուժերի ծաղկման շրջանում: Նրա մահով «Արցախ» հայրենակցականը, և ոչ միայն նա, կորցրեց իր լավագույն ղեկավարներից մեկին:

նաև Արցախ մշտական բնակության վերադարձողներին, աղետյալներին և կարիքավորներին: Միությունը խնդիր է դնում ստեղծել մշակութային կենտրոններ, ազգագրական, թատերական խմբեր, լեկտորիումներ, հիմնել բազմատեսակ կոոպերատիվներ, լինել հովանավոր, հոգևոր-մշակութային և գործարար կապեր հաստատել սփյուռքի, արտասահմանյան ֆիրմաների, պետական ու հասարակական կազմակերպությունների հետ, նպաստել Արցախի դպրոցների ու գիտական հաստատությունների զարգացմանը, ամրապնդել բուժհիմնարկների նյութատեխնիկական բազան, հրատարակել թերթեր ու բյուլետեններ, ստեղծել սիրողական հայրենակցական ակումբներ և այլն: [1] Ընդհանրապես, «Արցախ» հայրենակցականի գործունեության լայն շրջան է կանխագծվում, որի իրագործման համար պահանջվում է միության անդամների մեծ եռանդ և նվիրվածություն:

«Արցախ» հայրենակցականի գործունեությունը ծավալելու համար շատ կարևոր էր գյուղական համայնքների ստեղծումը և նրանց աշխատանքների համակարգումը: Միության ստեղծման սկզբից համայնքների կազմակերպման հարցը գտնվում էր վարչության և նրա նախագահության ուշադրության կենտրոնում: Համայնքների ստեղծումը և նրանց գործունեության արդյունավետ ղեկավարումը կապված էր մի շարք դժվարությունների հետ: Հանրապետությունով մեկ ցրված արցախահայությանը, որի զգալի մասը բռնագաղթվել էր Ադրբեջանից, հավաքել ժողովների, համոզել Արցախ մշտական բնակության տեղափոխվել, հանգանակություն կազմակերպելը դյուրին գործ չէր:

Եվ այդ դժվարին աշխատանքն այն ժամանակ համակարգում էր Երևանի ժողինստիտուտի դոցենտ Արզիկ Սուվարյանը: Նրան կարող էին ամեն օր տեսնել հանրապետության տարբեր շրջաններում ու բնակավայրերում, կապի մեջ էր առանձին կազմակերպությունների և պետական հիմնարկների հետ, մասնակցում էր գյուղական և շրջանային համայնքների գրեթե բոլոր ժողովներին ու հավաքներին: Չէր լինում նախագահության կամ վարչության որևէ նիստ, որտեղ Արզիկ Սուվարյանը հաղորդում չտար համայնքային աշխատանքների մասին: Այդ ամենի արդյունքում, արդեն 1991 թվակա-

[1] Տե՛ս Միության կանոնադրությունը, բաժին 3:

նի հունվարի դրությամբ, միության կազմի մեջ մտնում էին շրջանային հինգ, տարածքային չորս և գյուղական ավելի քան 100 համայնքներ, որոնցում ընդգրկված էր մոտ 10 հազար ընտանիք[1]: «Արցախ» հայրենակցական միության կայացումից հետո, Հայաստան-Ղարաբաղ տնտեսական կապի ամրապնդման ուղղությամբ տարվող աշխատանքները հիմնականում ղեկավարում էին Ալբերտ Հովհաննիսյանը[2] և Լարիսա Ալավերդյանը: Արցախյան շարժման հենց առաջին օրերից Ալբերտ Հովհաննիսյանը ձեռնամուխ է լինում Արցախի բնակչության տնտեսական ամրապնդման և ամայացած, լքյալ գյուղերի վերաբնակեցման գործին: Նրա նախաձեռնությամբ բազմաթիվ ընտանիքներ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշման համաձայն հինգ տարով մեկնեցին Լեռնային Ղարաբաղ՝ Հայաստանում պահպանելով իրենց բնակարանները: Հովհաննիսյանն ակտիվորեն զբաղվել է նաև Հայաստանում փախստականների տեղավորման և նրանց աշխատանքով ապահովելու հարցերով: Նրա նախաձեռնությամբ Լեռնային Ղարաբաղում ստեղծվել են Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների դուստր շուրջ 40 կոոպերատիվներ: Այնտեղ ստեղծված կոոպերատիվների միությունը մտնում է Հայաստանի կոոպերատիվների միության մեջ: 1989 թվականին տեղի ունեցած ԽՍՀՄ կոոպերատիվների առաջին համագումարում Ա. Հովհաննիսյանը հասավ այն բանին, որ համագումարը Արցախի կոոպերատիվների նորաստեղծ միությանը ճանաչեց որպես Հայաստանի կոոպերատիվների միության մաս:

Այդ օրերին Արցախ-Հայաստան կապի ամրապնդման, տնտեսական միավորման ընթացքի խորացման տեսակետից կարևոր էր «ԱՆ-30» նոր ինքնաթիռի ժամանակավոր «գրանցումը» Երևանի օդանավակայանում: Ալբերտ Հովհաննիսյանի անձնական նախաձեռնությամբ վարձակալական հիմունքներով Մոսկվայից բերված ինքնաթիռը, ինչպես նաև երկու ուղղաթիռներ, բավականին աշխուժացրին Արցախ-Հայաստան կապը:

---

[1] Տե՛ս *«Հայաստանի Հանրապետություն»*, *28 հունվարի 1994*, *հ.9*:

[2] *Ալբերտ Սիմոնի Հովհաննիսյանը* ծնվել է 1946 թ. հունվարի 14-ին, Ստեփանավանում: 1969 թ. ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետը: Նա տնտեսագիտության թեկնածու էր: Հովհաննիսյանը 1989 թվականին ընտրվել էր ՀՀ կոոպերատիվների միության նախագահ:

Ալբերտ Հովհաննիսյանի գլխավորած կոոպերատիվների միությունը Գետաշենում և Շահումյանում ստեղծում է բնական բարիքների իրացման հնարավորություններ և նախատեսում այդ բարիքները վերամշակելու համար ստեղծել համապատասխան միջոցներ:

Արցախի հետ կապված Ալբերտ Հովհաննիսյանի գործունեությանը նպաստում և օժանդակում էր «Արցախ» հայրենակցականը: Ցավոք, Ալբերտ Հովհաննիսյանի շատ ձեռնարկումներ մնացին անկատար: Նա զոհվեց բոլորովին երիտասարդ հասակում:

1989 թվականի ապրիլի 14-15-ին Երևանում, արդեն պարետային ժամի պայմաններում, 135-րդ դպրոցի դահլիճում տեղի ունեցավ «Արցախ» հայրենակցական միության երկրորդ համաժողովը: Միության գործադիր մարմնի կատարած աշխատանքների մասին հաշվետվությամբ հանդես եկավ Ա. Մանասյանը: Համաժողովը ընդունեց լրամշակված կանոնադրություն:

Այդ ժամանակ արցախահայության ազատագրական պայքարն ավելի էր սաստկացել: Ադրբեջանից բռնագաղթված հազարավոր ընտանիքներ հանգրվանեցին Ղարաբաղում և Հայաստանում: Նրանք օգնության մեծ կարիք ունեին: Դրան ավելացավ 1988-ի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած Սպիտակի երկրաշարժը, որը Հայաստանում առաջ էր բերել սոցիալ-տնտեսական ծանր կացություն: «Արցախ» հայրենակցականն արագորեն վերակառուցում է իր աշխատանքները և առաջին հերթին զբաղվում բռնագաղթվածների, փախստականների, աղետյալների, խիստ կարիքավորների, որբերի հարցերով:

«Արցախ» հայրենակցականի երկրորդ համաժողովը միության նախագահ ընտրեց Ալեքսանդր Մանասյանին[1], իսկ քարտուղար՝ Իլյա Միքայելյանին: Միության ղեկավարությունը սերտ կապ հաստատելով մյուս հասարակական-քաղաքական կազմակերպությունների, հայրենակցականների ու բարեգործականների հետ, համտեղ ուժերով աշխատանք ծավալեց բռնագաղթվածների ու փախստա-

---

[1] Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Սարգսի Մանասյանը ծնվել է 1940 թվականին, Բաքվում: Ավարտել է ԼՂ Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղի միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտը: Հետո ուսումը շարունակել է Երևանում: Բազմաթիվ գիտական աշխատանքների հեղինակ է, արցախյան պայքարի անմնացորդ նվիրյալ:

կանների նոր խմբերին ընդունելու, նրանց հաշվառելու, տեղավորելու, իսկ ոմանց էլ Արցախ տեղափոխելու ուղղությամբ: Այդ ամենի հետ միասին «Արցախ» հայրենակցականն առաջ էր տանում նաև մյուս ծրագրային խնդիրները: Այսպես. Արցախում այգեգործությունը զարգացնելու նպատակով միությունը 1989 թվականի գարնանը ձեռք է բերում և Արցախի տնտեսություններին տրամադրում երեսուն հազար տնկիներ: Երբ 1989-ի գարնանը Արցախը գտնվում էր շրջափակման և գործադուլի մեջ, միությունը ձեռք է բերում ավելի քան 56 տոննա սննդամթերք և տեղափոխում Լեռնային Ղարաբաղ: Այս գործում «Արցախ» հայրենակցականին աջակցում են մի շարք հասարակական կազմակերպություններ հիմնարկ-ձեռնարկություններ, հայրենակցական և բարեգործական ընկերություններ, կոոպերատիվներ և անհատ գործարարներ:

Հայտնի է, որ Ադրբեջանը երկար տարիներ սիստեմատիկ և պլանավորված քաղաքականություն էր տանում Ղարաբաղի ժողովրդագրությունը փոխելու համար, որն ի վերջո պիտի հանգեցներ Նախիջևանյան տարբերակին: Ի պատասխան այդ անբարո քաղաքականության, «Արցախ» հայրենակցականն իր հիմնական խնդիրներից էր համարում նյութապես օգնել և միջոցներ ծախսել Արցախում ծննդաբերության աճի խթանման և բազմանդամ ընտանիքներին օգնություն ցույց տալու համար: Այդ նպատակով միությունը հատկացնում էր ֆինանսական միջոցներ:

Խորհրդային իշխանության տարիներին Ադրբեջանում ապրող հայությունը (և ոչ միայն Ադրբեջանում) գրեթե ամբողջովին կորցրել էր համայնքային կյանքի ավանդույթները: Բաքվում, Գանձակում, Մինգեչաուրում և այլուր բնակվող հայերը հոգևոր ուծացման դեմ հանդիման կորցնում էին մայրենի լեզուն և կանգնած էին ազգային ինքնությունը կորցնելու վտանգի առջև, նկատելիորեն փոխվում էր նրանց բարոյական նկարագիրը: Ալեքսանդր Մանասյանը համոզում էր, որ միայն համայնքային, ազգային առողջ կյանքը կարող է հակադեղ հանդիսանալ այս հոգևոր և բարոյական անկմանը: Հետևապես, համայնքային, հայրենակցական կյանքի ավանդույթների վերանորոգումով հնարավոր է նորոգել ազգային գոյատևման շարժիչներից մեկը:

«Արցախ» հայրենակցականի երկրորդ համաժողովը, վերլուծելով համայնքային աշխատանքների կատարելագործման և արցախյան ավանդույթների վերականգնման կարևորությունը, նշում

է, որ հայրենակցական միությունները և նրանց մեջ մտնող հայմայնքները կոչված են դառնալու մարդկանց մերձեցման, ազգությունից օտարումը հաղթահարելու և, հետևապես, ազգային միասնության պահպանման ձև: Քանի որ հայրենակցական միություններն իրենց մեջ ամփոփում են միայն ազգային կյանքի որոշ կողմեր, հետևապես նրանք ունեն իրենց խնդիրները և անհնար է գտնել նրանց գործունեության մեջ ազգին հուզող բոլոր հարցերի պատասխանները: Հայաստանաբնակ արցախցիները գալով «Արցախ» հայրենակցական միություն, համոզված էին, որ այստեղ կստանան իրենց հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները: Մինչդեռ դա հնարավոր չէր, որովհետև Արցախի հիմնահարցի լուծման ուղիների և այդ ուղղությամբ գործնական քայլեր կատարելու հարցում այգային-պետական և քաղաքական շրջանակներում բացակայում էր միասնական ու հետևողական մոտեցումը: Հետևապես, միանգամայն տրամաբանական է, որ «Արցախ» հայրենակցականը չի կարող լինել արցախյան հիմնահարցի լուծման ո՛չ միակ, ո՛չ էլ, մանավանդ, խնդրի միարժեք կազմակերպման ձևը: Այն պահանջում էր պետական մոտեցում և համայգային կազմակերպության ձևեր: Ելնելով այդ ամենից, «Արցախ» հայրենակցականի երկրորդ համաժողովը «ամենայն խստությամբ դատապարտում է Խորհրդային Միության պետական և կուսակցական մարմինների վարած բացահայտ հակահայկական քաղաքականությունը, կենտրոնական մամուլի, հեռուստատեսության և լրատվության մյուս աղբյուրների հակահայկական հաղորդումների միջոցով Հայաստանում և մանավանդ Արցախում կազմակերպվող արյունալի պրովակացիաները»:

Համաժողովը խիստ մտահոգություն է արտահայտում Հայաստանի պետական և կուսակցական ղեկավար մարմինների գործունեության նկատմամբ, որոնք Հայաստանի հետ Արցախի միավորման հարցում շարունակում էին դրսևորել անվճռականություն: Համաժողովը միության գործունեության համար նպատակային խնդիր է համարում հայաստանաբնակ արցախցիներին հայրենի բնակավայրեր վերադարձնելը, գյուղական համայնքների ամրապնդումը, շրջանային համայնքների ձևավորումը, ազգային խնդրի լուծման գործում արցախցի կանանց մասնակից դարձնելը, արցախցի ուսանողների ներգրավումը միության աշխատանքներում, միության տնտեսական գործունեության ընդլայնումը Լեռ-

նային Ղարաբաղում, այնտեղ փոքր ձեռնարկությունների, կոոպերատիվների և մասնաճյուղերի ստեղծումը, գյուղերի սոցիալական զարգացման համար լայն աշխատանքների ծավալումը՝ կապված երկրամասի գազաֆիկացման, ջրամատակարարման, ճանապարհների կառուցման և այլ աշխատանքների հետ: Համաժողովը գտնում էր, որ պետք է ամեն կերպ օժանդակել մայր Հայաստանի հետ Արցախի միավորման միութենական ճանաչմանը, «սատար կանգնել Արցախի ազատագրական շարժմանը՝ օգտագործելով քաղաքական, տնտեսական և պայքարի մյուս բոլոր ձևերը մինչև վերջնական հաղթանակ. մեր կարգախոսն է՝ առանց իրական զարգացած հայկական Արցախի չի կարող գոյատևել արցախցին» [1]:

Արցախում բռնկված ազատագրական պայքարն իր հաղթական ավարտին հասցնելու համար, գտնում է «Արցախ» հայրենակցականը, պետք է համագործակցել Հայաստանի պետական մարմինների, քաղաքական, հասարակական, բարեգործական, հայրենակցական կազմակերպությունների ու շարժումների հետ և ամեն ինչ անել այդ պայքարին բոլոր ուժերին մասնակից դարձնելու համար:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈԼՈՐՏՆԵՐ

Արցախում իրավիճակը հետզհետե բարդանում ու ծանրանում էր: Դրա հետ կապված՝ «Արցախ» հայրենակցականի գործունեության դաշտում առաջ են գալիս նոր խնդիրներ ու պահանջներ: Սումգայիթի ողբերգությանը հաջորդեցին Բաքվի, Մինգեչաուրի, Կիրովաբադի և մյուս հայաբնակ վայրերի կոտորածները, Լեռնային Ղարաբաղում Արկադի Վոլսկու գլխավորած կոմիտեին փոխարինելու եկավ Աֆղանստանում իր դաժանություններով հայտնի և Բաքվի 1990 թվականի հունվարյան արյունալի իրադարձությունների հանցավոր Վիկտոր Պոլյանիչկոյի գլխավորած կազմկոմիտեն: Լեռնային Ղարաբաղում և նրա հարակից շրջաններում տեղաբաշխած Խորհրդային Միության չորրորդ բանակի 23-րդ դիվիզիայի զորամասերը, ներքին գործերի նախարարության պատժիչ ջոկատները, ինչպես և նորաստեղծ հատուկ նշանակության ադրբեջանական միլիցիան (օմոն) ամբողջովին դրվեցին կազմկոմիտեի տրամադրության տակ: Հատուկ շրջանի պարետ գեներալ Վ. Սաֆոնովը հլու հնազանդ կատարում էր կենտրոնի, ինչպես և Պոլյանիչկոյի բոլոր պահանջները, որոնք նպատակ ունեին նվաստացնել արցախահայությանը, նրանց բարոյալքել և ենթարկել անասելի տանջանքների: Խորհրդային երկրի զինված ուժերի և Ադրբեջանի օմոնականների կողմից անմարդկային և վայրագ գործողություններ կատարվեցին Արցախի Ավդուռ, Մյուրիշեն, Մաճկալաշեն, Քաջավան, Քարին տակ և այլ գյուղերում: Անձնագրային ռեժիմի ստուգման և զենք առգրավելու անվան տակ նրանք ավերեցին տասնյակ գյուղեր, հարյուրավոր բնակարաններ, պետական ու հասարակական շինություններ, տասնյակ կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների զրկեցին հազարավոր հեկտար հողատարածություններից և մի քանի հազար գլուխ անասուններից:

Ահա այդպիսի պայմաններում 1990 թվականի հունիսի 3-ի Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի (ներկայումս՝ ակադեմիա) նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Արցախ» հայրենակցական միության երրորդ համաժողովը, որի աշխատանքներին մասնակցեցին 311 պատգամավոր և 59 հասարակական կազմակերպությունների ու պետական մարմինների ներկայացուցիչներ: Համաժողովը գնահատական տալով այդ ամենին, միաժամանակ նշեց, որ, ցավոք, ոչ բոլորն են հասկանում վիճակի ահավորությունն ու պահի ողբերգությունը: Դեռևս կային ոչ քիչ արցախցիներ, որոնք դուրս էին մնացել հայրենակցականի կյանքից և խուսափում էին համայնքներում ընդգրկվելուց: Համաժողովը նրանց կոչ արեց շրջվել դեպի հայրենի Արցախ:

Միության հիմնադիր ժողովում առաջ էին քաշվել երեք փոխկապակցված ուղղություններ՝ բարեգործական, սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային: Դրանք իրագործելու ընթացքում զգացվեց, որ պետք է լրացվեն նոր պահանջներով և խնդիրներով: Միությունը շարունակում էր մնալ չգրանցված, հանրապետության բյուրոկրատական ապարատը հրաժարվում էր բացատրել դրա պատճառը: Իսկ եթե դրան էլ ավելացնենք այն, որ միությունը չուներ ո՛չ գրասենյակ, ո՛չ հաստիքային աշխատողներ և ո՛չ էլ տրանսպորտային միջոցներ, ապա պատկերն ավելի պարզ կլինի: Միության բոլոր աշխատանքները կատարվում էին հասարակական հիմունքներով: Նախագահության նստավայրն անընդհատ փո-

N 16370
«Մեսրոպ Մաշտոց անվան»
«» 07 11 2018

---

[1] *ՄԸԱ* երկրորդ համաժողովի որոշումը, էջ 2:

փոխվում էր: Ի վերջո, «Արցախ» հայրենակցականը մտավ Մոսկովյան 11, որտեղ հետո բազավորվեց Հատուկ ծրագրերի պետական վարչությունը: Միության տարբեր տեղերից եկած հազարավոր արցախցիներ էին կուտակվել «Էրեբունի» օդանավակայանում ու չէին կարողանում մեկնել հայրենիք: Շրջափակման մեջ գտնվող Լեռնային Ղարաբաղի հետ միակ միջոցը մնում էին «ՅԱԿ-40» ինքնաթիռը և «ՄԻԳ-8» ուղղաթիռը: «Արցախ» հայրենակցականի նախագահությունն իր վրա վերցրեց «Էրեբունի» օդանավակայանում կուտակված ուղևորներին Արցախ ուղարկելու աշխատանքների կազմակերպումը: Օդանավակայանում սահմանվեց հասարակական հերթապահություն. միության վարչության շատ անդամներ օր ու գիշեր օգնում էին օդանավակայանի ղեկավարությանը՝ կարգ ու կանոն հաստատելու և կարգավորելու Արցախի չվերթերը: Միությունը նույն ձևով լուծեց նաև Արցախ առաքվող առաջին անհրաժեշտության սննդամթերքների ու ապրանքների հարցը: Այդ կարևոր գործին ակտիվորեն մասնակցում էր միության փոխնախագահ, Երևանի պետական համալսարանի դոցենտ Վ. Բեգլարյանը: Նա օրերով չէր հեռանում օդանավակայանից. տեղավորում էր այստեղ կուտակվող ապրանքները, սարքավորումները, մթերքները, ուղղաթիռների վարձը մուծելու համար ֆինանսական միջոցներ որոնում, բարերարներ գտնում և այլն:

«Արցախ» հայրենակցականը, այնուհանդերձ, 1988-1990 թվականներին իր գործունեության գլխավոր խնդիրը համարելով բարեգործությունը և, ելնելով իր սահմանափակ ֆինանսական ու նյութական միջոցներից, ամենից առաջ օգնություն էր ցույց տալիս շրջափակման հետևանքով ծանր կացության մեջ հայտնված Արցախի շրջաններին և սահմանամերձ ու վտանգավոր գոտում գտնվող գյուղերին: Միությունը օգնում էր նաև ազգամիջյան ընդհարումների հետևանքով տուժած և անտեղի ձերբակալվածների, պատանդների, զոհվածների ընտանիքներին: Միության ուշադրության կենտրոնում էին ծանր կացության մեջ հայտնված փախստականները:

Երկրորդից մինչև երրորդ համաժողովն ընկած ժամանակաշրջանում, այսինքն՝ 13 ամսում, միությունը վերոհիշյալ նպատակներով ծախսել է 400 հազար ռուբլի, որից 140 հազարը հատկացվել է Շահումյանի շրջանին և Գետաշենին:

«Արցախ» հայրենակցականը մտահոգված էր նաև Լեռնային Ղարաբաղի լքյալ գյուղերի վերականգնման հարցով: Այդ ուղղությամբ բավականին միջոցներ է ներդրում: Հադրութի շրջանի Կարմրաքար և Սպիտակաշեն լքյալ գյուղերի վերականգնման համար Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Շեն» ջոկատի նախաձեռնությունը լայն աջակցություն է գտնում «Արցախ» հայրենակցականի կողմից: Միությունը Կարմրաքարում բացում է կարի արտադրամաս, որտեղ աշխատանքի են տեղավորվում ավելի քան քսան հոգի: «Շեն» ջոկատի ակտիվ անդամներ Պավլիկ Երիցյանը, Սուրեն Սարդարյանը (հետագայում զոհվել են արցախյան հերոսամարտերում), Գրիգոր Խաչատրյանը լուրջ աշխատանք են կատարում «Արցախ» հայրենակցականից ստացված ֆինանսական ու նյութական միջոցները ժամանակին տեղ հասցնելու և նպատակին օգտագործելու ուղղությամբ:

Միությունը ֆինանսական օգնություն է ցույց տալիս նորածնունդ «Արցախ» հանդեսին, իր վրա է վերցնում «Գանձասար» ֆուտբոլային թիմի հանդերձավորման գործը: Սադրանքների և ազերիների բարբարոսությունների զոհ գնացած երկու տասնյակ ընտանիքներ միությունից ստանում են տարբեր չափի միանվագ ֆինանսական օգնություն:

Արտաքուստ չնչին թվացող այդ օգնությունները կազմակերպվել են մեծ դժվարությամբ և բազում արգելքներ հաղթահարելով: Դրանց մեջ, անշուշտ, չեն մտնում գյուղական և շրջանային համայնքների և միության անդամ անհատ անձնավորությունների կողմից ցույց տված օգնությունները:

Տունդարձը դեպի հայրենի Արցախ նոր թափ է ստանում 1990 թվականի գարնանը, որը նախ և առաջ «Արցախ» հայրենակցականի աշխատանքի արդյունք էր: Միության երրորդ համաժողովը հատուկ ուշադրություն է դարձնում հայրենադարձության կազմակերպման հարցին: Երիցս իրավացի էր միության նախագահ Ալեքսանդր Մանասյանը, երբ համաժողովի ամբիոնից հայտարարում էր. «առկայությամբ, հողի վրա մեր լինելով միայն մենք կարող ենք փրկել մեր երկիրը...» «Բայց,— շարունակում է նա,— վերադարձը արդյունավետ ու անդարձելի կարող է լինել միայն այն դեպքում, եթե այն դրվում է սոցիալ-տնտեսական ամուր հիմքի վրա: Մենք ոչ թե պետք է պոտենցիալ գործազուրկներ ուղարկենք Արցախ, այլ մարդկանց, որոնք պետք է սոցիալապես ամրագրված լինեն տեղում, նպաստեն Արցախի տնտեսական հզորացմանը» [1]:

---

[1] *ՄԸԱ* երրորդ համաժողովի արձանագրություն, էջ 8:

Համաժողովը գտնում է, որ առավել ճիշտ կլիներ, եթե միությունը տրվող ձրի օգնություններից անցնի ինքնավերարտադրող օգնության, ասել է թե՝ մարդկանց օգնել գործ բացելու, գործ դնելու մեջ, այսինքն մարդկանց մեջ դաստիարակել տնտեսավարման, ձեռներեցության հատկանիշներ: Լեռնային Ղարաբաղն ունենալով բնակլիմայական լավագույն պայմաններ, իր շուկան գրեթե լրիվ զիջել էր ազերիներին: Դա աններելի ապաշնորհություն էր: «Արցախ» հայրենակցականն իր վրա է վերցնում երկրամասում վաղահաս բանջարաբուծությամբ զբաղվող որևէ տնտեսության կազմակերպման նախաձեռնությունը: Միությունը կոչ է անում մարզի կոլտնտեսություններին չկառչել տնտեսավարման հին, իրեն չարդարացնող մեթոդներից, որոնք չեն օգնում մարդկանց տեղերում մնալուն, կասեցնում են նրանց ձեռներեցությունը: Առանձնապես շեշտվում է կոոպերատիվների ստեղծման գործընթացն արագացնելու կարևորությունը: «Արցախ» հայրենակցականի նախաձեռնությամբ Ասկերանի շրջանի Դահրավ գյուղում կազմակերպվում է խոզաբուծական առաջին կոոպերատիվը: Միությունը վարկ է տրամադրում Ասկերանի շրջանի «Ամարաս-2» և «Արցախ» շինարարական կոոպերատիվներին: «Արցախ» հայրենակցականը կարևոր է համարում արցախցու մեջ վերականգնել տնտեսական ձեռներեցության որակը: Իսկ դրանում նախ և առաջ պետք է դրսևորել մասնագիտական մոտեցում: Քանի որ չկար Արցախի տնտեսական զարգացման գիտականորեն հիմնավորված ու համակողմանի ծրագիր, որի շրջանակներում հնարավոր կլիներ նոր արտադրությունների ստեղծումը, ուստի միությունը ՄԿՀԳՀ ինստիտուտին պատվիրում է իրագործել Լեռնային Ղարաբաղի նյութական ռեսուրսների հետազոտությունը: Միությունը միևնույն ժամանակ սկսում է Ղարաբաղի գյուղերի անձնագրավորման գործը, որն, անշուշտ, կնպաստեր Արցախի տնտեսական զարգացման գիտականորեն հիմնավորված ծրագրի կազմմանը: Այդ շատ կարևոր աշխատանքը գլխավորում էր Լարիսա Ալավերդյանը: Ելնելով Երևանի և այլ քաղաքների փորձից, «Արցախ» հայրենակցականը խնդիր է դնում կողմնորոշվել դեպի էկոլոգիական մաքուր և ոչ խոշոր արտադրությունների ստեղծումը: Միության ուշադրությունից չի վրիպում նաև երկրամասի արտադրանքի իրացման խնդիրը: Այդ նպատակով միությունը պայմանագիր է կնքում «Լավատես» համամիութենական արտադրական-առևտրական կոոպերատիվի

հետ՝ Երևանում համատեղ «Արցախի բարիքներ» ֆիրմային խանութ բացելու համար:

Հետագա իրադարձությունները, մանավանդ Արցախում սկսված պատերազմը, հնարավորություն չտվեցին «Արցախ» հայրանակցականի նախաձեռնությամբ սկսված Արցախի տնտեսական զարգացման գիտականորեն հիմնավորված ծրագրի կազմման աշխատանքներն ավարտել: 1994 թվականին այդ աշխատանքի կատարումն իր վրա վերցրեց ՀՀ կառավարությանն առընթեր հատուկ ծրագրերի պետական վարչությունը: Ծրագրի կազմման գործում կարևոր դեր խաղացին երևանաբնակ, ծնունդով արցախցի գիտնականներն ու մասնագետները, որոնց մեծամասնությունը «Արցախ» հայրենակցականի անդամներ են:

Լարիսա Ալավերդյան

«Արցախ» հայրենակցականը կարևոր ուշադրություն է դարձնում նաև հոգևոր-մշակութային կյանքին: Նրա հովանավորությամբ Երևանում գործում էր «Կոմիտասական» կամերային համույթը՝ Ալեքսանդր Ազատյանի ղեկավարությամբ: Համույթը համերգներով հանդես էր գալիս Երևանում, Մոսկվայում, Հյուսիսային Կովկասի հայաշատ բնակավայրերում՝ ամենուր արժանանալով դրվատանքի և պատվոգրերի:

Ինչպես նշվեց, «Արցախ» հայրենակցականը հենց սկզբից կարևոր ուշադրություն էր դարձնում ներհամայնքային աշխատանքներին, լավ իմանալով, որ առանց կազմակերպված և ամուր համայնքների, միության գործունեությունը չի կարող լինել արդյունավետ: Միությունը միշտ զգուշացնում էր, որ համայնքների հավաքները չպետք է դիտել որպես սոսկ հանգանականություն կազմակերպելու առիթ: Միության ստեղծման առաջին տարիներին իրենց լավ ու օրինակելի աշխատանքով աչքի էին ընկնում Դահրավի, Հաթերքի. Չափարի, Շոշի, Ներքին Հոռաթաղի, Խծաբերդի, Ճարտարի, Սոսի և այլ համայնքներ, որոնց օրինակն ի ցույց էր դրվում մյուս համայնքներին:

Երևան քաղաքի տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ, հիմնարկներ և շրջաններ իրենց վրա են վերցնում Լեռնային Ղարաբաղի բնակավայրերի շեֆությունը: Միության նախաձեռնությամբ հաճախակի կազմակերպվում էին գյուղական համայնքների և շեֆ կազմակերպությունների ներկայացուցիչների հանդիպումներ: Այդ հանդիպումները տեղի էին ունենում Երևանի առաջին բժշկական ուսումնարանի շենքում: Հանդիպումների ժամանակ քննարկվում էին Արցախի բնակավայրերի ամենաանհրաժեշտ պահանջների հետ կապված հարցեր: Շեֆ կազմակերպությունների հետ տարվող աշխատանքների ուղղությամբ ջանքեր չէին խնայում միության վարչության անդամներ Աբիգ Սամվելյանը, Մելս Հայրումյանը, Հրանտ Պետրոսյանը և ուրիշներ: Հենց այդ հանդիպումների ժամանակ են ծնվում համայնքային խորհուրդները, որոնք պրպտում, գտնում էին փոխօգնության արդյունավետ միջոցառումների ձևեր, Արցախի գյուղերի հետ կապի կայուն և գործող մեխանիզմներ: Առանձնապես կարևոր տեղ էր տրվում շրջանային համայնքային խորհուրդներին, որոնք լավ իմանալով իրենց շրջանների ընդհանուր պահանջները, կարիքներն ու խնդիրները, շեֆ կազմակերպություններին հուշում, գործունեության կոնկրետ առաջարկություն էին ներկայացնում և ամեն կերպ նպաստում գյուղերի հետ կապի ամրապնդմանը: Շեֆ կազմակերպություններից աչքի էին ընկնում Ոսկերչականը, Ալումինի գործարանը, Հայէլեկտրագործարանը և այլն: Շրջանային համայնքների առաջին նախագահներ Արկադի Հարությունյանը (Ասկերան), Սերգեյ Մելքումյանը (Մարտունի), Սեդրակ Նանագուլյանը (Մարտակերտ), Միքայել Մուրադյանը (Հադրութ) և Մովսես

Ղազարյանը (Շահումյան-Գետաշեն) ամեն կերպ ձգտում էին շրջանային համայնքային խորհուրդները դարձնել վճռական օղակներ հայրենակցականի կառույցում:

«Արցախ» հայրենակցականը կապեր է հաստատում Մոսկվայի, Հյուսիսային Կովկասի, Միջին Ասիայի և Խորհրդային Միության այլ տարածքներում կազմակերպված հայկական համայնքների հետ: Կապերը գործնական և ամենօրյա էին նաև «Գթություն», «Ամարաս» և այլ բարեգործական կազմակերպությունների հետ: Օրինակ, միությունը «Գթության» հետ միասին աշխատում էին «Էրեբունի» օդանավակայանում բեռների փոխադրման, փախստականների ընդունման և Արցախի հետ ամենօրյա կապն ապահովելու բնագավառում: «Ամարասի» հետ Ստեփանակերտում օգնություն են կազմակերպում կարիքավոր երեխաներին և ստեղծում կարիքավոր ընտանիքների քարտարան: Արցախի հետ կապը մշտական դարձնելու համար միությունը Ստեփանակերտում բացում է ներկայացուցչություն, որը տնօրինում էր միության անդամ Աղավնի Դանիելյանը:

«Արցախ» հայրենակցականի երրորդ համաժողովը խնդիր է դնում ստեղծել տնտեսական և տեղեկատու ծառայություններ, հրատարակել թերթ, ընդլայնել միության շարքերը և այլն: 1990 թվականի հունիսի 3-ին տեղի ունեցած միության երրորդ համաժողովը ջերմորեն է դիմավորում աքորից նոր վերադարձած արցախյան պայքարի առաջամարտիկ Արկադի Մանուչարովի ելույթը, որը նոր թափ ու լիցք է հաղորդում համաժողովի մասնակիցներին:

Այնուհետև ամբիոն է բարձրանում ԼՂԻՄ Մարտակերտի շրջգործկոմի նախագահ Վ. Ջավադյանը: Նա շրջանի բնակիչների անունից շնորհակալություն է հայտնում «Արցախ» հայրենակցականին այդ դժվարին օրերին հայրենի Արցախին օգնություն ցույց տալու, արցախահայության ազատագրական պայքարին սատար կանգնելու համար, ապա առաջարկում է դիմել ԽՍՀՄ կառավարությանը Ղարաբաղի շրջափակումը վերացնելու, զինվորականության և Ադրբեջանի կառավարության կամայականություններին վերջ տալու խնդրանքով, օգտագործել մտավորականության և գիտական ուժերի հնարավորությունները արցախյան հիմնախնդիրը ճիշտ լուսաբանելու և աշխարհի հանրությանը ներկայացնելու գործում: Հռետորը հնարավոր է համարում շրջանի Ջանյաթաղ, Վարդաձոր, Ներքին Հոռաթաղ գյուղերի դաշտային օթևաններում տեղավորել Արցախ վերադարձող ընտանիքներին:

«Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագիր Մ. Հոհաննիսյանն առաջարկում է Լեռնային Ղարաբաղին ամենից առաջ օգնել տեխնիկայով, այնտեղ ստեղծել «ինտելեկտուալ կենտրոն», «համախմբել և կենտրոնացնել Արցախում պայքարող բոլոր ուժերին»: Գ. Մովսիսյանն առաջարկում է քայլեր ձեռնարկել Զոդ (Սոթք) Մարտակերտ երկաթուղի կառուցելու համար: Անդրանիկ Նանագուլյանը կոչ է անում հնարավոր բոլոր միջոցներով օգնել մարտնչող Արցախին, կապերն ավելի ամրապնդել սփյուռքի հետ, ունենալ տպագիր օրգան: Բանաստեղծ Արտաշես Պողոսյանն առաջարկում է հատուկ ուշադրություն դարձնել Արցախի ճանապարհների շինարարությանը և հայկական հարցը ճշմարտացի լուսաբանելու համար օգտագործել համամիութենական լրատվության միջոցները: Ասկերանի շրջանի նորագյուղցի Ալյոշա Մարտիրոսյանն ասաց.

— Այսօրվա համաժողովը պարտավորեցնում է բոլորիս, որ յուրաքանչյուրս հաշվետու լինենք, թե ինչ ենք արել հայրենի Արցախի խնդիրը լուծելու համար: Գոռում-գոչյուններով, բռունցքներ վեր բարձրացնելով Ղարաբաղ չենք փրկի: Ես արդեն տեղափոխվել եմ Ղարաբաղ և աշխատում եմ կամուրջների շինարարության վրա... Մենք շատ մասնագետներ, ինժեներներ ունենք: Նրանք պարտավոր են գալ Ղարաբաղ և ճանապարհներ ու կամուրջներ կառուցել: Ով հայրենասեր է՝ թող հետևի իմ օրինակին, գա Արցախ ու ճանապարհ, կամուրջ և տուն կառուցի: Արցախը սպասում է մեզ և ոչ թե մեր ճառերին:

ՀՀ խորհրդարանի պատգամավոր Կիմ Բալյանը նշեց, որ հայրենի Արցախի վիճակն այսօր շատ ծանր է: Ադրբեջանը մեզ հետ խոսում է ձեռքի տակ ունենալով խորհրդային տանկեր և հրանոթներ: Մենք պետք է հարվածին հարվածով պատասխանենք: Արցախը պետք է ունենա պրոֆեսիոնալ բանակ, այլապես հայրենի բնօրրանը չենք կարող պաշտպանել: Բոլորս պետք է մեկնենք Արցախ: Սակայն առանց մասնագիտական աշխատանքի և համապատասխան աշխատատեղեր ունենալու Արցախ մեկնելն անօգուտ է: Անհրաժեշտ է Արցախում ստեղծել աշխատատեղեր և աստիճանաբար այնտեղ հավաքել բոլոր արցախցիներին...

— 1915 թվականին Վանի հերոսական պաշտպանության օրերին,— իր ելույթում նշեց «Վասպուրականի նոր սերունդ» հայրենակցական միության ներկայացուցիչ Մարինեն, աչքի ընկավ արցախցի Իշխանը, որը չխնայեց իր կյանքը: Այսօր, եթե արցախցին ծանր կացության մեջ է, մենք՝ վանեցիներս նրա կողքին ենք և կլինենք մինչև պայքարի հաղթական ավարտը [1]:

Աղավնի Դանիելյան

Լարիսա Ալավերդյանի և Աղավնի Դանիելյանի առաջարկությամբ համաժողովն ընդունեց կոչ՝ ուղղված արցախահայությանը և դիմում՝ ԽՍՀՄ կառավարությանը, Միության Գերագույն խորհրդի նախագահին և ՌԽՖՍՀ նախագահին:

Համաժողովը նորընտիր վարչության նախագահ վերընտրեց Ալեքսանդր Մանասյանին, փոխնախագահ՝ Ա. Բալյանին, պատասխանատու քարտուղար՝ Իլյա Միքայելյանին: Ստեղծվեցին բաժիններ. ոցիալ-տնտեսական (նախագահ՝ Գրիշա Մովսիսյան), ռազմա-հայրենասիրական (նախագահ՝ Ռազմիկ Դանիելյան), տրանսպորտի և մատակարարման (նախագահ՝ Վիկտոր Բալայան) և գյուղբաժին (նախագահ՝ Աբիգ Սամվելյան):

Համաժողովից հետո ընկած ժամանակահատվածում միությունը ծավալեց լայն աշխատանք: Այնուհետև միության գործունեությունը ընթանում էր 1990 թվականի հոկտեմբերի 1-ին ստեղծված

[1] Ելույթները տես՝ *ՄԸԱ*, երրորդ համաժողովի արձանագրությունը:

Հայաստանի տնտեսական ծրագրերի իրականացման պետական կոմիտեի (հետագայում՝ վարչություն, որը Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի Արցախի տնտեսական հարցերով զբաղվող օղակն է) հետ համագործակցված:

Ի կատարումը միության երրորդ համաժողովի որոշման, 1990 թվականի հոկտեմբերի 19-ին լույս տեսավ «Արցախ» հայրենակցականի օրգան «Արցախականչ» թերթի առաջին համարը, որի խմբագիրն էր Մուշեղ Բաղդասարյանը: Թերթի ռուսերեն տարբերակը՝ «Զով Արցախան» սկսեց լույս տեսնել 1991 թվականի մարտից. խմբագիրն էր Էդուարդ Բեգլարյանը: «Արցախականչը» գոյություն ունեցավ մեկ տարի, իսկ «Զով Արցախա» թերթը շարունակվեց տպագրվել մինչև 1993 թվականի վերջը: «Արցախ» հայրենակցականի մամուլի ծնունդը ողջունեցին մի շարք քաղաքական ու հասարակական գործիչներ, գրողներ, հրապարակախոսներ: Զորի Բալայանը գրել է. «Արցախականչը» ո՛չ միայն օգնության է կանչում, ո՛չ միայն զարթոնքի է կանչում, ո՛չ միայն պարտավորեցնում է լինել առաջին գծում, այլև հույսը դնում է հենց արցախցիների վրա: Մեր փոխարեն ոչ ոք չի պայքարելու հայրենի օջախի համար, մեր փոխարեն ոչ ոք չի հերկելու հայրենի հողը, մեր փոխարեն ոչ ոք չի իրագործելու մեր նախնիների երազանքը» [1]:

Արցախի թեմի [2] առաջնորդ Պարգև Սրբազանը (Գուրգեն Մարտիրոսյան) «Արցախ» հայրենակցականին է ուղարկել հետևյալ հեռագիրը. «Բերում ենք քեզ Գանձասարի բարձունքներից մեր արցախյան օրհնությունն ու բարի մաղթանքները, հուսալով, որ ձեր այս նորածին շաբաթաթերթը, որի աջակիցները հիմնականում արցախցիներ են, իր գործունեության մեջ կծառայի ճշմարտությանն ու արդարությանը, հավատարիմ մնալով հայ ազգի հարատև շահերին ու Արցախի արդար դատին, նպաստելով մեր ժողովրդի առ Աստված վերականգնող հավատին» [3]:

«Արցախ» հայրենակցականի պարբերականների հաջորդ համարներին ընթերցողներն սպասում էին անհամբերությամբ: Մոսկ-

[1] *«Արցախականչ»*, 19 հոկտեմբերի 1990, հ. 1:

[2] Արցախի թեմը, որը վերացվել էր խորհրդային իշխանության տարիներին, վերականգնվեց 1989 թվականի գարնանը: Նույն թվականի հոկտեմբերի 1-ին Գանձասարում հնչեց առաջին պատարագը:

[3] *«Արցախականչ»*, 31 հոկտեմբերի 1990, հ. 2:



Աբիգ Սամվելյան

վացի ակադեմիկոս, գեներալ գնդապետ Սերգեյ Յակովլևիչ Բարըշևը «Զով Արցախա» թերթի խմբագրությանը գրում է. «Թերթում զետեղված նյութերը պարզապես ցնցող են: Ձեր թերթն ընթերցում են իմ բոլոր ընկերներն ու ծանոթները, նրա մեջ կան բավականին բովանդակալից հոդվածներ, որոնք ճշմարտացիորեն են լուսաբանում տարածաշրջանի վիճակը»: [1]

Կարելի է նման օրինակներ շատ բերել: Ցավոք, «Արցախ» հայրենակցականի պարբերականները կարճ կյանք ունեցան: Դրա հիմնական պատճառը, թերևս, միության ֆինանսական վիճակի վատացումն էր և շրջափակման պայմաններում տպագրական թղթի ձեռք բերման հետ կապված դժվարությունները: Թերթերի փակումը ձեռնտու չէր նախ և առաջ «Արցախ» հայրենակցականին և արցախահայությանը: Փաստորեն միությունը կտրվեց մասսաների հետ կապի այդ լավագույն միջոցից և արցախյան հիմնախնդրի պրոպագանդման լայն հնարավորություններից: Այդ ժամանակ Հատուկ ծրագրերի պետական վարչությունը հնարավորություն ուներ օգնության ձեռք մեկնելու «Արցախ» հայրենակցականին և պարբերականները փրկել փակվելուց, բայց չարեց...

[1] *«Զով Արցախա»*, մարտ 1992, հ. 1:

«Արցախ» հայրենակցականը ստեղծեց նաև տեղեկատվության ծառայություն, որն աշխարհին տալիս էր Արցախին վերաբերող ճշմարիտ տեղեկություններ: Տեղեկատվության համակարգի ձևավորումով միության աշխատանքներն էականորեն նոր բնույթ ստացան:

«Արցախ» հայրենակցականի կյանքում նոր երևույթ էր Մասիսի, Աբովյանի և Հրազդանի տարածքային բաժանմունքների ստեղծումը, որոնք կարևոր դեր խաղացին այդ շրջաններում բնակվող արցախցիներին միավորելու և նրանց ջանքերն ուղղելու Արցախի օգնության ու պաշտպանության ամրապնդմանը:

Վերաբնակեցմանը զուգահեռ հայրենակցականը շարունակում էր Արցախում իրագործել տնտեսական ձեռնարկումներ: Միության նախաձեռնությամբ և ֆինանսական աջակցությամբ ստեղծվում են Նախիջևանիկի թռչնաբուծական փոքր ձեռնարկությունը, Փառուխի շինարարական կոոպերատիվը: Չափարի «Խաչքար» կոոպերատիվի հետ միասին աշխատանքներ են տարվում անասնապահական համալիր ստեղծելու համար: Միությունը Հայաստանի տարածքում ևս ստեղծում է արդյունաբերական մի շարք մանր ձեռնարկություններ:

«Արցախ» հայրանակցականի բոլոր ձեռնարկումներն ուղղված էին Արցախի տնտեսական հզորացմանը: Ստացված շահույթի զգալի մասը ներդրվում էր Արցախում նոր բնակավայրերի հիմնադրմանը, լքված գյուղերի վերաշինությանը, նոր այգիների հիմնմանը: Բավական է նշել, որ միայն Ասկերանի շրջանի Հովսեփավանի շինարարության համար հատկացվել է մի քանի հարյուր հազար ռուբլի:

«Արցախ» հայրենակցականը ձգտում էր ճեղքել լրատվական շրջափակումը և հասնել Ղարաբաղի հիմնախնդրի միջազգայնացմանը: Գրեթե ամեն շաբաթ Մոսկվա և այլուր ուղարկվում էին գրականություն, քարոզչական նյութեր, «Զով Արցախա» և այլ ռուսալեզու թերթեր: Բացի այդ, միության անդամներից կազմված առանձին խմբեր են ուղարկվում երկրի մի շարք շրջաններ, որոնք իրենց ելույթներում պարզաբանում և մարդկանց գիտակցությանն էին հասցնում Ղարաբաղի հիմնախնդրի էությունը: Միության նախագահությունը բողոք-նամակներ էր ուղարկում միութենական և միջազգային բազմաթիվ կազմակերպություններ՝ պահանջելով նպաստել Արցախի հարցի դրական լուծմանը:

«Արցախ» հայրենակցականն իր վարչության և նախագահության նիստերում բազմիցս անդրադարձել է միության գործունեության և աշխատանքների կազմակերպման կատարելագործման հարցին: Այսպես, 1990 թվականի դեկտեմբերի 13-ին տեղի ունեցած նախագահության նիստում Արզիկ Սուվարյանը խնդիր է դնում միության աշխատանքները կազմակերպել մասնագիտորեն և միության գործունեությունը «դնել տնտեսական և ռազմական ուղու վրա», իսկ Գրիգոր Խաչատրյանը գտնում էր, որ միության գործունեությունը պետք է «քաղաքական ուղղվածություն ձեռք բերի» և լայն աշխատանք ծավալվի մանավանդ զինվորականների շրջանում: Համլետ Հարությունյանը եզրակացնում է, որ այսօր մենք այլևս չենք կարող կոոպերատիվների վրա հույս դնել և ասել՝ ամեն ինչ արել ենք: Հայրենի Արցախը պաշտպանելու համար մեզ զենք ու զինվոր է պետք, կռվող ու հայրենիքը պաշտպանողներ: [1]

Քննարկվող հարցի շուրջը առաջարկություններով և դիտողություններով հանդես են գալիս Լարիսա Ալավերդյանը, Էդուարդ Վանյանը, Գրիշա Մովսիսյանը, Արկադի Խանանյանը, Մուշեղ Բաղդասարյանը, Հրանտ Պետրոսյանը, Յուրի Հովհաննիսյանը, Վիկտոր Բեգլարյանը, Աբիգ Սամվելյանը, Վասիլի Առուստամյանը և ուրիշներ: Արկադի Խանանյանի առաջարկությունները, թերևս, ավելի գործնական էին. փոխել միության կազմակերպչական կառուցվածքը, կապեր ամրապնդել հասարակական-քաղաքական, հայրենակցական և բարեգործական բոլոր կազմակերպությունների հետ, միությանը ենթակա կոոպերատիվներից հաշվետվություններ պահանջել իրենց կատարած աշխատանքների մասին, կոնկրետ միջոցառումներ ձեռնարկել միության ֆինանսական-տնտեսական վիճակը բարելավելու համար, լրամշակել միության կանոնադրությունը և այն համապատասխանեցնել ստեղծված նոր պայմաններին, մտածել և կազմել միության ծրագիրը և այլն:

Միության նախագահության այդ նիստը, որն անցավ բուռն վիճաբանությունների մթնոլորտում, իրոք, կառուցողական էր և կարևոր դեր խաղաց հայրենակցականի աշխատանքների հետագա կազմակերպման և այն ավելի արդյունավետ դարձնելու գործում:

---

[1] Տե՛ս *ՄԸԱ*, նախագահության նիստերի արձանագրություններ, էջ 2:

1990-1991 թվականներին Հայաստանի անկախության գործընթացը և Ղարաբաղի կարգավիճակի զանազան մեկնաբանություններն առաջ էին բերել դրամատիկ իրավիճակ: Այն տպավորությունն էր ստացվում, որ Ղարաբաղի հիմնախնդիրն աստիճանաբար ետին պլան է մղվում: «Արցախ» հայրենակցականի նախագահությունը բազմիցս քննարկելով այդ հարցը և ելնելով խնդրի քաղաքական նրբություններից, իր կարծիքն է ներկայացնում հանրապետության խորհրդարանին, նրա նախագահին և վարչապետին: Միության վարչության մի խումբ անդամներ և երևանաբնակ արցախցի մտավորականներ 1990 թվականի նոյեմբերի վերջին և 1991-ի փետրվարի սկզբին հանդիպումներ են ունենում Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ և նրան ներկայացնում «Արցախ» հայրենակցականի և հայաստանաբնակ արցախցիների տեսակետը Արցախի հիմնախնդրի լուծման վերաբերյալ: Այդ փաստաթղթերում [1] արցախցիներն արտահայտում են իրենց անհանգստությունը և մտորումները՝ կապված Մոսկվայի կողմից Բաքվին հովանավորելու, վերջինիս հակահայկական և հակաօրինական ձեռնարկումների հետ: Արցախցի մտավորականները Հայաստանի իշխանություններին հիշեցնում են, որ Մոսկվան Ղարաբաղի հիմնահարցը դիտելով որպես Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճ, դրանով անտեսում է Ղարաբաղի հիմնահարցի բուն էությունը՝ ստրկացված արցախահայության ազատագրումն ու ինքնորոշումը: Միանգամայն ճիշտ գնահատելով Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ բանակցությունների գաղափարը, արցախցի մտավորականները պնդում են, որ այդ բանակցություններում Ղարաբաղի հայությունը պետք է ներկայացվի որպես իրավաբանական սուբյեկտ, որպես տուժված կողմ, որպեսզի հնարավորություն ունենա պաշտպանելու իր շահերը:

Արցախցի մտավորականները միաժամանակ նշում էին, որ Ղարաբաղի կարգավիճակը որոշելիս պետք է ելնել նրանից, որ արցախահայության պայքարը հացի համար չէ, այլ պայքար է քաղաքական, ազգային, մարդկային տարրական իրավունքների համար, իր դարավոր հայրենիքում, իր սեփական տանը ապահով ու մարդկային արժանապատվությամբ ապրելու համար: Մի հանրապետություն, որտեղ ծրագրված կերպով ու բացահայտորեն վարում են ցեղասպանության քաղաքականություն ազգային փոքրամասնությունների ու հարևան ժողովուրդների նկատմամբ, խոսք չի կարող լինել տնտեսական ինքնուրույնության մասին:

Այդ կարևոր փաստաթղթում նաև շեշտվում է, որ մեր ազգի ապագայի կերտման գործում հայ ժողովուրդը մեծ հույսեր է կապում հայոց նոր, ազգային խորհրդարանի հետ: Չէ որ Ղարաբաղը «Հայաստանի միջնաբերդն է», նրա «արևելյան դարպասը»: Բոլոր տեսակի գործողությունների ժամանակ պետք է ելնել հենց այս ռազմավարական նշանակությունից:

Այդ փաստաթուղթը լայն արձագանք գտավ ինչպես Արցախում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, քանզի այն լիովին համապատասխանում էր արցախահայության պահանջներին և պայքարի ոգուն:

«Արցախ» հայրենակցականի նախաձեռնություններն ու գործողությունները սկզբնական շրջանում չէին անցնում հայրենակցական-բարեգործականի սահմաններից: Բացի այդ, 1988-1990 թվականներին «Արցախ» հայրենակցականն այն կարծիքին էր, որ թե՛ Հայաստանի Հանրապետության անկախության գործընթացը և թե՛ արցախյան հիմնախնդրի լուծման ընթացքը էապես կախված է Խորհրդային Միության քաղաքական հեռանկարից, նրա՝ ամբողջական քաղաքականությունը որդեգրած կենտրոնի դիրքերից: Հետևապես, թե՛ միությունը և թե՛ մյուս հասարակական, քաղաքական և բարեգործական կազմակերպությունները ժողովրդավարական պայքարի ձևերից այն կողմ չէին անցնում, այսինքն՝ բացառվում էր զինված պայքարը: Մինչդեռ, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ազատության ու անկախության համար պայքար մղել առանց զենքի և հասնել հաջողությունների, հնարավոր չէ: Խիստ անհրաժեշտություն զգացվեց փոխել պայքարի ձևը: Զենք ու զինյալ պայքար-ահա արցախահայության, նրա հայրենակցական կազմակերպության առաջ դրված նորն ու հրամայականը:

Իրադարձությունները զարգանում էին արագորեն: Իսկ դա, ինչպես ասված է 1991 թվականի հունիսի սկզբին տեղի ունեցած «Արցախ» հայրենակցականի չորրորդ համաժողովի հաշվետու զեկուցման մեջ, «հակասական, դժվարին, հաճախ անկանխատեսելի պրոցես է»: Միայն պարզ էր, որ բոլոր հանրապետություններն էլ

[1] Այն հրապարակվել է «Խորհրդային Ղարաբաղ» թերթում, 13 դեկտեմբերի, 1990, հ. 266:

ձգտում էին անկախության: Կայսրությունն ապրում էր իր վերջին օրերը, այն փուլ էր գալիս աշխարհի աչքի առջև: Անհրաժեշտ էր դրանից զգուշորեն օգտվել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Արցախի ճակատագիրը վճռելիս:

Այդ ժամանակ «Արցախ» հայրենակցականը գտնում էր, որ պետք է Արցախը հռչակել ազգային համաձայնության, խաղաղության և անվտանգության գոտի, պնդել և այնտեղ մտցնել երեք-հինգ տարի ժամկետով նախագահական կառավարում, առաջարկել այնտեղ ստեղծել խորհրդային հանրապետությունների դիտորդների ցանց՝ հասարակական տարբեր կազմակերպությունների մասնակցությամբ: Կային և այլ հնարավորություններ. բանակցություններ վարել երկու՝ հայ և ադրբեջանական համայնքների միջև, հնարավորություններ ստեղծել հասարակական և քաղաքական կազմակերպությունների ազատ այցելությանը Արցախ և շփման մեջ մտնել արցախցիների հետ: Կամ՝ չէր բացառվում ԼՂԻՄ-ը հռչակել միութենական սուբյեկտ, չնայած դա չէր գտնի համարժեք արձագանք:

«Արցախ» հայրենակցականն իր գործունեության ընթացքում համոզվեց, որ ընդհանրապես քաղաքական անգործությունը համազոր է մահվան: Այդ հանգամանքն էլ ստիպում է միության գործունեությունը բարեգործականից փոխադրել քաղաքական պայքարի հարթակ: Դա ժամանակի հրամայականն էր, որը բխում էր արցախյան հիմնախնդրի կնճռոտ հարցից: Այդ պահանջը առաջ են քաշում ոչ միայն միության չորրորդ համաժողովը, այլև հայրենակցականի բոլոր համայնքներն ու անդամները: Բարեգործականից անցնել քաղաքական գործունեության, նշանակում էր ձեռք բերել միանգամայն նոր որակ, ունենալ նոր խնդիրներ ու պահանջներ: «Արցախ» հայրենակցականի համար այդ նշանակում էր նաև ամեն ինչ անել, որպեսզի 1989 թվականի դեկտեմբերի մեկի Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի վերամիավորման մասին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի ընդունած որոշումներից հետո քաղաքական օրացույցը դատարկ չմնար: Չէր բացառվում, որ նման քայլերը կարող էին կանխել Հայաստանի և Արցախի նկատմամբ իրագործվող բռնությունների վերջին ալիքը: Մինչդեռ այդ բռնությունները նպատակ էին հետապնդում քաղաքական իրադրության ապակայունացում Հայաստանում: Սակայն, բարեբախտաբար, դա տեղի չունեցավ և ամեն ինչ բարեհաջող ընթացք ստացավ:

«Արցախ» հայրենակցականի ամենաակտիվ մասնակցությամբ 1991 թվականի մայիսին Ազատության հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում միության անունից կոչ արվեց ստեղծել «միջկուսակցական կոորդինացնող մի խորհուրդ՝ քաղաքական կուսակցությունների անհանդուրժելի ու անբացատրելի մեկուսացումը հաղթահարելու համար»: «Արցախ» հայրենակցականը զգուշացնում էր, որ եթե որևէ քաղաքական ուժ իր վրա չվերցնի այդ նախաձեռնությունը, ապա դա ստիպված կլինի անել միությունը»:

Անկախության գործընթացի հետ կապված անորոշության ամպը, որը առաջացել էր արցախյան հիմնահարցի շուրջը, դեպի «Արցախ» հայրենակցական էր բերում հազարավոր արցախցիների և այլոց որոշակի մի պահանջով՝ «Հայրենակցականը բարեգործականից վերածել հասարակական-քաղաքական կազմակերպության՝ արցախյան հիմնահարցով հատուկ զբաղվելու առաքելությամբ»:

Մինչ այդ նման աշխատանքներ կատարվել էին: Արցախցի մի խումբ մտավորականների նախաձեռնությամբ 1990-1991թվականներին աշխատանքներ էին տարվել նման բնույթի քաղաքական կուսակցություն ստեղծելու համար:

1991 թվականի փետրվարի 7-ին Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի նիստերի դահլիճում հրավիրված համաժողովը, որին մասնակցեցին ավելի քան 400 երևանաբնակ արցախցիներ, որոշեց ստեղծել Արցախի հիմնահարցով զբաղվող քաղաքական կազմակերպություն: Նման կազմակերպության ստեղծումը բխում էր «Արցախ» հայրենակցականի գործունեության մեջ առաջ եկած նոր պահանջներից ու ձգտումներից: Եվ չնայած բավականին ձգձգվեց, բայց և այնպես 1992 թվականի սեպտեմբերի 15-ին Հայաստանի Արդարադատության նախարարությունում գրանցվեց Արցախ-Հայաստան հասարակական-քաղաքական կազմակերպությունը, որի նախագահ ընտրվեց ԳԱԱ ակադեմիկոս, «Արցախ» հայրենակցականի նախագահության անդամ Լենսեր Աղալովյանը:

1996 թ. սեպտեմբերից Արցախ-Հայաստան կազմակերպության նախագահն է աշխարհագրական գիտությունների դոկտոր, միջազգային էկոլոգիական ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆ. Սերգեյ Մելքումյանը, որը նախկինում կազմակերպության առաջին փոխնախագահն էր:

«Արցախ» հայրենակցականի նախագահության անդամներից ոմանք դեմ էին Արցախի հիմնախնդրով զբաղվող առանձին քա-

ղաքական կազմակերպության ստեղծմանը, գտնելով, որ քանի դեռ «արցախյան հիմնահարցը համազգային հարց է», հետևապես իմաստ չունի մի փոքր ժողովրդի համար «անհարկի առատ ազգային կազմակերպությունների թիվը բազմապատկել»: Այնուհանդերձ, այն ժամանակվա քաղաքական վիճակը ստիպում էր «Արցախ» հայրենակցականի նախագահությանը սթափորեն գնահատել ստեղծված իրավիճակը և գտնում, որ միությունը «չպետք է դիմադրի հասարակական-քաղաքական նման կազմակերպության կամ շարժման ձևավորմանը»: [1]

1991 թվականի գարնանը «Արցախ» հայրենակցականը, ելնելով ստեղծված այն վիճակից, որ ՀՀ Գերագույն խորհրդում Արցախի հիմնահարցի շուրջը առաջացել էր տարակարծիք, որոշեց «ճնշում» գործադրել խորհրդարանի վրա և ստիպել ընդունել արցախանպաստ որոշում: Միության հարյուրավոր անդամներ, հավաքվելով Ադամյան փողոցում, պահանջում էին խորհրդարանում ելույթի հնարավորություն տալ «Արցախ» հայրենակցականի ներկայացուցիչներին և ընդունել այնպիսի որոշում, որը կբավարարեր արցախահայության արդարացի պահանջը: Հայաստանի Խորհրդարանի մի շարք պատգամավորներ վճռական չէին Արցախի հարցում: Այդ օրերին Արցախում ստեղծված ծանր վիճակը՝ Բերդաձորի և Հադրութի շրջանի 14 գյուղերի հայաթափումը ստիպեցին հրավիրել Գերագույն խորհրդի նախագահության նիստ, որտեղ ելույթ ունեցան Սերգեյ Աբրահամյանը, Լենսեր Աղալովյանը, Յուրի Հովհաննիսյանը և Արզիկ Սուվարյանը: Նրանք Հայաստանի իշխանություններից պահանջում են փոխել իրենց վերաբերմունքը Արցախի հիմնահարցի վերաբերյալ:

ԵՐԲ ԱՅՐՎՈՒՄ Է ՀՈՂԸ ՀԱՅՐԵՆԻ

1990-ական թվականների սկզբներից արցախահայության պայքարը փոխադրվում էր նոր հարթություն: Սակայն հակառակ կողմը՝ ազերիները փորձում էին Արցախի հիմնախնդիրը լուծել զենքի ուժով և կանգ չէին առնում ոչ մի միջոցի առաջ:

«Արցախ» հայրենակցական միությունը ջանքեր չէր խնայում Արցախից դուրս ապրող արցախցիների կապերն ավելի ամրապնդել հարազատ երկրամասի հետ, նպաստել Լեռնային Ղարաբաղի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի զարգացմանը, ֆինանսական և նյութական օգնություն ցույց

[1] Նույն տեղում, էջ 8:

տալ Արցախ մշտական բնակության մեկնողներին, կարիքավորներին, ուսուցիչներին, ծերերին, անօգնական թոշակառուներին, որբերին, զոհվածների ընտանիքներին և այլոց: Սակայն ամենակարևորը հայրենի երկրամասի պաշտպանության ամրապնդմանը նպաստելն էր:

«Արցախ» հայրենակցական միության չորրորդ համաժողովը միության վարչության նախագահ ընտրեց երիտասարդ քանդակագործ Յուրի Հովհաննիսյանին: [1]

Յուրի Հովհաննիսյան

«Արցախ» հայրենակցականի ինչպես չորրորդ, այնպես էլ 1993թ. նոյեմբերի 6-ին տեղի ունեցած հինգերորդ համաժողովները կրկին անդրադառնալով համայնքային աշխատանքներին, կոչ արեցին Արցախից դուրս ապրող բոլոր արցախցիներին միավորվել հայրենակցականի շուրջը և համատեղ ուժերով սատար կանգնել հայրենի երկրին: Ցավոք, ոչ բոլոր արցախցիները ներգրավվեցին միության մեջ: Մինչդեռ «Արցախ» հայրենակցականի համայնքներում ընդգրկված հազարավոր ընտանիքներ և անդամներ քուն ու դադար չունեին: Դա այնպիսի մի ծանր ու միևնույն ժամանակ հերոսական պայքարի ժամանակաշրջան էր, երբ Արցախը մայր

[1] *Յուրի Հովհաննիսյանը* ծնվել է 1948 թ. Արցախի Շոշ գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում:

Հայաստանի հետ ուներ միայն օդային կապ: Միությունը և նրա շատ համայնքներ կարողանում էին հաղթահարել ստեղծված բոլոր դժվարությունները, փշրել շրջափակման պատնեշները և ուղղաթիռներով ու ինքնաթիռներով օգնության ձեռք մեկնել հայրենակիցներին: Արցախի բազմաթիվ համայնքներ կարողացան հաղթահարել բոլոր դժվարությունները և հարյուրավոր տոննաներ վառելիք, պաշտպանության միջոցներ, ավտոմոբիլներ, գյուղատնտեսական մեքենաներ, պահեստամասեր, բոլոր տեսակի հումք, ինչպես նաև դրամ փոխադրել Արցախ: Այդ ամենը կատարվում էր հասարակական, բարեգործական, հայրենակցական կազմակերպությունների, կոոպերատիվների, արդյունաբերական ձեռնարկությունների, պետական հիմնարկների ակտիվ մասնակցությամբ և օգնությամբ: Իսկ երբ 1992-ի մայիսին բացվեց Արցախը մայր հայրենիքի հետ կապող Լաչինի միջանցքը, վիճակը միանգամից փոխվեց: «Արցախ» հայրենակցականի, նրա շրջանային, տարածքային և գյուղական համայնքների գործունեության համար բացվեցին ավելի լայն հնարավորություններ: Ամեն օր կենսական նշանակություն ունեցող ապրանքներով ու պաշտպանական միջոցներով բեռնված հարյուրավոր ավտոմոբիլներ էին մեկնում Արցախ: ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, «Արցախ» հայրենակցականի վարչության անդամ Ռազմիկ Դանիելյանը[1] ՀՀ Գերագույն Խորհրդի հանձնարարությամբ անձամբ ուղեկցում է 130 ավտոմոբիլից բաղկացած շարասյունը, որը հարյուրավոր տոննա սննդամթերք, շինանյութ, վառելանյութ և այլ ապրանքներ է հասցնում Արցախ: «Վարանդա» հայրենակցական ընկերության նախագահության անդամ, Կոլխոզաշենի համայնքի նախագահ Սանթուր Ավանեսյանի նախաձեռնությամբ կազմակերպվեց և ՀՀ առևտրի նախարարության աշխատողների հանգանակած գումարով վեց ավտոմոբիլ (մոտ 40 տոննա) ապրանք և սննդամթերք ուղարկվեց Մարտունու շրջանի պաշտպանական ջոկատի համար և հանձնվեց Մոնթե Մելքոնյանին: Աբովյանի տարածքային մասնաճյուղի նախագահ Էդուարդ Գրիգորյանի զեկուցագրից տեղեկանում ենք, որ մասնաճյուղը 265 հազար ռուբլու օգնություն

[1] *Ռազմիկ Անդրանիկի Դանիելյանը* ծնվել է 1936 թ. ԼՂՀ Մարտունի քաղաքում, ծառայողի ընտանիքում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և զորակոչվել բանակ: Բարձրագույն տնտեսական կրթություն ստացել է Մոսկվայում, այնուհետև ավարտել է Սանկտ Պետերբուրգի առևտրի ինստիտուտի ասպիրանտուրան: 1982-ից տնտեսագիտության թեկնածու է: 1988 թվականից Ռ. Դանիելյանը Արցախում էր և ակտիվորեն մասնակցում էր արցախահայության հերոսական պայքարին:

է ցույց տվել ազատամարտիկների ընտանիքներին, միջոցներ է տրամադրել զոհված ազատամարտիկների գերեզմանոցների կառուցման համար, մի քանի անգամ սննդամթերքով բեռնված ավտոշարասյուներ է ուղարկել Արցախ՝ ամեն անգամ տանելով մինչև 70-80 տոննա մթերք, շինանյութեր և վառելիք: Աբովյանի մասնաճյուղը միայն 1991 թվականին 12-13 միլիոն ռուբլու սննդամթերք և արդյունաբերական ապրանքներ է ուղարկել Արցախ: Բացի այդ, ԼՂՀ նախարարների խորհրդի օգնության ֆոնդին նվիրաբերել է 350 հազար ռուբլի կանխիկ դրամ:

Այդ օրերին Արցախին զգալի օգնություն են ցույց տվել նաև մյուս տարածքային բաժանմունքները, գյուղական և շրջանային համայնքները, Հայաստանի Հանրապետության արդյունաբերության, առևտրի, տրանսպորտի և հաղորդակցության, մթերումների և այլ նախարարություններ, շրջաններ, հարյուրավոր արդյունաբերական ձեռնարկություններ, հիմնարկներ, տարբեր կազմակերպություններ: Ամեն ինչ Արցախին՝ այս կոչը հնչում էր հանրապետության բոլոր քաղաքացիների շուրթերից: Ամեն կողմից շրջափակման մեջ գտնվող Հայաստանի Հանրապետությունը ստիպված էր ընդունել հարյուր հազարավոր փախստականների և բռնագաղթվածների ոչ միայն Ղարաբաղից, այլև երկրի այլ տարածքներից: Ծանր, չափազանց ծանր էր Հայաստանի դրությունը: Բայց նա դիմանում էր և իր թևերի տակ առնում մահից փրկված իր հարյուր հազարավոր զավակներին:

Ռազմիկ Դանիելյան

«Արցախ» հայրենակցական միությունը բաղկացած է շրջանային, տարածքային և գյուղական համայնքներից: Գյուղական համայնքներն իրենց մեջ ընդգրկում են Արցախի սահմաններից դուրս միևնույն տարածքում բնակվող համագյուղացիներին: Գյուղական համայնքը ղեկավարում է համայնքի ընդհանուր ժողովի կողմից ընտրված խորհուրդը, կամ նախագահը: Շրջանային համայնքների մեջ ընդգրկվում են միևնույն շրջանի գյուղական բոլոր համայնքները: Շրջանային համայնքը ղեկավարում է շրջանային համայնքների համաժողովի կողմից ընտրված նախագահությունը կամ վարչությունը: Գյուղական և շրջանային համայնքները կարող են ստեղծել և տնօրինել միջոցներ՝ իրենց գյուղին կամ շրջանին օգնելու համար:

Միության բարձրագույն մարմինը համայնքների ներկայացուցիչների համաժողովն է, որն իրավազոր է ներկայացուցիչների 2/3-ի մասնակցության դեպքում: Այն որոշումներ է ընդունում մասնակիցների պարզ մեծամասնությամբ. Համաժողովը ընտրում է գործադիր մարմին (վարչություն), վերստուգիչ հանձնաժողով և խմբագրական կոլեգիա, հաստատում է նրանց գործունեության ծրագրերը և գնահատում կատարած աշխատանքը: Վարչությունը ընտրում է նախագահություն, նախագահ, փոխնախագահ և քարտուղար, որը հաստատվում է համաժողովի կողմից: Վարչությունը ստեղծում է բաժիններ և հաստատում նրանց նախագահներին: Վարչությունը վարում է միության գործերը համաժողովների միջև ընկած ժամանակաշրջանում: Այն հաշվետու է միության համաժողովի առաջ: Վարչությունը վճիռներ է կայացնում ձայների պարզ մեծամասնությամբ՝ իր անդամների 2/3-ի ներկայության դեպքում: Վարչության անդամների թիվը որոշվում է միության համաժողովի կողմից: Վարչության կողմից ընտրված և համաժողովի կողմից հաստատված նախագահությունը մշտական գործող մարմին է, որը նիստեր է գումարում ոչ պակաս, քան ամիսը երկու անգամ: Նախագահությունը հաշվետու է վարչության առաջ: Շրջանային, տարածքային և գյուղական համայնքները կարող են ունենալ իրենց կանոնադրությունները, կնիքը և բանկային հաշիվը: Նրանք պարտավոր են իրենց կուտակած ֆինանսական միջոցների որոշ մասը փոխանցել միության հաշվին:

Տարածքային համայնքները ստեղծվում են հանրապետության խոշոր բնակավայրերում (բացի Երևանից) բնակվող արցախցիներից: Այն օգտվում է շրջանային համայնքներին տրվող իրավունքներից:

Սկզբնական շրջանում շրջանային, տարածքային և գյուղական համայնքները ինքնուրույնություն չունեին, որովհետև դրա կարիքը չկար: Իսկ երբ հայրենակցականի գործունեության շրջանակներն ընդլայնվեցին, ապա ծնվեցին նոր խնդիրներ ու պահանջներ: Միության մի քանի աշխատողներ (այն էլ հասարակական հիմունքներով) չէին հասցնում լուծել ֆինանսական հարցերը, լինել փախստականների ու բռնագաղթվածների կողքին, հիվանդանոցներ այցելել, մթերքներ ու պաշտպանության միջոցներ ձեռք բերել ու Արցախ փոխադրել և այլ աշխատանքներ կատարել: Անհրաժեշտություն զգացվեց շրջանային և տարածքային համայնքներին ընձեռել ինքնուրույնություն և նրանց լայնորեն գործելու հնարավորություն տալ: Արդյունքում այդ միջոցառումն իրեն լիովին արդարացրեց: Շրջանային և տարածքային համայնքների իրավական ինքնուրույնությունը հանգեցրեց նրան, որ մեծացան ֆինանսական և նյութական միջոցների ձեռք բերման և դրանց բաշխման հնարավորությունները, հաստակեցվեց պաշտպանական ջոկատների կազմակերպման, նրանց հանդերձավորման և Արցախ ուղարկելու գործը: Փախստականների և բռնագաղթվածների հետ աշխատելն ավելի գործնական դարձավ, աշխուժացան գյուղական համայնքները, պաշտպանական միջոցների ձեռք բերումը մի տեսակ մրցութային ձև ընդունեց և այլն:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Արցախ» հայրենակցական միության մեջ մտնում են «Ջրաբերդ», «Վարանդա», «Դիզակ», «Խաչեն», «Շահումյան-Գետաշեն» շրջանային կազմակերպությունները և «Բերդաձոր» ու «Քարին տակ» համայնքները, որոնք ստեղծվել են Շուշիի շրջանային համայնքի փոխարեն:

«Ջրաբերդ» հայրենակցական-բարեգործական միությունը ձևավորվել է 1989 թվականին, որում ընդգրկված են Մարտակերտի շրջանի ավելի քան 30 գյուղական համայնքներ: Միության առաջին նախագահն էր հանգուցյալ **Սեդրակ Միրզոյի Նանանգյուլյա-**

նը [1]: Նա փորձառու և հմուտ կազմակերպիչ էր, լավ էր հասկանում հայրենակցականի անելիքները: Միության ստեղծման գործում Նանանգյուլյանին աջակցել են Ռ.Սայանը, Վ.Դավթյանը, Մ.Խուրշուդյանը, Ս.Ղահրամանյանը, Բ.Սաղյանը, Հ.Հակոբյանը, Ս.Բաղալյանը, Օ.Ալեքսանյանը, Գ.Գալստյանը, Գ.Մովսիսյանը, Հ.Հովհաննիսյանը, Ռ.Դանիելյանը, Բ.Զալալյանը և ուրիշներ: «Զրաբերդ» հայրենակցական-բարեգործականն իր վրա վերցրեց շրջանի կոլտնտեսություններին, պետական տնտեսություններին և պաշտպանական ջոկատներին սերմերով, վառելիքով և պաշտպանական միջոցներով օգնելու խնդիրը: Միությունը միայն զոհված, վիրավոր և կարիքավոր ազատամարտիկների ընտանիքներին ցույց է տվել 9,5 միլիոն ռուբլու ֆինանսական օգնություն: [2]

«Զրաբերդ» բարեգործականը գյուղական համայնքների ակտիվ մասնակցությամբ հայաստանաբնակ մարտակերտցիներից կազմակերպում է տասնյակ կամավորական ջոկատներ և ուղարկում Մարտակերտի շրջան: Այդ ջոկատները հիմնականում օգնում էին շրջանի գյուղատնտեսական աշխատանքներին և ինքնապաշտպանությանը: Միության նախաձեռնությամբ 1991թ. վերջին և 1992թ. սկզբին Մարտակերտի շրջան փոխադրվեցին մարտակերտցիներից կազմակերպված առաջին մարտական ջոկատները: Վերին Հոռաթաղի, Մաղավուզի, Թալիշի, Դրմբոնի, Այգեստանի, Մարտակերտի, Լենինավանի, Չափարի և Հաթերքի ինքնապաշտպանական ջոկատները, որոնց հանդերձավորումն իր վրա վերցրեց ՀՀ պաշտպանության նախարարությունը, Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանական ջոկատների հետ միասին կարևոր դեր խաղացին շրջանը ազերիների հրոսակներից պաշտպանելու գործում: Ռաֆիկ Սայանը, Սլավիկ Բաղալյանը, Սերժիկ Ասլանյանը, Վանիկ Օհանյանը, Ռուբեն Աբրահամյանը, Լերմոնտ Ստեփանյանը, Կոլյա Հարությունյանը, Արմիկ Գրիգորյանը, որպես հրամանատարներ, ցուցաբերեցին ռազմական գործը ղեկավարելու հմտություն: Նրանք իրենց ջոկատներով մասնակցեցին շրջանի մի շարք գյուղերի

[1] *Սեդրակ Սանագուլյանը* կյանքի վերջին տարիներին հրատարակեց «Արծիվները բարձունքներ են տենչում» եռամաս և «Շահեն» գրքերը, որոնք նվիրված են Արցախի ազատագրական պայքարում հերոսաբար մարտնչած ազատամարտիկների սխրագործություններին:

[2] *ՄԸԱ*, «Զրաբերդ» հ/բ միության հաշվետվությունը, էջ 1:

պաշտպանության և ազատագրման համար մղված մարտերին: «Զրաբերդ» միությունը ռադիոկապի մեջ էր ջոկատների հրամանատարների հետ: Միության նախագահությունը արագորեն արձագանքում էր հրամանատարներ Լեոնիդ Ազգալդյանի, Վլադիկ Բալայանի, Վագիֆ Գալստյանի և մյուսների խնդրանքին և անհրաժեշտ օգնություն ցույց տալիս: Այն դժվարին օրերին, երբ օկուպացվել էր Մարտակերտի շրջանի զգալի մասը, «Զրաբերդ» միության նախագահության հանձնարարությամբ Քնարիկ Աթաբեկյանը, Վլադիմիր Յազուլյանը, Յուրի Խաչիկյանը, Կարինե Յաղուբյանը և ուրիշներ օր ու գիշեր զբաղված էին շրջանից բռնագաղթվածներին և փախստականներին տեղավորելու, նրանց օգնություն ցույց տալու գործով: Ուղղաթիռներն իրար ետևից Մարտակերտի շրջան էին թռչում մթերքներով ու պաշտպանության միջոցներով բեռնված ու վերադառնում՝ բերելով վիրավորներ, երեխաներ, կանայք ու ծերունիներ: Ուղղաթիռները վայրէջք էին կատարում Հաթերքում, Քոլատակում, Հոռաթաղում և ուր հնարավոր էր: Իսկ երբ բացվեց Լաչինի միջանցքը, ամեն օր Մարտակերտի շրջան էին ուղարկվում ավտոշարասյուններ, որոնք տանում էին հարյուրավոր տոննաներով անհրաժեշտ բեռներ:

1991 թվականի վերջից «Զրաբերդ» միությունը ղեկավարում են համանախագահներ Սլավիկ Ղահրամանյանը և Վլադիկ Դավթյանը: 1992-ի ծանր օրերին նրանք դիմեցին հայաստանաբնակ մարտակերտցիներին և կոչ արեցին վերադառնալ հայրենի Արցախ ու մասնակցել նրա պաշտպանությանը: Կոչին արձագանքեցին հարյուրավոր մարտակերտցիներ, որոնցից կազմված կամավորական ջոկատներն արդեն զորամիավորումների տեսքով մեկնեցին Արցախ: Առաջին գումարտակը, որը բաղկացած էր շուրջ 180 հոգուց, Վանիկ Օհանյանի հրամանատարությամբ հերոսական մարտեր է մղում Մադաղիսի բարձունքներում, որտեղ և 1993-ի դեկտեմբերի 24-ին հերոսաբար զոհվում է Օհանյանը: Հետագայում, 1994-ի ապրիլին, Օհանյանի զորամասի մարտիկները հերոսական մարտեր մղեցին և մասնակցեցին իրենց սիրելի հրամանատարի հայրենի Թալիշ գյուղի ազատագրմանը:

«Զրաբերդ» միությունը փախստականների պետական վարչության հետ համագործակցած մեծ աշխատանք կատարեցին բռնագաղթվածներին և փախստականներին ազատագրված գյուղերը վերադարձնելու գործում:

«Դիզակ» հայրենակցական-բարեգործական միությունը[1] կազմակերպվել է 1990 թվականի մայիսին, որի կազմի մեջ մտնում են 12 գյուղական համայնքներ: Միության առաջին նախագահն էր հանգուցյալ գեներալ մայոր Միքայել Մուրադյանը: Նրա մահից հետո «Դիզակը» ղեկավարում է Էդիկ Բաբայանը: Նա ձեռներեց, իր գործին ֆանատիկորեն նվիրված անձնավորություն է: Էդիկի համար հայրենի յուրաքանչյուր թիզ հողը սրբություն է, կյանքից էլ թանկ: Նա հաճախ է կրկնում. «Եթե չլինեին Շ.Մկրտչյանը, Է.Գրիգորյանը, Ռ.Հակոբյանը, Հ.Սարգսյանը, Վ.Իվանյանը, Ռ.Գևորգյանը, Է.Մկրտչյանը, Հ.Ամիրյանը, Ի. և Ն.Շադյանները, Վ.Այվազյանը, Ս.Զաքարյանը, Զ.Բալայանը, Կ.Հովհաննիսյանը, Ա.Օհանյանը, Գ.Բաղյանը և ուրիշներ, հազիվ թե հնարավոր լիներ միության գործերը հաջողությամբ առաջ տանել: Առանձնապես եռանդուն է աշխատում Տումու համայնքի նախագահ, պահեստի փոխգնդապետ Հայկ Սարգսյանը, որի համար ոչ մի խոչընդոտ գոյություն չունի, եթե այն ընկած է հայրենիքին օգնություն ցույց տալու ճանապարհին: Նոր Հաճընի գյուղատնտեսական տեխնիկումի տնօրեն, «Դիզակ» հայրենակցականի նվիրյալ անդամ Ցոլակ Խաչատրյանը միությանը տրամադրել է խնձորենու և տանձենու հազարավոր տնկիներ, որոնք տեղափոխվել են Հադրութի պետական տնտեսություն և 20 հեկտարի վրա հիմնադրել պտղատու այգի, որի պտուղներն այսօր վայելում են հադրութցիները:

Անցյալում Հադրութի շրջանը էլեկտրաէներգիա ստանում էր Ֆիզուլուց: «Դիզակի» ղեկավարությունը, կանխազգալով, որ վաղ թե ուշ շրջանը հոսանքազրկվելու է, նախապատրաստվում են դրան: Գեներալ Մ.Մուրադյանի խնդրանքով Հայէլեկտրագործարանի տնօրեն Կարեն Դեմիրճյանը «Դիզակին» տրամադրում է 10 շարժական դիզելային էլեկտրակայան և գործարանի ավտոմեքենաներով տեղափոխում Հադրութ:

Արցախահայության դահիճ գեներալ Սաֆոնովի ու Պոլյանիչկոյի հրամանով 1991 թվականի մայիսին տեղահանվում են Հադրութի շրջանի Առաքել, Բանաձոր, Ծամծոր, Ցոր, Սարի շեն, Զրաբերդ, Կարմրաքար, Սարալանջ, Պետրոսաշեն, Սպիտակաշեն, Քարագլուխ, Քարինգ և Խանձաձոր գյուղերի բնակիչները ու տեղափոխվում Գորիս, շրջանի Տեղ, Հարթաշեն, Խնձորեսկ, Կոռնիձոր, Քարաշեն և մյուս գյուղերը: «Դիզակի» վարչության անդամները Էդիկ Բաբայանի գլխավորությամբ անմիջապես մեկնում են Գորիսի շրջան և տեղի ղեկավարների օգնությամբ տանելի պայմաններ ստեղծում բռնագաղթվածների համար: Վերջիններիս մոտ է մեկնում նաև ալեհեր գեներալը՝ տանելով 25 հազար ռուբլի ֆինանսական օգնություն, սննդամթերք, հագուստեղեն և այլ ապրանքներ:

1991 թվականի ամառվանից «Դիզակ» հայրենակցականի հիմնական խնդիր էր՝ օգնել բռնագաղթվածներին և շրջանի ինքնապաշտպանական ջոկատների համար ձեռք բերել պաշտպանական միջոցներ: Այդ օրերին Էդիկ Բաբայանը քուն ու հանգիստ չուներ: Նա օր ու գիշեր իր ընկերների հետ միասին քրտնաթոր մեկ ուղղաթիռ էին բարձում, մեկ ավտոմոբիլ, մեկ Գորիսի շրջան մեկնում, կամ էլ Գյումրի՝ վառելանյութ և զենք ձեռք բերելու համար: Էդիկը 1991-ի հուլիսի 25-ին անձամբ Արցախ է ուղեկցվում հադրութցիներից կազմակերպված ինքնապաշտպանության առաջին ջոկատը: Սրտառուչ էր նրա հանդիպումը գլխավոր հրամանատար **Արկադի Իվանի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս)** հետ, որը մինչ այդ ղեկավարել էր Տողի հերոսական պաշտպանությունը և հիացած էր հադրութցիների խիզախությամբ: Մի անգամ էլ Հադրութի պաշտպանության հրամանատար Էդիկ Աբրահամյանը խնդրում է Բաբայանին Հադրութի ինքնապաշտպանական ջոկատների համար ձեռք բերել «Ալազան» տեսակի հրազեն, արկեր և տարբեր տեսակի փամփուշտներ:

«Հասնելով Երևան,— ընթերցում ենք Բաբայանի վերոհիշյալ զեկուցագրում,— անմիջապես մեկնեցի հանրապետության տարածքում տեղավորված մի քանի զորամասեր: Այդ օրը հաջողվեց ձեռք բերել երկու «Ալազան»: Ուրախությունից արտասվում էի: Օդանավակայանում իմացա, որ վիճակն առանձնապես ծանրացել է Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու շրջաններում, Հայաստանի սահմանամերձ գյուղերում: Պարզ էր. ուղղաթիռներն

[1] «Դիզակ» հ/բ միության մերաբերյալ ստորև բերված նյութերը հիմնականում քաղված են միության նախագահ Էդիկ Բաբայանի 1993 թ. նոյեմբերին կազմած զեկուցագրից:



Էդիկ Բաբայան

աշխատում էին այդ ուղղություններով: «Արցախ» հայրենակցականի շրջանային համայնքների նախագահներս լցվել էինք Սերգեյ Վանցյանի առանձնասենյակը և ուղղաթիռ էինք խնդրում: Այդ օրերին օդանավակայանի տարածքում գտնվող «Արցախ» հայրենակցականի պահեստում «Դիզակը» կուտակել էր հարյուրավոր տոննաների հասնող պաշտպանական միջոցներ, սննդամթերք, վառելանյութ, հաց և այլուր: Եվ երբ այդ օրերին մեզ համար աստված դարձած Վանցյանից ուղղաթիռ «պոկեցինք» ու Լաչինի վրայով Հադրութ էինք թռչում, մի քանի անգամ համազարկ լսեցինք:

Բարեբախտաբար ուղղաթիռը հաջողությամբ վայրէջք կատարեց Հադրութում: Թե՛ հրամանատարությունը և թե՛ Հադրութի բնակչությունը մեզ դիմավորեցին ուրախության արտասուքներն աչքերում: Վերադառնալուց առաջ ինքնապաշտպանության հրամանատարը խնդրեց ինչքան հնարավոր է «Ալազանի» շատ արկեր ու փամփուշտ ուղարկել: Երևանում, Չարենցավանում և Ուջան գյուղում ընդառաջեցին մեր խնդրանքին... Ուջանցի բժիշկ **Հարություն Հարությունյանը**, մի խիզախ ֆիդայի, որն ամբողջովին իրեն նվիրել է Արցախի ազատագրական պայքարին և այդ պայքարում կորցրել իր առողջությունը, մի գիշերվա ընթացքում լիցքավորում

է «Ալազանի» 200 արկ և վաղ առավոտյան մեզ ճանապարհում Հադրութ...»

«Դիզակ» հայրենակցականն այսօր նրա նախագահ, անսպառ եռանդի տեր Էդիկ Բաբայանի շնորհիվ ամենագործունյա շրջանային կազմակերպությունն է: Նա սիստեմատիկ օգնություն է ցույց տալիս վիրավոր և հաշմանդամ ազատամարտիկներին, զոհվածների ընտանիքներին, կարիքավորներին, «Դիզակի» ակտիվ օգնությամբ Երևանի և Հայաստանի այլ բնակավայրերում կազմակերպվում են մի շարք կոոպերատկիվներ, որտեղ աշխատանքի են տեղավորվում Հադրութի շրջանից փախստականներն ու բռնագաղթվածները: Ջրակուսցի Իվան Իշխանյանը կազմակերպում է «Դիզակ» կոոպերատիվը, որտեղ աշխատանքի են տեղավորվում 120 փախստականներ: Կոոպերատիվն արտադրում էր ժողովրդական սպառման ապրանքներ: Այն տասնյակ տոննաներով վառելանյութ և այլ ապրանքներ է ուղարկել Հադրութի շրջան: Միայն 1993 թվականի սկզբին կոոպերատիվը մոտ մեկ միլիոն ռուբլու օգնություն է ցույց տվել Արցախին [1]: «Դիզակ» հ/բ միության աջակցությամբ ներկայումս Հադրութում կառուցվում է շրջանից զոհված ազատամարտիկների հուշահամալիր:

«ՎԱՐԱՆԴԱ» հայրենակցական ընկերությունը կազմակերպվել է 1991 թվականի նոյեմբերին [2], որի նախագահ է ընտրվել տողերիս հեղինակը: Միության ստեղծման և նրա աշխատանքների կազմակերպման գործում մեծ օգնություն են ցույց տվել ԼՂԻՄ մարզային խորհրդի նախկին նախագահ Սեմյոն Բաբայանը և ՀՀ գունավոր մետալուրգիայի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Սահակ Արզումանյանը: «Վարանդայի» մեջ մտնում են Մարտունու շրջանի գյուղական շրջանի 28 համայնքներ՝, որոնց մեջ ընդգրկված են 1534 ընտանիք: «Վարանդայի» գործունեությանն ակտիվորեն նպաստել են պոլիտեխնիկական ինստիտուտի նախկին պրոռեկտոր, պրոֆեսոր Ս.Սուլեյմանյանը, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի դոցենտներ Ֆ.Պողոսյանը և Հ.Հարությունյանը, Երևանի 135-րդ դպրոցի տնօրեն Յա.Դադասյանը, «Արցախ» ֆիրմային խանութի տնօրեն

---

[1] *«Ջով Արցախա»*, մարտ 1993, հ.1:

[2] *«Վարանդա»* հայրենակցականի մասին նյութերը քաղված են ընկերության ընթացիկ արխիվից:

Ս.Սարգսյանը, ՀՀ առևտրի նախարարության «Հայկուլտառ» մեծածախ առևտրական բազայի տնօրեն Ս.Ավանեսյանը, ասպիրանտ Ա.Դավթյանը, ինժեներներ Կ.Ադամյանը, Հ.Բաբայանը, Է.Վանյանը, փոխգնդապետ Է.Ստեփանյանը, իրավաբան Հ.Խաչատրյանը, խնայդրամարկղների հանրապետական վարչության բաժնի վարիչ Ս.Մուքանյանը և ուրիշներ:

«Վարանդա» հայրենակցականի մեջ մտնող համայնքներից ամենամեծը Ճարտարի համայնքն է, որի մեջ ընդգրկված են 200 ընտանիք: Համայնքի նախագահն էր Ֆրունզե Պողոսյանը: Միայն 1992 թվականին Ճարտարի համայնքը 270 հազար ռուբլու արժողությամբ ապրանքներ է ուղարկել Ճարտար:

Սոսի համայնքը, որը գլխավորում է Յաշար Դադասյանը, հայրենի գյուղի կոլտնտեսությանն է տրամադրել 90810ռուբլի, իսկ Ամարասի ձորակի պաշտպանության համար Սոսի և Մաճկալաշենի պաշտպանական ջոկատներին է ուղարկել մեծ քանակությամբ զենք, սննդամթերք, վառելանյութ և այլն: Գիշու (նախագահ՝ Համլետ Բաբայան), Սպիտակաշենի (նախագահ՝ Վալերիկ Դիլանյան), Հաղորտու (նախագահ՝ Գևորգ Առուշանյան) և այլ համայնքներ տասնյակ տոննաներով վառելանյութ, սննդամթերք ու պաշտպանության միջոցներ են ձեռք բերել և ուղարկել Մարտունու շրջան: Այդ ծանր օրերին անդուլ աշխատում էին նաև Աշանի, Շեխերի, Մաճկալաշենի, Հերհերի, Քերթի, Ծովատեղի, Խնուշինակի, Բերդաշենի, Նոր շենի, Ննգու, Մուշկապատի, Կարմիր շուկայի, Թաղավարդի և մյուս համայնքները: «Ամարաս» տպարանի տնօրեն Արկադի Ասրյանը, Հակոբ Մեղապարտի անվան տպագրատան արտադրական բաժնի նախկին պետ Մարա Բարսեղյանը հնարավոր բոլոր միջոցներով օգնում էին «Վարանդա» հայրենակցական ընկերությանը և բավականին թվով գրականություն ու փաստաթղթեր տրամադրում Մարտունու շրջան ուղարկելու համար:

«Վարանդա» հայրենակցական ընկերությունը սերտ կապի մեջ էր Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի ղեկավարության, առանձնապես շրջանի պաշտպանական ջոկատների ընդհանուր հրամանատար Մոնթե Մելքոնյանի հետ: Ընկերության արխիվում պահվում են Մոնթեի բազմաթիվ գրություններ, որոնցով ընկերությունից խնդրում էր զենք, զինամթերք և վառելանյութ ուղարկել: Ընկերությունը միայն 1992 թվականին Մարտունու շրջան է ուղարկել չորս միլիոն ռուբլու արժողությամբ պաշտպանական

միջոցներ: Երևանաբնակ նախկին մարտունեցիներից կազմակերպվել է 15 ջոկատ, որոնց մի մասն ակտիվորեն մասնակցել է շրջանի պաշտպանական մարտերին: Ընկերությանը ֆինանսական միջոցներ են տրամադրել Միջին Ասիայում, Հյուսիսային Կովկասում, Մոսկվայում և այլուր բնակվող նախկին մարտունեցիները: Երևանում գտնվող Մարտունու շրջանի ներկայացուցիչներ Գաստելո Մկրտչյանը, Մանվել Սարգսյանը, Նիկոլայ Ղարիբյանը, Սեմյոն բաբայանը և Վլադիմիր Պողոսյանը ընկերության աջակցությամբ հայթայթում էին պաշտպանության միջոցներ ու անհրաժեշտ այլ ապրանքներ և ուղարկում շրջան: Ընկերությանը շեֆություն էին անում Հրազդանի, Կամոյի, Գյումրիի շրջանները և Երևանի մի քանի հիմնարկ-ձեռնարկություններ: «Վարանդայի» նախագահության անդամների ակտիվ մասնակցությամբ և Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ուսանող Աղասի Հովհաննիսյանի նախաձեռնությամբ Թալինի շրջանում հանգանակվել է հինգ տոննա հացահատիկ և ուղարկվել Մարտունու պաշտպանական ջոկատին, իսկ Երևանի ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանող Ռաֆիկ Նահապետյանի նախաձեռնությամբ Կոտայքի շրջանում հանգանակվում և «Վարանդա» հայրենակցականի օգնությամբ Մարտունու շրջան ուղարկվում 10 հազար դասագիրք, գրենական պիտույքներ, հագուստեղեն, դեղորայք և այլն: Գորիսի տրիկոտաժի արտադրական միավորումը ընկերությանը տրամադրում է ավելի քան 60 հազար ռուբլու մանկական հագուստեղեն՝ Մարտունու շրջան ուղարկելու համար: Նախկին մարտունեցիներ Ռազմիկ Դանիելյանը և Լևոն Մանգասարյանը զբաղվում էին պաշտպանության միջոցներ ձեռք բերելու գործով: Այդ նրանց համարձակ աշխատանքի շնորհիվ է, որ «Վարանդա» հայրենակցականը կարողացավ երկու տասնյակի հասնող ուղղաթիռներ, պաշտպանական միջոցներով բեռնված, ուղարկել Մարտունու շրջան: Հաճախ այդ ուղղաթիռներին ուղեկցում էր Ռազմիկ Դանիելյանը: Եվ եթե Մարտունին մնաց անառիկ և ոչ մի մետր հող չզիջեց թշնամուն, ապա դրանում իր համեստ ներդրումն ունի նաև «Վարանդա» հայրենակցական միությունը: Վերջինս բազմիցս է արժանացել լեգենդար հերոս Մոնթե Մելքոնյանի շնորհակալությանը: Եվ պատահական չէ, որ Մոնթեն, ամեն անգամ լինելով Երևանում, անպայման այցելում էր «Վարանդա» հայրենակցական և ղեկավարության հետ քննարկում Մարտունու շրջանի պաշտպանությանը այս կամ այն օգնությունը կազմակերպելու հարցը:

«ԽԱՉԵՆ» հայրենակցական ընկերությունը ձևավորվել է 1992 թվականի սկզբին, որի մեջ ընդգրկված են 22 համայնքներ[1]: Ընկերությունը ղեկավարում է **Ժորա Օհանջանյանը**, որը նախկինում աշխատել է որպես Երևանի Շահումյանի շրջանի շրջխորհրդի նախագահի տեղակալ: «Խաչեն» ընկերության հիմնական խնդիրներից էին ինքնապաշտպանական ջոկատների կազմակերպումը, Ասկերանի շրջանի երեխաներին Հայաստան տեղափոխելն ու նրանց խնամքի կազմակերպումը, փախստականներին և բռնագաղթվածներին տեղավորելն ու նրանց օգնության կազմակերպումը և այլն: Ընկերության նախաձեռնությամբ կազմակերպված 12 ինքնապաշտպանական ջոկատներում ընդգրկվում են Ասկերանի շրջանի 250 նախկին բնակիչներ:

Առանձնապես աչքի են ընկնում Շոշի , Ավետարանոցի, Դահրավի, Նորագյուղի, Ասկերանի, Նախիջևանիկի, Փիրջամալի, Այգեստանի, Սղնախի, Ոսկեվազի, Մեհթիշենի և այլ համայնքներ: Ընկերության նախագահության անդամներ Աբիգ Սամվելյանը,[2] Արկադի Հարությունյանը, Սամվել Գաբրիելյանը, Անուշավան Աղաջանյանը և ուրիշներ բարեխղճորեն կատարում էին միության հանձնարարությունները: Ընկերության նախագահ Ժորա Օհանջանյանի նախաձեռնությամբ ստեղծվում է **«Շիրակ-Արցախ»** հայրենակցական- բարեգործական ընկերությունը, որի ջանքերով համակարգվում են Գյումրի քաղաքի և Ասկերանի շրջանի համատեղ աշխատանքները: Այդ փոխհամագործակցության ծրագրի համաձայն աշխատանքներ են տարվում Ասկերանի շրջանի ավերված բնակավայրերը վերականգնելու և վերաբնակեցնելու ուղղությամբ: 177 գյումրեցիներ ցանկություն են հայտնում մշտական բնակության տեղափոխվել Ասկերանի շրջան և Շուշի քաղաք: Վերաբնակվողների հասմար հատկացված բնակարանները նորոգելու նպատակով կազմակերպվում է շինարարական տրեստ, որտեղ աշխատանքի են տեղավորվում 82 գյումրեցիներ:

---

[1] *«Խաչեն»* հայրենակցական ընկերության մասին նյութերը հիմնականում վերցված են ընկերության 1993 թ. հուլիսի 3-ին տեղի ունեցած համաժողովի արձանագրությունից: Տե՛ս ՄԸԱ, արձանագրություն, հ. 9:

[2] Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիայի դոցենտ Աբիգ Հովհաննեսի Սամվելյանը ծնվել է 1938 թ. Ասկերանի շրջանի Դարհավ գյուղում:



«**Շահումյան-Գետաշեն**» հայրենակցական-բարեգործական միությունը ձևավորվել է 1988թ. փետրվարին, արցախյան շարժման առաջին օրերին, երևանաբնակ շահումյանցի մի խումբ մտավորականների (Դերենիկ Պետրոսյան, Հենրիկ Սեփյան, Կիմ Ղահրամանյան, Սուրիկ Եսայան, Հովիկ Պետրոսյան, Լյուդվիգ Ղահրամանյան, Աշոտ Պռազյան, Դորվարդ Աղաջանյան, Է.Մելքոնյան) կողմից ստեղծված «Շահումյան» կոմիտեի հիման վրա: Նորաստեղծ կոմիտեն ղեկավարում է Արցախի ազատագրական պայքարին մինչև օրս անմնացորդ նվիրված Դերենիկ Պետրոսյանը:

Դերենիկ Պետրոսյանի որդին՝ Արծվիկ Պետրոսյանը զոհվել է 1992 թվականի օգոստոսի 23-ին Լաչինի միջանցքը պաշտպանելու համար մղված մարտերում: Զորի Բալայանի «Դժոխք և դրախտ» գրքում կարդում ենք Դերենիկ Պետրոսյանի արտահայտած հետևյալ միտքը, որն ասես ընդհանրացնում է յուրաքանչյուր արցախցու զգացումը. **«Մենք կարող ենք ապրել առանց որդու: Ողբում ենք, բայց ապրում ենք: Առանց եղբոր էլ կարող ենք ապրել: Բայց առանց հայրենիքի՝ չենք կարող: Ու ես կարծում եմ, հոգիս հանգիստ կգտնի միայն այն ժամանակ, երբ ազատագրենք Շահումյանը»:** [1]

«**Շահումյան**» կոմիտեի հետ սերտ համագործակցում է Գետաշենի մի խումբ հայրենասեր գործիչների (Բենիկ Սիսյան, Վասիլ Նալբանդյան, Իսակ Կարախանյան, Գագիկ Աթանեսյան, Սարմեն Պողոսյան) հիմնադրած «**Գետաշեն**» միությունը:

1988թ. նոյեմբերի 20-ին, «Արցախ» հայրենակցականը ստեղծվելուց հետո գումարվում է շահումյանցիների և գետաշենցիների ներկայացուցիչների համաժողով, որը որոշում է ստեղծել հայրենակցական-բարեգործական միություն: Համաժողովին մասնակցում էին նաև շրջանից հրավիրված Շահեն Մեղրյանն ու Վլադիմիր Աղաջանյանը: Սակայն որոշ պատճառներով միության ստեղծումը հետաձգվում է:

«Շահումյան» կոմիտեն և «Գետաշեն» միությունը (Նախ.՝ Բ.Սիսյան) երկու տարի կազմակերպչական, գաղափարա-քաղաքական, քարոզչական լայն աշխատանք են ծավալում շահումյանցիների և գետաշենցիների շրջանում՝ նախապատրաստելով նրանց գալիք ազատագրական պայքարին:

---

[1] *Զորի Բալայան*, «Դժոխք և դրախտ», Երևան, 1995, էջ 357:

1990թ. մայիսի 3-ին Հայաստանի նախարարների Խորհուրդը գրանցում է «Շահումյան-Գետաշեն» հայրենակցական-բարեգործական միությունը: Միության նախագահ է ընտրվում աշխատանքի և պատերազմի վետերան **Մովսես Ղազարյանը**, որն աշխատում է մինչև 1991թ. սեպտեմբերը: 1991թ. մինչև 1994թ. դեկտեմբերը միության նախագահն էր Դերենիկ Պետրոսյանը, 1994թ. մինչև օրս՝ Շահեն Հովասափյանը:

Նորաստեղծ միության խնդիրը Արցախի հյուսիսային դարպասները հանդիսացող Գետաշենի ենթաշրջանին և Շահումյանի շրջանին բազմակողմանի օգնության կազմակերպումն էր: Աշխատանքները տարվում էին հիմնականում երեք ուղղությամբ՝ տնտեսական, գաղափարա-քաղաքական և ռազմական:

«Շահումյան-Գետաշեն» միությունը ֆինանսական և տնտեսական մեծ օգնություն է ցույց տվել շրջափակման մեջ գտնվող լեռնաշխարհին, գաղափարա-քաղաքական մեծ աշխատանք կատարել տարածաշրջանի ժողովրդի քաղաքական ինքնագիտակցության բարձրացման, Արցախի ազատագրական պայքարին սատար կանգնելու, Արցախին միավորվելու, ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ: Միության անմիջական ղեկավարությամբ հայաստանաբնակ շահումյանցիներից և գետաշենցիներից կազմակերպվել են Վերինշենի, Բուզլուխի, Գետաշենի, Գյուլիստանի, Մանասիշենի, Էրքեջի և «Զեյթուն» ինքնապաշտպանության ջոկատները: Միության անդամները Հայաստանի իշխանության գերագույն մարմիններում և Մոսկվայի ատյաններում բազմիցս հանդես են եկել Շահումյանի և Գետաշենի դատի պաշտպանությամբ (Հովիկ Պետրոսյան, Առստամ Ղահրամանյան, Բենիկ Սիսյան, Վասիլ Նալբանդյան), դրամական օգնություն են ցույց տրվել զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, «Մռավի ղողանջներ» թերթում, հանրապետական և միութենական մամուլում, լրատվական միջոցներով բարձրացրել են տարածաշրջանին հուզող բազմաթիվ հարցեր:

Թշնամու դեմ մղված մարտերում աչքի են ընկել միության անդամներ Խաչիկ Սահակյանը, Ռուսլան Շելլունցը, Մարտին Հովհաննիսյանը, Լյովա Լալայանը,Կոլյա Առուստամյանը, Աշոտ Գզիրյանը, Սուրիկ Հայրյանը և շուրիշներ: Իսկ Յաշա Շելլունցը, Անդրանիկ Հարությունյանը, Սերգեյ Հակոբյանը, Վահագն Տոնյանը Հայկ Վարդանյանը, Անատոլի Մակյանը, Շուրիկ Խաչատրյանը

Վլադիկ Աղամալյանը, Սարմեն Պողոսյանը, Սարո Մակյանը, Ռաշիդ Մնացականյանը, Արկադյա Սեյրանյանը, Օլեգ Մակյանը, Ռոմա Կոսյանը հերոսաբար զոհվել են հանուն հայրենիքի:

Եթե այդ հերոս լեռնաշխարհը 3-4 տարի դիմացել է դաժան շրջափակմանը, հաջողությամբ դիմակայել է թշնամիներին, դարձել Արցախի հյուսիսային անառիկ դարպասը, ապա դրանում իր ներդրումն ունի նաև «Շահումյան-Գետաշեն» հայրենակցական-բարեգործական միությունը, որի գործունեությունը նոր թափ ու ծավալ ստացավ, երբ 1991-1992թթ. խորհրդային զինված ուժերի ու ադրբեջանական խուժանի ուժերով տեղահանվեց Գետաշենի ենթաշրջանի և Շահումյանի շրջանի բնակչությունը: Հյուսիսային Արցախը՝ (Գետաշենն ու Շահումյանը) իր վրա վերցնելով առաջին հարվածները և պատասխան գործողություններ ձեռնարկելով, կարևոր դեր խաղաց Լեռնային Ղարաբաղի պաշտպանության գործում: Ամբողջ այդ տարածքը հայաթափվեց և ավելի քան 20 հազար գետաշենցիներ սփռվեցին Արցախից մինչև Ռուսաստանի խորքերը: Նրանց Երևանում ընդունելու, տեղավորելու, ամենաանհրաժեշտ սննդամթերքներով, հագուստներով և ապրելու միջոցներով ապահովելու ծանր աշխատանքներն իր վրա վերցրեց «Շահումյան-Գետաշեն» հայրենակցականը:

Միությունը ներկայումս պայքարում է ազատագրել հայրենի երկրամասը և տուն վերադարձնել բոլոր շահումյանցիներին և գետաշենցիներին: 1996 թվականի մարտի մեկին Երևանում տեղի ունեցած շահումյան-գետաշենցիների համաժողովը այդ մասին որոշում ընդունելով, կոչ արեց բոլոր նրանց, ում համար թանկ է ազատությունը, սատար կանգնել Արցախ-Շահումյանի արդար դատին: Մենք հավատում ենք նրանց վճռականությանը:

«**Բերդաձոր**» միությունը (նախագահ՝ Լ. Հայրապետյան) մեծ օգնություն ցույց տվեց Բերդաձորի ազատագրման, համագյուղացիներին այնտեղ վերադարձնելու, ավերված բնակավայրերը վերականգնելու և գյուղերը շենացնելու գործում: Դրանում իր ծանրակշիռ ներդրումն ունի առանձնապես «Արցախ» հայրենակցական միությունը: «Բերդաձոր» հայրենակցականը վերջին տարիներին Բերդաձոր է ուղարկել մեծ քանակությամբ սերմացու, շինանյութեր, սննդամթերք, հագուստեղեն և այլ ապրանքներ: Միությունը սիստեմատիկ օգնում է նաև վիրավոր ու զոհված ազատամարտիկների ընտանիքներին, Բաքվի բանտում տառապող Գագիկ Հա-

ությունյանի, Գառնիկ Առուստամյանի և Արթուր Մանգասարյանի ընտանիքներին:

«**ՔԱՐԻՆ ՏԱԿ**» համայնքը, որը գլխավորում է **Միշա Պետրոսյանը**, «Արցախ» հայրենակցական միության կառույցի մեջ է մտնում որպես առանձին միավոր: Արցախյան պայքարի հենց առաջին օրերին Պետրոսյանը, արձագանքելով համագյուղացիների կոչին, ընտանիքով մեկնում է հայրենի գյուղ և զգալի աշխատանք կատարում համագյուղացիներին օգնելու ուղղությամբ: Պետրոսյանի նախաձեռնությամբ և «Արցախ» հայրենակցականի օգնությամբ Լեռնային Ղարաբաղի ջրաղացներից առաջինը վերականգնվում է Քարին տակում: Այստեղ կառուցվում է նաև հացաթխման արտադրամաս, օգնություն է կազմակերպվում նորապսակներին և նորածին երեխաներին, բավականին զենք և զինամթերք է տեղափոխվում գյուղը Շուշիի անընդհատ հարձակումներից պաշտպանելու համար:Արցախի այդ Վաթերլոյի պաշտպանության և քարինտակցիների հերոսական պայքարի մասին դեռ կգրվի... Քարինտակցիներին սատար են կանգնել նաև Երևանի նախկին Էրեբունի և Մյասնիկյանի շրջանները, որոնք այնտեղ են ուղարկել 100 տոննա ցեմենտ, հինգ ավտոմեքենա շիֆեր, այլ շինանյութեր: «Քարին տակ» համայնքը ավելի քան 50 հազար ռուբլի է տրամադրել միայն զոհված ազատամարտիկների ընտանիքներին:

«ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ»

Շրջափակման մեջ հայտնված Արցախը Հայաստանի հետ կապված էր միայն օդային ճանապարհով: Դա «**կյանքի ճանապարհն**» էր, ինչպես այն իրավամբ կոչում էին մարդիկ: Արցախի հետ կապի հանգույցը «Էրեբունի» օդանավակայանն էր, առանց որի հնարավոր չէր Արցախին «թթվածին» մատակարարել: Օր էր լինում, որ քաջարի օդաչուները մինչև 20-25 թռիչք էին կատարում Երևան-Ստեփանակերտ-Երևան չվերթով: Ստեփանակերտի օդանավակայանը հաճախ չէր հասցնում ընդունել իրար ետևից վայրէջք կատարող «Յակ-40» ինքնաթիռներին: Իսկ ուղղաթիռները որտեղ ասես, որ վայէջք չէին կատարում՝ Քոլատակ, Հաթերք, Այգեստան, Տող, Կարմիր շուկա, Բերդաձոր, Ներքին Հոռաթաղ,Գյուլիստան, Գիշի, Ճարտար...

Տագնապալի այդ օրերին «Էրեբունի» օդանավակայանի ղեկավարության և պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի առաջարկությամբ արցախցիներին հայրենի բնակավայրեր վերադարձնելու աշխատանքների կազմակերպման պատասխանատվությունն իր վրա է վերցնում «Արցախ» հայրենակցականը: Միության նախագահությունը, մանավանդ նախագահ՝ Յուրի Հովհաննիսյանը, շատ գործնական հարցեր լուծում էին հենց օդանավակայանում: Վարչության այդամներ Վիկտոր Բեգլարյանը, Աբիգ Սամվելյանը, Էդիկ Բաբայանը, Սլավիկ Ղահրամանյանը, Մելս Հայրումյանը, Արզիկ Սուվարյանը, Գրիգոր Խաչատրյանը, Արտիկ Մաղաքելյանը և ուրիշներ հերթապահում էին օր ու գիշեր, օգնում էին լուծել ծառացած հարցերը, հոգ տանում երեխաների, ծերերի, հիվանդների, հաշմանդամների մասին, բեռնում և բեռնաթափում էին Արցախ մեկնող ու վերադարձող ինքնաթիռներն ու ուղղաթիռները:

Օդանավակայանում

Դարեր կանցնեն, բայց երբեք չի մոռացվի և հպարտությամբ կհիշվի Երևանի «Էրեբունի» օդանավակայանի, ինչպես և Գորիսի ու Սիսիանի օդանավակայանների աշխատողների հերոսական գործը: Սննդամթերք և շպաշտպանության միջոցներ Արցախ փոխադրելու հիմնական ծախսերը հոգում էին «Արցախ» հայրենակցականը, «Գթություն» բարեգործական ընկերությունը, մի շարք նախարարություններ, կոոպերատիվներ, հայրենակցական կազ-

մակերպություններ և անհատներ: Օդանավակայանի ղեկավարությունը ի դեմս Քաջիկ Մնացականյանի, Սերգեյ Վանցյանի և Էդիկ Բաղալյանի, հաղթահարում էին ամեն մի դժվարություն և անհնարինը հնարավոր դարձնում, միայն թե Արցախի հետ օդային կապը ոչ մի րոպե չընդհատվի: Խոջալուի, Մալիբեյլուի, Ջանհասանի, Քյոսալարի և Ստեփանակերտին մոտիկ մյուս կրակակետերը ոչնչացնելուց հետո, բնակլիմայական դժվարին պայմաններում, 1992 թ. մարտին վերականգնվեց «ՅԱԿ-40» ինքնաթիռների թռիչքը Ստեփանակերտ: Օդանավակայանը ազերիների օմոնականները զավթել էին 1990 թվականի հոկտեմբերի 17-ին: Դեպի «ավետյաց երկիր» առաջին թռիչքը կատարեց փորձառու օդաչու Վալենտին Նազարյանը, որն արժանացավ «Արցախ» հայրենակցականի հուշանվերին: Յուրաքանչյուր արցախցու համար թանկ են Ստեփան Օհանյանի, Ստեփան Նիկողոսյանի, Ռաֆիկ Մեհրաբյանի, Գեղամ Գաբրիելյանի, Նորիկ Վարդանյանի, Սամվել Մանվելյանի, Զորիկ Պապիկյանի, Պապիկ Ալավերդյանի, Վարոս Վարոսյանի, Վոլոդյա Խաչատրյանի անունները: Եղբայր օդաչուներ, ծննդով Քարին տակ գյուղից, Մուրադ և Վարազդատ Բալասանյաններն, այդ օրերին սխրանքներ էին գործում:

Արցախի հետ «կյանքի ճանապարհը» պահպանելու և արցախահայության ազատագրական հերոսամարտին օգնելու սուրբ գործի համար զոհվեցին հերոս օդաչուներ Արարատ Դալլաքյանը, Ալեքսանդր Հովհաննիսյանը, Գևորգ Դավթյանը («ՅԱԿ-40», 1990թ. օգոստոսի 1-ին), Մուշեղ Սմբատյանը, Կարեն Մարգարյանը, Գեորգի Մինասյանը («Մի-8», 1991թ. հունիսի 14-ին), Հրայր Կարապետյանը, Էդվարդ Խաչիկյանը, Գառնիկ Դանիելյանը («Մի-8», 1992թ. սեպտեմբերի 29-ին), Զանփոլադ Մուրադյանը, Արամ Գրիգորյանը, Իոսիֆ Միքայելյանը («Մի-8, 1993թ. ապրիլի 18-ին): Ցավով ենք հիշում նաև հայ ժողովրդի (նաև՝ «Արցախ» հայրենակցականի) բարեկամ, ռուս օդաչու, գնդապետ Վալերի Գուլյաևի ողբերգականի մահը, որը տեղի ունեցավ Արցախի տարածքում: Հավերժ փառք նրանց:

ԲՌՆԱԳԱՂԹՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ

1991թվականի գարնանը միանգամից տեղահանվեցին և բռնագաղթվեցին Բերդաձորի ենթաշրջանի և Հադրութի շրջանի

արևմտյան կողմի տասնյակ գյուղերի բնակիչներ: Ծեծված, ջարդված ,թալանված, անարգված ու հուսահատված հարյուրավոր ընտանիքներ բերվեցին Գորիսի սահմանագլուխ: Նրանց օգնություն ցույց տալու և սատար կանգնելու հարցը քննարկվեց «Արցախ» հայրենակցականի նախագահությունում և որոշվեց հնարավորին բոլոր միջոցներով օգնել հայրենակիցներին: Անմիջապես Գորիսի շրջան մեկնեց վարչության անդամներից մի խումբ՝ նախագահ Յուրի Հովհաննիսյանի գլխավորությամբ, որը տեղական իշխանությունների օգնությամբ կազմակերպեց բռնագաղթվածներին ու փախստականներին օգնություն ցույց տալու գործը: Գորիսի շրջանի պատասխանատու ղեկավարներ Արա Դոլունցը, Արմիկ Բակունցը, Սենիկ Հովակիմյանը, «Գթություն» բարեգործականի Գորիսի մասնաճյուղի տնօրեն Սևադան, շրջխորհրդի նախագահ՝ Ռ.Ալեքսանյանը և բազմաթիվ ամեն կերպ օգնում էին «Արցախ» հայրենակցական ներկայացուցիչներին և բռնագաղթվածների համար առանձնացնում սննդամթերք, հագուստեղեն և այլն:

Բռնագաղթվածներին և փախստականներին օգնելու, նրանց տեղավորելու հարցում անգնահատելի գործ կատարեցին Սերգեյ Մելքումյանն ու Էռնեստ Ղևոնդյանը:

Բռնագաղթվածները հիմնականում տեղավորվում են Խնձորեսկ, Կոռնիձոր, Տեղ, Քարաշեն, Հարթաշեն և այլ գյուղերում, որոնց ղեկավարությունը և բնակչությունը ջանում էին նրանց համար ստեղծել տանելի պայմաններ: Նրանց տեղավորում են դպրոցներում, ակումբներում, մշակույթի տներում և անհատական բնակարաններում, շատերին ապահովում են աշխատանքով: Մինչև հայրենի օջախներ վերադառնալը, բռնագաղթվածներն ու փախստականները մնացին «Արցախ» հայրենակցականի՝ փախստականների հարցով պետական վարչության և Գորիսի շրջանի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ֆինանսական միջոցներ է տրամադրում բռնագաղթվածներին և փախստականներին: «Արցախ» հայրենակցականը երախտապարտ է «Վարսենիկ» կոոպերատիվի նախագահ, ծննդով Արցախի Տող գյուղից, Արտյոմ Առաքելյանին, որը կոոպերատիվի խնայած միջոցներից մի քանի հարյուր զույգ կոշիկ և սննդամթերք ուղարկեց փախստականներին և բռնագաղթվածներին: Երևանի կոշիկի 7-րդ ֆաբրիկայի տնօրեն Ժյուլվեռն Հովհաննիսյանը, «Գարուն» կարի արտադրական միավոր-

ման տնօրեն Գոհար Ենոքյանը և ուրիշներ բռնագաղթվածների համար առանձնացնում են կոշիկներ, հագուստեղեն, սննդամթերք և դրամ:

Գետաշենին հաջորդեց Շահումյանի շրջանի և Մարտակերտի շրջանի մի մասի հայաթափումը: Հրեշային ոճրագործություններին զոհ դարձան հարյուրավոր անմեղ բնակիչներ և հողին հավասարվեցին տասնյակ գյուղեր: Միայն Մարաղայից (Մարաղան Մարտակերտի շրջանի Լենինավան ավանի մի թաղամասն է) հիսունից ավելի տարեց մարդիկ և անմեղ երեխաներ ճզմվեցին տանկերի թրթուրների տակ և նույնքան տղամարդիկ, կանայք ու երեխաներ գերեվարվեցին... Այդ օրերին շատերի հետ արիության օրինակ ցուցաբերեցին «Արցախ» հայրենակցականի շատ անդամներ: Վարչության անդամ, Երևանի ժողինստիտուտի դասախոս Վլադիկ Դավթյանը հայրենի Թալիշի պաշտպանության դիրքերը թողեց միայն ծանր վիրավորվելուց հետո: Կարելի է նման օրինակներ շատ բերել:

Մարտակերտի շրջանի ծանր վիճակը և Շահումյանի շրջանի ողբերգությունը շատերին էր անհանգստացնում: Հավատը վաղվա օրվա հանդեպ ոմանք կորցրել էին: Նրանցից շատերը հեռացան Ռուսաստան և այլուր: Շատերն էլ լցվեցին երկաթյա հավատով ու ձեռնամուխ եղան իրենց տարաբախտ հայրենակիցներին ընդունելու, տեղավորելու, նրանց սատար կանգնելու գործին:

Արցախցի բռնագաղթվածներին օգնության ձեռք մեկնեցին ողջ հայ ժողովուրդը, ներառյալ սփյուռքահայությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հարյուրավոր հիմնարկ-ձեռնարկություններ, հասարակական և քաղաքական կազմակերպություններ, բարեգործական և հայրենակցական ընկերություններ: Հայաստանի հարյուրավոր ընտանիքներ բռնագաղթվածներին օգնում էին հագուստներով, սննդամթերքներով, դրամով: Նրանց հյուրընկալում էին իրենց բնակարաններում , կերակրում էին, հագցնում, անհրաժեշտ օգնություն կազմակերպում: Արցախահայությունը երբեք չի մոռանա իր եղբայրների ու հայրենակիցների այդ նվիրական օգնությունը:

«Արցախ» հայրենակցականը դարձել էր բռնագաղթվածների հարազատ օջախը: Այստեղ միշտ մարդաշատ էր: Անհրաժեշտ էր միջոցներ հայթհայթել, օգնել, շատ թե քիչ բարելավել կարիքավորների վիճակը: Երևանի Մոսկովյան փողոցի 11-րդ շենքի դիմացի Ֆլորայի այգին լիքն էր փախստականներով: Օր ու գիշեր նրանց հետ էին «Արցախ» հայրենակցականի վարչության անդամները՝ նախագահ Յուրի Հովհաննիսյանի գլխավորությամբ: Անսալով «Արցախ» հայրենակցականի կոչին, Երևանի հարյուրավոր ընտանիքներից գալիս էին միության գրասենյակ և իրենց օգնությունն ու ծառայությունն առաջարկում: Նրանք իրենց բնակարաններում տեղավորում են երեխաներին, ծերունիներին և հիվանդներին: Այո, այդ շատ դժվարին, ծանր ու օրհասական, միևնույն ժամանակ հերոսական օրերին հաղթահարվեցին բոլոր տեսակի դժվարությունները, և հայ ժողովուրդը փառքով դուրս եկավ: Հազարավոր բռնագաղթվածներ և փախստականներ ժամանակավոր հանգրվանեցին Երևանի, Հրազդանի, Մասիսի, Աշտարակի և այլ վայրերի հանրակացարաններում, հանգստյան տներում, առանձին քաղաքացիների բնակարաններում, հիմնարկ-ձեռնարկությունների ազատ սենյակներում: Այդ օրերին թե՛ «Արցախ» հայրենակցականը և թե՛ Հատուկ ծրագրերի ու Փախստականների պետական վարչությունները, գործելով համատեղ, իրոք, սխրանքի հավասար գործ կատարեցին:

ԼՂՀ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Լեռնային Ղարաբաղի պետության կայացումը ոչ միայն յուրաքանչյուր արցախցու, այլև ամբողջ հայության իղձն ու տենչանքն էր: Ազատ ու անկախ ապրելու իրավունքը պաշտպանելու համար ոտքի ելած արցախահայությունը պայքարի ընթացքում հանգեց տրամաբանական և օրինաչափ հետևության՝ պետականության հիմնմանը, որի հիմքը նախ և առաջ մարտունակ սեփական բանակի ստեղծումն էր:

1991 թվականի սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը լայն արձագանք գտավ աշխարհի ողջ հայության կողմից: Եվ երբ նույն թվականի դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղում պետք է անցկացվեր հանրաքվե, որի մասնակիցները պատասխանելու էին ԼՂՀ պետության հետագա կարգավիճակի վերաբերյալ հարցին՝ «Համաձա՞յն եք, Դուք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն՝ ինքնուրույն որոշելով համագործակցության ձևը ուրիշ պետությունների և ընկերակցությունների հետ»: Այդ նույն օրը

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող արցախցիների համար նույնպես կազմակերպվեց հանրաքվե, որին մասնակցեցին տարբեր պատճառներով Հայաստանում գտնվող Արցախի քաղաքացիները:

ԼՂՀ ղեկավարության խնդրանքով Հայաստանում հանրաքվեի կազմակերպման պատասխանատվությունն իր վրա վերցրեց «Արցախ» հայրենակցականը: Միության նախագահությունում հանգամանորեն քննարկվեց հանրաքվեի կազմակերպման հարցը, մշակվեց կոնկրետ պլան և սկսվեց նրա իրագործումը: Ստեղծվեց հանձնաժողով, որը մի քանի օրվա ընթացքում ՀՀ բոլոր խոշոր բնակավայրերում, համագործակցելով տեղական իշխանությունների և հասարակական կազմակերպությունների հետ, ստեղծեց հանրաքվեն անցկացնող հանձնաժողովներ: Հաշվառվեցին հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր արցախցիները և պատրաստվեցին հանրաքվեի համար անհրաժեշտ փաստաթղթերը: Մշակվեց հանրաքվեն անցկացնելու տակտիկան: Արդյունքում՝ ՀՀ տարածքում գտնվող բոլոր արցախցիները, թվով 4379 հոգի, մասնակցեցին հանրաքվեին և «այո» ասացին: ԼՂՀ 108,495 մարդուց հանրաքվեին մասնակցեցին 91,14 տոկոսը, որից «այո» ասացին 99,89 տոկոսը, դեմ քվեարկեց 21 մարդ:

Անկախության հանրաքվեից շատ չանցած, դեկտեմբերի 28-ին, տեղի ունեցան ԼՂՀ Գերագույն խորհրդի ընտրությունները: Երևանում և ՀՀ մյուս բոլոր խոշոր բնակավայրերում գտնվող ԼՂՀ քաղաքացիների համար ընտրության կազմակերպման գործն իր վրա վերցրեց դարձյալ «Արցախ» հայրենակցականը: Ընտրությունները հաջող կազմակերպելու համար միության բոլոր ակտիվիստները կրկին լծվեցին աշխատանքի: Յու. Հովհաննիսյանը, Հ. Հարությունյանը, Ա. Սամվելյանը, Ս. Ղահրամանյանը, Վ. Բեգլարյանը, Ա. Սուվարյանը, Ռ. Գրիգորյանը, Գ. Խաչատրյանը, Հ. Հակոբյանը և ուրիշներ լինում են բոլոր ընտրական տեղամասերում, օգտագործում լրատվական միջոցները և հնարավորությունները, որպեսզի ընտրություններն անցնեն կազմակերպված: Արդյունքում՝ «Արցախ» հայրենակցականը դարձյալ պատվով դուրս եկավ այդ փորձությունից: Ընտրություններից հետո, 1992 թ. հունվարի 9-ին, «Արցախ» հայրենակցականի պատվիրակությունը՝ Յուրի Հովհաննիսյան, Հրանտ Աբրահամյան, Աբիգ Սամվելյան և Գրիգոր Խաչատրյան Ստեփանակերտում միության անունից

շնորհավորեց ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ ընտրված **Արթուր Մկրտչյանին** և ողջունեց հայրենի Արցախում անկախ պետականության ստեղծման գործընթացը: Պատվիրակությունը միևնույն ժամանակ վստահեցրեց նորընտիր նախագահին, որ «Արցախ» հայրենակցականը բոլոր հնարավոր միջոցներով կօժանդակի ԼՂՀ պետության կայացմանը և կշարունակի էլ ավելի ակտիվորեն նպաստել հանրապետության պաշտպանության ամրապնդմանը: «Արցախ» հայրենակցականը, անկասկած, կատարեց իր խոստումը: Նույն թվականի ապրիլի 13-ին, իր եղերական մահից մեկ օր առաջ Արթուր Մկրտչյանն ինձ ու ՀՀ և ԼՂՀ Գերագույն խորհուրդների պատգամավոր Համլետ Գրիգորյանի հետ զրուցելիս խնդրեց իր շնորհակալությունը հայտնել «Արցախ» հայրենակցականի նախագահությանը և նրա բոլոր անդամներին, որոնք ամեն կերպ օգնում են Արցախի պաշտպանության ամրապնդմանը: «Նաև հաղորդեցեք, — եզրափակեց իր խոսքը, — որ «Արցախ» հայրենակցականի անդամ իմ սիրելի հայրենակիցները միշտ կմնան ինձ հարազատներ... Իմ տան դռները բաց է նրանց բոլորի առաջ»:

«Արցախ» հայրենակցականը ջերմ հարաբերությունների մեջ էր նաև ԼՂՀ առաջին վարչապետ Օլեգ Եսայանի, պետական Պաշտպանության Կոմիտեի նախագահ, իսկ 1994 թվականի դեկտեմբերի 22-ից՝ հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի (1997թ. մարտից՝ ՀՀ վարչապետ), ԼՂՀ վարչապետ Լեոնարդ Պետրոսյանի և մյուս ղեկավարների հետ: Չնայած այդ կապերն այժմ այնքան էլ հաճախակի չեն, բայց և այնպես «Արցախ» հայրենակցականը մնացել և մնում է իր սկզբունքներին ու իր երդմանը հավատարիմ:

ՆԱԵՎ ՈՒԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

«Արցախ» հայրենակցականի չորրորդ համաժողովում լեռնային Ղարաբաղի, Շահումյանի և Գետաշենի իրադարձությունների վերաբերյալ ընդունված հայտարարության մեջ ասված է. «Արցախում իրադրությունը հասցվել է ծայրահեղորեն վտանգավոր աստիճանի: Ադրբեջանական կողմը Արցախի հայ ազգաբնակչության դեմ հետևողականորեն կիրառում է ցեղասպանություն, հայրենական հողից, սեփական օջախից տեղահանելու հակահիրավական, անմարդկային բոլոր միջոցները... Իրեն իրավական պետություն հռչակած երկրում հոսում է անմեղ մարդկանց արյունը, սպանվողՁ

են տարբեր տարիքի ու սեռի քաղաքացիներ, այդ թվում՝ կանայք, երեխաներ, միայն նրա համար, որ հայ են... Կալանավորված են ժողովրդի սերուցքը կազմող շուրջ չորս հարյուր անմեղ անձինք, գյուղերի ղեկավարներ, ժողովրդական պատգամավորներ, բժիշկներ, մտավորականներ, որոնք տեղափոխված են ադրբեջանական բանտերը և ենթարկվում են խոշտանգումների...

Դատարկվում են ստրատեգիական նշանակություն ունեցող հայկական գյուղերը, որն ուղեկցվում է հայ ազգաբնակչության ունեցվածքի հատուկ կազմակերպված կողոպուտով, հայկական գյուղերի ավերումով... Դատարկվել են Գետաշենը, Մարտունաշենը, Բերդաձորը, Հադրութի շրջանի տասնյակի հասնող գյուղեր: Ամենուրեք ոտնահարվում են մարդու իրավունքների և ազգերի ինքորոշման միջազգային նորմերը, կատարվում են չտեսնված բարբարոսություններ»:

Համաժողովը դատապարտում է արցախահայության, հայ ժողովրդի դեմ կիրառվող նոր ցեղասպանությունը, պահանջում անհապաղ դադարեցնել արյունահեղությունը և բռնության ցանկացած դրսևորումը Արցախում, Հայաստանի սահմանամերձ շրջաններում, անհապաղ ազատ արձակել ապօրինաբար ձերբակալվածներին, պահանջում է կենտրոնական իշխանություններից՝ վերականգնել մարզային, շրջանային օրինական իշխանությունները, արդարացիորեն լուծել Արցախի հիմնահարցը: Համաժողովը գտնում է, որ պետք է նպաստել Արցախի ժողովրդագրական տվյալ ժամանակաշրջանի վիճակի պահպանմանը, կոչ է անում միության «բոլոր անդամներին, համայն հայությանը՝ շարունակելու վճռական պայքարը հանուն արցախահայության արդար պայքարի հաղթանակի, ապահովելու համար արցախահայության ազատ, անկախ գոյությունը իր հայրենի բնօրրանում» [1]:

«Արցախ» հայրենակցականի չորրորդ համաժողովից երեք օր անց Երևան քաղաքի պատերին և սյուներին երևաց հետևյալ հայտարարությունը, որը նաև հաղորդվեց ռադիոյով ու հեռուստատեսությամբ. «Քույրե՛ր և եղբայրնե՛ր. Արցախը մահվան օղակի մեջ է: Լրատվական միջոցները լռում են: Արթնացե՛ք: Շաբաթ օրը, 1991թ. հունիսի 8-ին, ժամը 19-ին, Ազատության հրապարակում հանրահավաք է:

Հրավիրված են բոլոր քաղաքական կուսակցությունները»:

---

[1] *«Արցախական չ»*, հունիս 1991, № 9:

Նշված օրը Ազատության հրապարակում հավաքվել էին մի քանի հազար մարդ՝ Արցախի վիճակի մասին «Արցախ» հայրենակցականի ճշմարիտ խոսքը լսելու համար: Հանրահավաքի մասնակիցները, լսելով Սերգեյ Մելքումյանի, Համլետ Հարությունյանի, Յուրի Հովհաննիսյանի, Արզիկ Սուվարյանի, Լենսեր Աղալովյանի և մյուս հռետորների հստակ ու ճշմարիտ խոսքը, ընդունեցին գործնական քայլերի մի ծրագիր, որը աշխատավորներին և հասարակական-քաղաքական կազմակերպություններին կոչ է անում «Բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում, գործարաններում, ուսումնական և այլ հաստատություններում անցկացնել ժողովներ, ընդունել Հայաստանի Գերագույն խորհրդին ուղղված դիմումներ, պահանջելով անհապաղ հրավիրել Գերագույն խորհրդի արտակարգ նիստ՝ Արցախի համահայկական պաշտպանությունը կազմակերպելու համար»: [1]

«Արցախ» հայրենակցականի կողմից հանրահավաքների հրավիրումը, հեռուստա-ռադիոելույթները, հանրապետության բարձրագույն իշխանությունների ղեկավարների հետ միության անդամների հանդիպումները մոբիլիզացնում էր ոչ միայն միության անդամներին, այլև հանրապետության ողջ աշխատավորներին: «Արցախ» հայրենակցականի այդ նախաձեռնությունը պաշտպանություն է գտնում ոչ միայն Հայաստանում և Արցախում, այլև նրա սահմաններից դուրս:

«Արցախ» հայրենակցականի նախաձեռնությամբ 1991 թվականի հունիսի 18-ին Երևանի կամերային թատրոնում կազմակերպվեց ասուլիս, «Մարդու իրավունքների խախտումը Ադրբեջանում» թեմայով, որին մասնակցեցին լրատվության ներկայացուցիչների, քաղաքական գործիչներ, տարբեր մակարդակի ժողովրդական պատգամավորներ, Գետաշենի, Մարտունաշենի և ԼՂՀ արյունոտ իրադարձությունների ականատեսներ և այլն: Հայաստանի քաղաքացիական ասոցիացիայի նախագահ Հմայակ Հովհաննիսյանը, ՀՀ Գերագույն խորհրդի անդամ և հանձնաժողովի նախագահ, ՀՀ ԳԱԱ անդամ, ականավոր գիտնական Ռաֆայել Ղազարյանը, ՍՍՀՄ և ՀՀ խորհրդարանների պատգամավոր Թելման Գդլյանը, Մոսկվայում գործող «ԿՐԻԿ»-ի կոորդինացված խորհրդի անդամ Կիրիլ

---

[1] *«Արցախական չ»*, հունիս 1991, № 9:

Ալեքսևսկին, զինվորական մայրերի կոորդինացիոն խորհրդի անդամ Լյուբով Կուզնեցովան, Հայաստանի «Զինվորի մայր» հասարակական կազմակերպության կոմիտեի նախագահ Գրետա Միրզոյանը, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, Արցախի հանձնաժողովի նախագահ Սեյրան Բաղդասարյանը, իրավաբանների ասոցիացիայի ներկայացուցիչ, մոսկվացի Հենրիխ Ադաբեկովը, բժիշկ Գևորգ Գրիգորյանը, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Զորի Բալայանը, Հայաստանի բարեկամների ընկերության համանախագահ Գալինա Կուլիկովան, ԼՂԻՄ մարդու իրավունքների պաշտպանության անկախ ասոցիացիայի նախագահ Վիտալի Դանիելովը և ուրիշներ իրենց ելույթներում բացահայտեցին ու մերկացրին Ադրբեջանի բարբարոսական գործողությունները հայ ժողովրդի նկատմամբ և պահանջեցին նոր Նյուրնբերգ կազմակերպել Ադրբեջանի իշխանությունների նկատմամբ:

Ասուլիսի մասնակիցների անունից Կ. Ալեքսեևսկին, Վ. Դանիելովը, Լ. Կուզնեցովան, Գ. Աղաբեկովը, Յու. Հովհաննիսյանը և Գ. Կուլիկովան կոչով դիմեցին խորհրդային և համաշխարհային հասարակայնությանը, որում նշվում է, որ «Արցախ» հայրենակցականի կողմից Երևանում կազմակերպված կլոր սեղանի մասնակիցները խորին անհանգստություն և տագնապ են արտահայտում Լեռնային Ղարաբաղում և նրա հարակից Շահումյանի ու Խանլարի շրջաններում վիճակի հետագա բարդացման կապակցությամբ: Ադրբեջանի իշխանությունները բացահայտորեն հրաժարվում են արցախյան հիմնադիրը լուծել ազգային ինքնորոշման և մարդու իրավունքների պաշտպանության հիման վրա:

Կոչի հեղինակները նշում են, որ Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է այնտեղ դարերով ապրող բնիկ հայերի հայրենիքը, որը 1813 թվականի Գյուլիստանի պայմանագրով միացվել է Ռուսաստանի կայսրությունը: Միայն 1917 թվականի հեղափոխությունից հետո բոլշևիկների կուսակցության Անդրերկրկոմի բյուրոյի անօրեն որոշմամբ այն տրվել է Ադրբեջանին: Լեռնային Ղարաբաղի բնակչությունը բազմիցս հարց է բարձրացրել իր ազգային-պետական կարգավիճակը փոխելու մասին, սակայն միշտ էլ հանդիպել է դիմադրության:

Լեռնային Ղարաբաղն այն տարածքն է, որը երկրորդ աշխարհամարտի տարիներին ռազմաճակատ է ուղարկել 45 հազար զինվոր, տվել Խորհրդային Միության 21 հերոս, երեք մարշալ, մեկ

ծովակալ: Քսան հազար ղարաբաղցիներ զոհվել են ֆաշիստական Գերմանիայի դեմ մղված մարտերում:

Կոչի հեղինակներն այնուհետև նշում են, որ շատ վիրավորական է և անբացատրելի, թե ինչու խորհրդային բանակը, որի կմախքը կազմում են ռուս զինվորներն ու սպաները, Լեռնային Ղարաբաղում ադրբեջանական ջարդարար օմոնականների հետ օգտագործվում է ընդդեմ խաղաղ բնակչության, այդ թվում՝ կանանց, երեխաների և ծերերի դեմ միայն նրա համար, որ նրանք ազգությամբ հայ են: Դրա լավագույն օրինակը Գետաշենն է, որտեղ հայերը չցանկացան կռվել ռուս զինվորների դեմ, որոնք ներխուժելով գյուղ, բնակչությանը հանձնեցին օմոնականների հոշոտմանը: Այդ նրանք վառեցին ամբողջ գյուղը, կատարեցին անօրեն խուզարկումներ, գործադրեցին բռնություններ և սումգայիթյան մեթոդներ: Ռուսական և ադրբեջանական պատժիչները, ձեռք բերելով բռնությունների նման փորձ, վեր են ածվում չարիքի, խավարամոլության կրողների և տարածողների: Նրանց արյունոտ գործողություններն ուղղված են նաև ապագա սերնդի և ներկայիս քաղաքականության դեմ [1]:

1991 թվականի ամռանը և աշնանը, երբ արցախահայության ազատագրական պայքարը ազերիների բռնատիրության դեմ ավելի է սաստկանում, «Արցախ» հայրենակցականի բողոքի ձայնը լսվում է աշխարհի բոլոր ծայրամասերում: Իսկ երբ միութենական նոր պայմանագրի շուրջը բանակցություններ էին գնում ԼՂԻՄ խնդրի հետ կապված հարցով, «Արցախ» հայրենակցականը Մոսկվա ուղարկեց մի հուշագիր, որում իր անհամաձայնությունն էր արտահայտում պայմանագրի մի շարք կետերի նկատմամբ, որոնք ուղղակիորեն հակասում են միջազգային-իրավական նորմերին, մարդու իրավունքներին և ժողովուրդների ինքնորոշման իրավունքին:

Ադրբեջանն անամոթաբար քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ իր հանցագործություններին մասնակից է դարձնում Միության բանակը և ներքին գործերի ուժերը: Մյուս հանրապետությունները, Ադրբեջանի հետ ստորագրելով այդ պայմանագիրը, հայտարարում է «Արցախ» հայրենակցականը, փաստորեն մասնակից են դառնում իրենց պատմական հայրենիքում ինքնորոշված Լեռնային Ղարա-

---

[1] *«Զով Արցախ»*, օգոստոս 1991, հ. 4:

բաղի դեմ բռնությունների գործադրմանը: Նման բովանդակությամբ պայմանագիրն անընդունելի է, մանավանդ որ այն դեմ է ժողովրդավարությանը:

Հիշատակության արժանի է մի փաստաթուղթ ևս՝ ուղղված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Նրանում ասված է, որ Խորհրդային Միությունում, որտեղ ապրում են շուրջ մեկ միլիոն ծննդով արցախցիներ, իրենց վրդովմունքն են արտահայտում հայրենի Արցախում օրեցօր բարդացող ռազմաքաղաքական իրավիճակի և տարբեր պատրվակներով Ադրբեջանի կազմակերպած բռնությունների և հայերի ունեցվածքի թալանի, մարդկանց զանգվածաբար ձերբակալությունների և բանտերում նրանց գազանաբար խոշտանգելու կապակցությամբ:

Ադրբեջանը Սումգայիթից հետո բացահայտորեն վեր է ածվել դաժան բռնությունների վարակիչ օջախի: Արցախահայությունը հուսով է, որ ժողովրդական պատգամավորները, որոնց համար թանկ են ժողովրդավարությունն ու արդարությունը, հանդես կգան ցեղասպանության և վանդալիզմի դեմ:

«Արցախ» հայրենակցականի կոչում խոսվում էր նաև այն մասին, որ չորս տարի շրջափակման մեջ գտնվող Ղարաբաղի մասին կենտրոնի տեղեկատվության միջոցները ոչ մի ճշմարիտ խոսք չեն ասում:

«Արցախ» հայրենակցականը կոչ էր անում «Սոյուզ» պատգամավորական խմբին՝ լինել օբյեկտիվ և դատապարտել արցախահայության շահերին հակասող ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը: Ադրբեջանը փորձում է փոխել Ղարաբաղի ժողովրդագրական վիճակը և այն շրջել իր օգտին: Հայրենակցական միությունը պատգամավորներին կոչ է անում հասնել նրան, որպեսզի Արցախը հանդիսանա Միութենական պայմանագրի սուբյեկտ ինքնավար հանրապետության իրավունքով: «Դուք քվեարկելով հօգուտ Ղարաբաղի,— ասված էր կոչի վերջում,— դրանով իսկ քվեարկում եք ձեր սեփական ժողովրդի ապագայի համար, ձեր երեխաների և թոռների համար, ինչպես և Ղարաբաղի երեխաների, որոնք կարիք ունեն բռնություններից զերծ աշխարհի»: [1]

---

[1] Նույն տեղում, օգոստոս 1991, հ. 4:

Ինչպես երևում է բերված փաստաթղթերից, արցախահայությունը, այդ թվում և «Արցախ» հայրենակցականը դեռևս հավատում էին վերադաս իշխանություններին, որոնք այսուհետև արցախահայերի համար այլևս գոյություն չունեն:

1991 թվականի օգոստոսի 14-18-ին Մոսկվայում տեղի էր ունենում «Եվրոպայի միջուկային զինաթափման» միջազգային հասարակական շարժման 10-րդ կոնվենցիան: Դա միջազգային առաջին ֆորումն էր, որին պաշտոնապես մասնակցեց «Արցախ» հայրենակցականը՝ իր առաջ խնդիր դնելով դիմակազերծել Ադրբեջանի տեղեկատվության և քաղաքական գործիչների միջոցով Արցախի ազատագրական պայքարի վերաբերյալ տարածված կեղծարարությունները և միջազգային օրինապահներին, խաղաղասիրական կազմակերպություններին ճշմարտությունն ասել Լեռնային Ղարաբաղի մասին: «Արցախ» հայրենակցականի հետ միասին կոնվենտի աշխատանքներին մասնակցեցին նաև Հայաստանի մի քանի հասարակական կազմակերպություններ՝ «Զինվորի մայր» կազմակերպության կոմիտեն, Հայ կանանց միությունը, բնապահպանության ընկերությունը, «Ավագանին» և այլն: «Արցախ» հայրենակցականը պատրաստեց և կոնվենտի մասնակիցների շրջանում տարածեց տեղեկատվության նյութերի ծրար՝ ռուսերեն, անգլերեն և գերմաներեն լեզուներով, որում մերկացում էր «Օղակ» հանցագործ գործողությունը, մանավանդ խորհրդային զինված ուժերի զորամասերի հանցագործությունները: Կոնվենտի նիստերի դահլիճի նախաշեմում «Արցախ» հայրենակցականի ցուցադրած լուսանկարները ճշմարիտ տեղեկություններ էին հաղորդում Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատագրական պայքարի մասին: Այն ցնցող ազդեցություն թողեց կոնվենտի մասնակիցների վրա: Հենց այդ օրերին, երբ Մոսկվայում տեղի էին ունենում կոնվենտի նիստերը, Արցախի Հաթերքի **«Փառանձեմ»** կանանց գունդը գերի է վերցնում 43 զինվորականների: Սեկցիայի նիստերից անմիջապես հետո Ղարաբաղ ճանապարհվեցին Ռուսաստանի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր **Ս. Շաբադը** և զինվորական մայրերի համառուսական կազմակերպության անդամ **Լունինը:** Խաղաղ բանակցությունների և փոխզիջումների հետևանքով ազատ արձակվեցին գերված զինվորները:

Մեկ ամիս անց, սեպտեմբերի 17-20-ը, Երևանում տեղի ունեցավ «Ազգամիջյան բախումների իրավական, քաղաքական և բա-

ռոյական ասպեկտները» կոնգրեսը, որի հովանավորներից էր «Արցախ» հայրենակցականը: Ղարաբաղյան թեման դարձավ կոնգրեսի կենտրոնական հարցը: Մասնակիցներից Ղարաբաղի հայ բնակչության իրավունքների պաշտպանության անկախ ասոցիացիայի նախագահ **Վ. Դանիլովը**, Ռուսական մշակույթի ընկերությունից **Գ. Կուլիկովը**, Ռուս մտավորականության Ղարաբաղ կոմիտեից («ԿՐԻԿ») **Ա. Նույկինը**, Սանկտ Պետերբուրգի՝ Լեռնային Ղարաբաղին հումանիտար օգնություն կազմակերպող կոմիտեից **Վ. Վոյեվոդսկին** և **Ի. Բաբանովսկին**, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր **Ս. Բելոզերցովը** և ուրիշներ իրենց ելույթներում դիմազերծեցին Ադրբեջանի բռնապետական գործողությունները Լեռնային Ղարաբաղի հայության նկատմամբ: [1]

Հայրենակցականի ամբողջ թափով ծավալած այդ գործունեությունը, որի մեջ լուրջ ներդրում ունի փիլիսոփայության դոկտոր Ա. Մանասյանը, կարևոր դեր խաղաց Ղարաբաղի հիմնահարցի միջազգայնացման և արցախահայության օրինական իրավունքները պաշտպանելու գործում: Իր գոյության վերջին օրերն ապրող խորհրդային բռնապետությունը, սակայն, շարունակում էր Ղարաբաղի մասին կեղծ տեղեկությունների տարածումն ու մարդկանց շփոթության մեջ գցելը: Այսպես, «Արցախ» հայրենակցականի վարչության անդամ Աղավնի Դանիելյանը 1991 թվականի մայիսի 13-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անունով ուղարկում է հեռագիր որում բողոք էր արտահայտված արցախահայության նկատմամբ իրագործվող բռնությունների վերաբերյալ: Հունիսի 24-ին «Արցախ» հայրենակցականը ստանում է 3/15136 համարը կրող պատասխան հեռագիրը պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Բ.Վ. Գրոմովի ստորագրությամբ, ուր ասված էր, թե իբրև ներքին գործերի նախարարությունը ձեռնարկում է Անդրկովկասում վիճակը կայունացնող միջոցառումներ և որ ոչ մի հանգամանք չի խանգարում, որպեսզի գետաշենցիները վերադառնան հայրենի գյուղ... Իրականում այդ նույն օրերին, երբ նախարարի տեղակալը ստորագրում էր այդ հեռագրի տակ, խորհրդային բանակի պաշտպանության ներքո բեռնատար ավտոմեքենաներով Գորբաչովի և Մութալիբովի լուսնկարներով, Գետաշեն բնակության համար

[1] Նույն տեղում, սեպտեմբեր 1991, հ. 7:

փոխադրվում են թուրք-մեսխեթի և ադրբեջանցի հարյուրավոր ընտանիքներ: [1]

ԽՍՀՄ և աշխարհի տարբեր հասցեներով «Արցախ» հայրենակցականի ուղարկած բազմաթիվ դիմումները, հեռագրերը, կոչերը, բաց նամակները, խնդրագրերը նախ և առաջ նպատակ ունեին ղարաբաղյան հիմնախնդիրները հանձնել միջազգային հանրության դատին: «Արցախ» հայրենակցականը միաժամանակ ջանում էր նպաստել Հայաստանում երևացող հակառուսական մշուշը ցրելու գործին: Այդ նպատակով միությունը սերտ կապեր է հաստատում ռուս մտավորականության Ղարաբաղ կոմիտեի և նրա գործիչների հետ և համատեղ ուժերով մերկացնում Ղարաբաղում գտնվող ազգությամբ ռուս չինովնիկների հակաարցախյան գործունեությունը: Մյուս կողմից էլ միությունը պաշտպանում և ամրապնդում է ռուս-հայկական դարավոր բարեկամական հարաբերությունները: 1988-1990 թվականների փոթորկահույզ օրերին, երբ Ազատության հրապարակն ալեկոծում էին հարյուր հազարավոր ցուցարարներ, հարթակից քիչ հակառուսական արտահայտություններ չէին լսվում: Դա տհաճ էր շատերի համար:

Լեռնային Ղարաբաղում վիճակն այլ էր. այնտեղ ավելի սթափ էին գնահատվում հայ-ռուսական հարաբերությունները, որն ամբողջովին պաշտպանում էր «Արցախ» հայրենակցականը: Չէ որ Ռուսաստանի օգնությամբ Արցախն ազատագրվեց պարսկական լծից և մտավ ռուսական կայսրության կազմի մեջ: Այդ կարևոր իրադարձության 180-ամյակի օրերին, 1993 թ., նաև «Արցախ» հայրենակցականն ամեն ինչ արեց Մոսկվայում Հայկական ֆորումի կազմակերպած ղարաբաղյան օրերի հաջող կազմակերպման համար: Բոլոր այն ռուս երիտասարդները, որոնք ցանկանում էին մեկնել Արցախ և պաշտպանել արցախահայության դատը, որպես կանոն, ստանում էին «Արցախ» հայրենակցականի օրհնությունը: Իսկ տունդարձի ճանապարհին նրանք դարձյալ անցնում էին «Արցախ» հայրենակցականի շքամուտքով:

Արցախահայությունն իր հիշողության մեջ և հոգում միշտ վառ է պահում ռուսական բանակի 366-րդ գումարտակի հրամանատար մայոր Եվգենի Նաբոկիխին, որն զգալի դեր խաղաց Ստեփանա-

[1] Նույն տեղում, սեպտեմբեր 1991, հ. 6:

կերտը միշտ կրակի տակ պահող ազերիների կրակակետերը լռեցնելու գործում:

Շատ ռուս ազնիվ տղաներ Արցախում հայ զավակների կողքին մարտնչում էին նենգամիտ սաֆոնովների ու պոլյանիչկոների դեմ և հերոսաբար զոհվում: Հիշենք Դմիտրի Անատոլևիչ Մոտրիչինին, որը Մարտունու շրջանի ճարտար գյուղի պաշտպանության համար մղված մարտերում հերոսաբար զոհվեց 1992 թվականի նոյեմբերի 16-ին: Որդուն փոխարինեց հայրը՝ Անատոլի Դմիտրևիչը, կադրային զինվորական, սուզանավի հրամանատար: Դմիտրիի հետ հերոսաբար զոհվեցին նրա մարտական ընկերներ Իլյան և Միրոն: Արցախցիներն այդ ամենը շատ լավ գիտեն: Պետք էր ռուս մարդուն, ռուս զինվորին ներգրավել Արցախի պաշտպանության գործին, որի համար «Արցախ» հայրենակցականը ոչնչի առաջ կանգ չէր առնում և ոչինչ չէր խնայում:

«Արցախ» հայրենակցականը, ինչպես նշվեց, պայքարում էր ղարաբաղյան հիմնահարցը փոխադրել համաշխարհային հանրության ուշադրության կենտրոն: Գրեթե ամեն օր Մոսկվա, Հյուսիսային Կովկաս, Ուկրաինա, Մերձբալթյան հանապետություններ, Միջին Ասիա, արտասահմանյան երկրներ էին ուղարկվում արցախյան հիմնահարցը շոշափող լրագրեր, թռուցիկներ, գրքեր, բրոշյուրներ և տեղեկատվության այլ միջոցներ: «Ացրախ» հայրենակցականն աշխարհի շատ անկյուններում ծվարած արցախցիներին ուղարկած կոչերում չէր թաքցնում, որ հայրենի Արցախում բացահայտ պատերազմ է, գոյատևան պատերազմ, այնտեղ արյուն է հեղվում, ավերվում են տներ, բնակավայրեր, զոհվում են մարդիկ, կանայք, երեխաներ ու ծերունիներ: Արցախում ահեղ ու դաժան մարտեր են տեղի ունենում, ավելի սարսափելի, քան Աֆղանստանում էր: Ստեփանակերտի և Արցախի մի շարք այլ բնակավայրերի վրա օրական հարյուրավոր, հազարավոր տոննաներով ռումբեր ու արկեր էին թափվում: «Արցախ» հայրենակցականն իր համերկրացիներին պատմում է հայրենի հողում հերոսաբար կռվող արցախցիների, հայրենիքը փրկելու համար նրանց գործադրած աննկուն ջանքերի մասին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի Գործադիր կոմիտեի կոչը՝ «Այսօր խնդիրն այն է, որ զենք կրելու ընդունակ բոլոր արցախցիները պետք է կանգնեն հայրենիքի պաշտպանության դրոշի

ներքո...» [1], «Արցախ», հայրենակցականը սփռում էր ամբողջ արտերկրով մեկ, կից նշելով, որ վերջին չորս տարվա արցախահայության պատմությունը համոզում է, որ արցախցիներն իրենց ազատության համար պայքարում հույսը պետք է դնեն սեփական ուժի և հայ ժողովրդի օգնության վրա: Հայրենիքի համար այս վճռորոշող ժամին պետք է բոլորն արթնանան «անտարբերության նիրհից և հնարավոր բոլոր միջոցներով կանգնեն հայրենիքը փրկողների շարքում»: [2]

«Արցախ» հայրենակցականի կոչերին արձագանքում են ոչ միայն ծննդով արցախցիներ, այլև այլազգի շատ զավակներ: Նրանք հիացած էին արցախցիների, հայ ժողովրդի հերոսական պայքարով: Լիտվայի Կաունաս քաղաքից ժողովրդական պատգամավոր Գրաժինա Պավիլոնեն «Արցախ» հայրենակցականի նախագահ Յուրի Հովհաննիսյանին հղած հեռագրում գրում է. «Շնորհավորում եմ Հայաստանի համարձակ քաղաքացիների պայքարը անկախ հանրապետության համար և հավատում Արցախի շուտափույթ արդարացի հաղթանակին ու խաղաղությանը» [3]:

«Արցախ» հայրենակցականի մի շարք անդամներ, մասնակցելով տարբեր մակարդակների խորհրդակցություններին, ժողովներին, համահավաքներին, ՀՀ ԳԽ Արցախի հարցերի հանձնաժողովի կողմից կազմակերպված խորհրդակցություններին, ներկայացնում են միության տեսակետը Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ: Միության անդամներ Զ. Բալայանը, Բ. Ուլուբաբյանը, Ս. Մելքումյանը, Լ. Աղալովյանը, Ս. Ավագյանը, Ս. Նանագուլյանը, Հ. Աբրահամյանը, Շ. Մկրտչյանը, Ս. Աբրահամյանը, Հ. Խաչատրյանը, Ռ. Դալլաքյանը, Ս. Արզումանյանը, Ա. Մանասյանը, Յ. Հովհաննիսյանը, Հ. Հարությունյանը, Բ. Կարապետյանը, Լ. Ալավերդյանը, Մ. Դանիելյանը, Մ. Բաղդասարյանը, Ռ. Գրիգորյանը, Վ. Խաչոյանը, Հ. Ամիրյանը, Ն. Մովսիսյանը, Ա. Հակոբջանյանը և շատ ուրիշներ իրենց հրապարակախոսություններում, հոդվածներում, ակնարկներում, գրքերում, բրոշյուրներում տարբեր բնույթի հրապարակումներում, որոնց մի մասի ծախսերը հոգացել է «Արցախ» հայրենակցականը, կարևոր դեր են խաղացել Ղարաբաղի հիմնախնդրի

---

[1] Նույն տեղում, մարտ 1992, հ.1:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

պարզաբանման, միջազգայնացման և աշխարհի հանրությանը հասցնելու գործում:

Անգլիայի լորդերի պալատի փոխխոսնակ, Ստեփանակերտ քաղաքի պատվավոր քաղաքացուհի Քերոլայն Կոքսը, որը 28 անգամ բարեգործական առաքելություն է կատարել Լեռնային Ղարաբաղ և այնտեղ տարել հարյուրավոր տոննա սննդամթերք, դեղորայք, բժշկական սարքավորումներ և այլ կենսական նշանակություն ունեցող ապրանքներ, «Արցախ» հայրենակցականի մշտական հյուրն է և կապ է պահպանում նրա հետ: Բուլղարուհի, կինովավերագիր Ցվետանա Պասկալեվան, որը Արցախի մասին նկարահանված բազմաթիվ փաստագրական կինոնկարների հեղինակ է, միշտ էլ ստացել է «Արցախ» հայրենակցականի աջակցությունը: Միությունը սատար է կանգնել Պասկալևային և ֆինանսավորել նրա առաջին նկարահանումները: «Արցախ» հայրենակցականի բարեկամներն են գնդապետ Վ. Սմիռնովը, Ի. Բուրկոն, փոխծովակալ Թ. Գայդարը, Ե. Բոնները, Կ. Ալեքսևսկին, Ա. և Գ. Նույկինները, Վ. Օսկոցկին, Յ. Չեռնիչենկոն, Ա. Շաբադը և ուրիշներ, որոնք մեծ դեր խաղացին Ղարաբաղի հիմնախնդրի միջազգայնացման գործում:

Նրանք ռուս և աշխարհի մյուս ժողովուրդներին ասացին ճշմարտությունը Արցախի և նրա խնդիրների մասին: Ամեն անգամ նրանք Արցախ մեկնելիս կամ էլ այնտեղից վերադառնալիս, անպայման կապի մեջ են լինում «Արցախ» հայրենակցականի հետ և ստանում վերջինիս աջակցությունը: Ռուս մտավորականության Ղարաբաղ կոմիտեի անդամ Կիրիլ Ալեքսեևսկին այն անձնավորությունն է, որը լրագրողի ճամպրուկն ուսին, ոտքով կտրել և անցնել է Արցախը ծայրից ծայր, այն ժամանակ, երբ ազերիների հրոսակներն անվերջ ռմբակոծում էին Արցախի բնակավայրերը և ամենուր մահ սփռում: Կիրիլ Ալեքսեևսկին ի լուր աշխարհի հայտարարում էր արցախահայության արդար պայքարի մասին և պահանջում պատժել նրա ոսոխներին: Արցախի տարբեր կողմերից Ալեքսեևսկու և Բուրկովայի ուղարկած նյութերը հրապարակվում էին կենտրոնական մամուլում և հաղորդվում ռադիոյով: Այդ նրանք էին, որ առաջինն աշխարհին տեղեկացրին Մռավի նախալեռներում ծվարած Վերիշեն գյուղի դեմ խորհրդային բանակի կատարած բռնությունների մասին: [1]

---

[1] *Զորի Բալայան*, Դժոխք և դրախտ, էջ 68:

ՍՈՒՐԲ ՍՐԲՈՑԸ

Հայրենի Արցախի պաշտպանությունը, նրա լազուր երկինքը միշտ անամպ տեսնելը «Արցախ» հայրենակցականի սրբազան գործն է: Հայրենիքը պաշտպանելու համար պետք էին կռվող մարտիկներ, առանց որոնց կործանվելու էր հայրենի օջախը: Այդ բանից ելնելով էլ «Արցախ» հայրենակցականը նախաձեռնեց կազմակերպել կամավորական ջոկատներ: Շուրջ երկու հազար հոգի ընդգրկվեցին այդ ջոկատներում: Նրանք հիմնականում հայաստանաբնակ արցախցիներ էին: Ջոկատներում ընդգրկվեցին նաև Հյուսիսային Կովկասից և նախկին ԽՍՀՄ տարածքներից եկած կամավորներ, որոնք հիմնականում ծննդով արցախցիներ էին: Միության նախագահության որոշմամբ կամավորական ջոկատների կազմակերպումը հանձնարարվեց գյուղական համայնքներին: Ջոկատների կազմակերպման ընթացքում ի հայտ եկան որոշ դժվարություններ՝ կապված դրանք հանդերձավորելու և «Արցախ» տեղափոխելու հետ: Ուժերի գերագույն լարումով, սակայն, «Արցախ» հայրենակցականին հաջողվեց հանդերձավորել մոտ 60 ջոկատ և զինել հազիվ 10-12-ը, և փոխադրել Արցախ: Այդ ջոկատները հերոսաբար մարտնչեցին Քարին տակի, Մարտունու, Ասկերանի, Մարտակերտի և Հադրութի շրջանների մի շարք գյուղերի պաշտպանության համար մղված մարտերում: Կամավորական ջոկատների կազմակերպման, նրանց ուսուցման և վարժեցման աշխատանքները ղեկավարում էր «Արցախ» հայրենակցականի զինվորական գծով խորհրդական, գնդապետ Գեորգի Լորիսի Պետրոսյանը, որը հետագայում մտավ ՀՀ պետական կառույցի մեջ, սակայն մնալով «Արցախ» հայրենակցականի բարեկամը: Պետրոսյանը դեռևս 70-80-ական թվականներին, մոտ 10 տարի, ղեկավարել է ԼՂԻՄ քաղաքացիական պաշտպանությունը և ամուր կապվել նրա հողին ու ջրին:

Կամավորական ջոկատների հետ Արցախ մեկնեց նաև նախկին մարտակերտցի, «Արցախ» հայրենակցականի ակտիվ գործիչ, փոխգնդապետ Ռուբեն Աբրահամյանը և իրեն նվիրաբերեց հայրենի հողի պաշտպանությանը:

Արցախյան հերոսամարտի նվիրյալ, հայրենակցականի լավագույն բարեկամ, «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման քլորի արտադրամասի հերթափոխի պետ, Վարդենիսցի Կարինե Վլա-

դմիր Գևորգյանը, որը դեռևս ութսունական թվականների կեսերին հանրապետությունում բնապահպանման առաջին նախաձեռնողներից էր և 1988-ից սկսած իր ողջ եռանդը ներդրել էր հայ ժողովրդի ազատագրական պայքարին, 1992 թվականի փետրվարին մեկնեց Արցախ՝ գործող բանակ: Կարինեն իր մարտական կենսագրությունը սկսել է Ասկերանի հոսպիտալից, ապա Արցախն անցել է ծայրից ծայր, տեսել է ազատագրված Շուշին, հասել Քարավաճառ ու Օմարի լեռանցք: Կռվել է Մորուքի, Մոնթե Մելքոնյանի հրամանատարությամբ և փրկել է տասնյակ ազատամարտիկների կյանք: Կարինեի վերջին մարտը Մաղավուզն էր, 1993 թվականի հունիսի 13-ին: Վիրավորված թշնամու արկից, նա սողաց դեպի վիրավոր տղաները: Նրա կողքին պայթած հաջորդ արկն ընդմիշտ կտրեց Կարինեի կյանքի թելը:

Կարինեի մարտական ընկեր, գթության քույր Աղավնի Սահակյանը պատմում է.

— Նրան իր վճռից ոչինչ ետ չէր պահի... Երբ Կիչանում խփվեց ուղղաթիռը, շատերը վախեցան այնտեղ գնալ: Հինգ զոհ ունեինք, բոլորն էլ կիսավառված... Նրանց դիակները Կարինեն միայն իր համարձակությամբ կարողացավ դուրս բերել, որպեսզի չընկնեն թշնամու ձեռքը:

— Ես,— ասում է Արկադի Տեր-Թադևոսյանը,— շնորհակալություն պետք է հայտնեմ Կարինեին և մյուս աղջիկներին, որոնք ինձ սովորեցրին իրենց նայել որպես մարտական ընկերների... Կարինեն անում էր ամեն ինչ, բայց երբեք իր արածի մասին չէր խոսում: Եվ ես միշտ մտածում էի, որ նա պատրաստ է ամեն ինչի:

Կարինեի մարտական ընկեր Զարմիկ Հովհաննիսյանը պատմում է. «Շնորհիվ Կարինեի, մենք կռվի դաշտում ոչ մի զոհ, ոչ մի վիրավոր չենք թողել»: «Արցախ» հայրենակցականի նախագահ Յուրի Հովհաննիսյանը նշում է, որ Կարինեն իր նվիրվածությամբ շատերիս օրինակ է ցույց տվել...[1]

«Արցախ» հայրենակցականի 1993-94 թվականների գործունեության վառ էջերից են թշնամու կողմից Մարտակերտի օկուպացված բնակավայրերի ազատագրմանը նպաստելու համար ձեռնարկված միջոցառումները: 1993 թվականի ապրիլին «Արցախ»

[1] *Կարինե Գևորգյանի* մասին տես՝ «Բագին», Բեյրութ, 1993, հ. 9-12, էջ 354-356, «Հայաստանի Հանրապետություն», 8 փետրվարի 1994, հ. 2, և այլն:

հայրենակցականի նախագահությունը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Ինչպես հայտնի է, ադրբեջանական բանակը բաղկացած է հիմնականում աֆղան մոջահեդներից, ուկրաինացի և այլ ազգությունների վարձկաններից, որոնք աննախադեպ հարձակում են սկսել հերոսական Արցախի վրա: Նման պայմաններում, երբ օտար հրոսակները կոխկրտում են մեր հողը, սպանում մեր ծնողներին, եղբայրներին, քույրերին և երեխաներին, Արցախի հողում ծնված և նրա հերոսական ավանդույթներով դաստիարակված ոչ մի արցախցի իրավունք չունի լոկ դիտողի դերում հանդես գալ:

«Արցախ» հայրենակցական միությունը խնդրում և պահանջում է բոլոր արցախցիներից, որոնք գտնվում են Հայաստանում և ներքին սփյուռքում, այս ծանր պահին ոչ թե խոսքով, այլ գործով սատար կանգնել հայրենակիցներին, լինել նրանց կողքին, ովքեր տարիներ շարունակ անհավասար պայքար են մղում թշնամու դեմ:

Արցախը չի ների նրանց, ովքեր այս ծանր պահին կլքեն հայրենիքը, չեն արձագանքի նրա կոչին և չեն կատարի հայրենիքի պաշտպանի սրբազան պարտքը»:[1]

Միության նախագահության նախաձեռնությամբ ստեղծվեց «Մարտակերտի ազատագրման և պաշտպանության» հատուկ ֆոնդ: Հանգանակված միջոցներով և ՀՀ պաշտպանության նախարարության աջակցությամբ Արցախ ուղարկվեցին 400-ից ավելի մարտունակ մարտակերտցիներ: Առանձնապես աչքի ընկան թալիշցիներից կազմված մարտական ջոկատները, որոնց մի մասը փոխադրվեց Շահումյանի շրջան և դրվեց պարտիզանական ջոկատի ղեկավար Շահեն Մեղրյանի հրամանատարության տակ:

«Արցախ» հայրենակցականը կարևոր ներդրում ունի նաև ԼՂՀ ժողովրդաազատագրական բանակի շինարարության գործում: Նա սերտորեն համագործակցում էր Արկադի Տեր-Թադևոսյանի, Սերժ Սարգսյանի, Սամվել Բաբայանի, մյուս հրամանատարների, շատ ազատամարտիկների հետ: Նորաստեղծ բանակին տրամադրում էր հագուստներ, սննդամթերք, պաշտպանության այլ միջոցներ: Արցախի պաշտպանության դիրքերում կանգնած ազատամարտիկները, սկսած շարքային զինվորից մինչև գլխավոր հրամանատարը,

[1] *«Զով Արցախ»*, մայիս 1993, հ.2:

«Արցախ» հայրենակցականի ցանկալի հյուրերն էին և ստանում էին հնարավոր օգնություն:

«Արցախ» հայրենակցականի արխիվում պահվող փաստաթղթերը պերճախոս վկայում են, թե 1991-1994 թվականներին միությունը ինչպիսի օգնություն է ցույց տվել ԼՂՀ պետության և նրա բանակի կայացմանը: Միայն 1992 թվականի մայիսի սկզբին, Շուշիի կրակակետերը լռեցնելու նախօրյակին, «Արցախ» հայրենակցականը Արցախի պաշտպաններին է ուղարկել երեք ուղղաթիռ «Գրադի» արկեր, բավականին փամփուշտ և պաշտպանության այլ միջոցներ: 1990-1991 թվականներին «Արցախ» հայրենակցականի անդամները միության նախագահության հանձնարարությամբ կամ էլ իրենց նախաձեռնությամբ հաճախակի են մեկնել Արցախ՝ տանելով պաշտպանության միջոցներ, սննդամթերք, վառելանյութ և այլ ապրանքներ, կատարել նաև առանձին հանձնարարություններ: Աբիգ Սամվելյանը մի ուղևորության ժամանակ մասնակցել է հայրենի Դահրավի մոտ գտնվող Կարյագավ սարի պաշտպանությանը, իսկ միության ավտովարորդ Միշա Ազարյանը՝ հայրենի Զագլիկի ազատագրման համար մղված մարտերին:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԱՇՏ

«Արցախ» հայրենակցականի գործունեության մեջ նոր դաշտ բացվեց 1992 թվականի մայիսից հետո, երբ սկսեց գործել Հայաստանից Արցախ տանող ցամաքային ճանապարհը: Դա Արցախի քայքայված հիմնարկ-ձեռնարկություններին, կոլտնտեսություններին, պետական տնտեսություններին, մշակութային հաստատություններին օգնություն ցույց տալու խնդիրն էր: Այդ ժամանակ «Արցախ» հայրենակցականի կոչն էր. «Ամեն ինչ Արցախի, ամեն ինչ ճակատի համար»: Եվ հայրենի Արցախը դարձավ մի անառիկ ամրոց, որի պատերի տակ ջախջախվում և փշրվում էին թշնամու ուժերը: «Արցախ» հայրենակցականը մի տեսակ դռնորի դեր էր խաղում: Այն դարձել էր մագնիսական դաշտ, որն իրեն էր ձգում Արցախի բախտով մտահոգված բազմաթիվ կազմակերպությունների և անհատների:

«Արցախ» հայրենակցականի բազմաթիվ անդամներ մեկնեցին հայրենի հողը պաշտպանելու: Միությունը պետք է սատար կանգներ նրանց ընտանիքներին: Եվ կանգնեց: Օգնում էր սննդամթերքներով, հագուստեղենով, դրամով: Այդ հարցում «Արցախ» հայրենակցականը համագործակցում էր Հատուկ ծրագրերի վարչության հետ: [1]

«Արցախ» հայրենակցականը միաժամանակ կապեր հաստատեց Արցախի քաղաքական գործիչների հետ՝ նրանց գործունեությանը նպաստելու նպատակով: Միությունը սատար է կանգնել արցախյան պայքարի նվիրյալներ Արկադի Մանուչարովին, Համլետ Գրիգորյանին, Ռոլես Աղաջանյանին և բոլոր նրանց, ովքեր հալածվում և նետվում էին Ռուսաստանի կամ Ադրբեջանի բանտերը: Միության նախագահությունը բազմաթիվ հանդիպումներ է կազմակերպել Հայաստանի և Արցախի քաղաքական այն գործիչների հետ, որոնք զբաղված էին ղարաբաղյան հիմնահարցով: Բոլոր հանդիպումների և քննարկումների ժամանակ հիմնավորվեց այն գաղափարը, որ «Արցախ» հայրենակցականը նախ և առաջ պետք է ընդլայնի իր բարեգործական աշխատանքների շրջանակները, որի կարիքը շատ էին զգում ԼՂՀ հիմնարկ-ձեռնարկությունները, կոլտնտեսությունները, հանրապետության պաշտպանության կառույցի մեջ մտնող առանձին օղակներ: [2]

Բազմաթիվ հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ իրենց երախտագիտությունն են հայտնել «Արցախ» հայրենակցականին՝ ցույց տված օգնությունների համար: ԼՂՀ պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն Վ.Ա. Սաֆարյանը «Արցախ» հայրենակցականի նախագահությանը ուղարկած նամակում շնորհակալություն

---

[1] «Արցախ» հայրենակցականի և Հատուկ ծրագրերի վարչության միջև հարաբերությունները ոչ ցանկալի ընթացք ստացան, երբ վարչության առաջին նախագահ Գրիշա Հարությունյանին փոխարինեց Վահան Շիրխանյանը: Նա մի շարք հարցերում չէր ցուցաբերում իրատեսություն:

[2] 1992-1994 թվականներին «Արցախ» հայրենակցականը ֆինանսական և նյութական օգնություն է ցույց տվել ԼՂՀ պարի հանրային, «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությանը, Ստեփանակերտի պետական թատրոնին, ԼՂՀ պահակային ջոկատին, զինվորական շտաբին, առողջապահության, սպորտի և բնապահպանության բնագավառների աշխատողներին, «Հիշատակ» ֆոնդին, Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկային, ԼՂՀ ֆուտբոլային թիմին, Արցախի երեխաներին, գրողների միությանը, Շահումյանի անվան մարզադաշտի աշխատողներին, հացի գործարանին, երկաթուղային կայարանի աշխատողներին, զինվորական դատախազությանը, Շուշի քաղաքին, նախարարների խորհրդին, ներքին գործերի նախարարությանը, սոցիալական ապահովության բաժնին, տասնյակ կոլտնտեսությունների ու պետական տնտեսությունների և այլն:

է հայտնում դժվար պայմաններում թանգարանին օգնության ձեռք մեկնելու համար: «Կարևորն այն է,— գրում է Սաֆարյանը,— երբ մարդիկ կիսում են իրենց ցավը, իրենց հոգսը... Ստանալով ձեր օգնությունը մի անգամ ևս զգացինք, որ մենակ չենք մեր ազատագրական պայքարում, որ մայր Հայաստանը մեր նեցուկն է»:

Ստեփանակերտի Ղարմետաքսկոմբինատի աշխատողների երեխաները տեղափոխվել և տեղավորվել էին Երևանի «Մետաքս» արտադրական միավորման երրորդ մանկապարտեզում: Երեխաների խմբերի ղեկավար Լ.Ա. Սարգսյանը «Արցախ» հայրենակցականի նախագահ Յուրի Հովհաննիսյանին ուղարկած նամակում գրում է. «Մենք երկու անգամ օգնության համար Ձեզ ենք դիմել և Դուք չեք մերժել, օգնել եք կոշիկներով (16 զույգ), էլեկտրական ջեռուցիչներով: Մեզ լավ հայտնի է, որ Դուք օգնել և շարունակում եք օգնել Արցախից մեր շատ հայրենակիցներին: Դա իսկական հայրենասիրություն է: Ձեր հումանիտար օգնությամբ Դուք նպաստում եք ազատության համար մղած մեր սուրբ պայքարի ընհանուր հաղթանակին:

Ընդունեցեք մեր սրտաբուխ շնորհակալությունը Ձեր բարեգործության համար, որը հայտնի է ինչպես ԼՂՀ ղեկավարությանը, այնպես էլ արցախցի երեխաների մայրերին»: [1]

ՎԻՐԱՎՈՐ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ

Երբ Լեռնային Ղարաբաղը ներքաշվեց պատերազմի մեջ, Հայաստանի հիվանդանոցներ բերվեցին հարյուրավոր ծանր վիրավորներ: Նրանցից շատերի խնամքի կազմակերպումն իր վրա վերցրեց «Արցախ» հայրենակցականը: Միությունը վիրավորներին օգնում էր դրամով, հագուստներով, սննդամթերքներով, ծխախոտով, դեղորայքով և այլ անհրաժեշտ միջոցներով: Քանի որ հնարավոր չէր բոլոր վիրավորների խնամքն իր վրա վերցնել, ուստի «Արցախ» հայրենակցականի նախագահությունը նամակներով, կոչերով և ռադիո-հեռուստատեսությամբ դիմեց Հայաստանի բնակչությանը, հասարակական-քաղաքական կազմակերպություններին, հայրենակցական և բարեգործական ընկերություններին, բոլոր նրանց, ովքեր կարող էին օգնության ձեռք մեկնել վիրավոր ազատամարտիկներին: Հարյուրավոր երևանցիներ ինչպես միշտ, այս անգամ ևս ջերմորեն արձագանքեցին «Արցախ» հայրենակցականի կոչերին: Անտարբեր չգտնվեց նաև շախմատի աշխարհի չեմպիոն Գարի Կասպարովը, որը հինգ հազար դոլար նվիրաբերեց արցախյան պատերազմում վիրավորված ազատամարտիկների ֆոնդին: [1]

«Արցախ» հայրենակցականի կողմից վիրավոր ազատամարտիկներին օգնություն ցույց տվող նախկին սիրողական գործը փոխարինվեց կոնկրետ ծառայությամբ, որը ղեկավարում էր միության վարչության անդամ, պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս, դոցենտ Համլետ Հակոբյանը: Համլետը օր ու գիշեր վազքի մեջ էր՝ հիվանդանոցից-հիվանդանոց, դեղատնից-դեղատուն, շուկայից-շուկա, խանութից-խանութ: Նրան օգնում էին Քնար Աթաբեկյանը, Գրիգոր Խաչատրյանը, Միշա Ազարյանը և ուրիշներ: Ի թիվս այլոց, հիշատակության արժանի է նաև «Զինվորի մայր» կազմակերպության կոմիտեի նախագահ Գրետա Միրզոյանը: Նրա ղեկավարած կոմիտեի գթասեր կանայք իրենց մայրական քնքշանքով և հոգատարությամբ ասես լրացնում էին ցույց տրվող օգնությունը և թեթևացնում վիրավոր ազատամարտիկների ցավերը: Վիրավոր ազատամարտիկներին ֆինանսական և նյութական օգնություն էին ցույց տալիս նաև Հատուկ ծրագրերի պետական վարչությունը, հայրենակցականներն ու բարեգործականները, առանձին քաղաքացիներ, հասարակական կազմակերպություններ, հիմնարկ-ձեռնարկություններ, հաշմանդամներ, դպրոցականներ և այլն: Երևանի պետական համալսարանի աշխատակից, Արցախի Մաճկալաշենի պատվավոր գյուղացի Գուրգեն Մելիքյանն անընդհատ ոտքի վրա էր. նա արտասահմանից ձեռք էր բերում թանկարժեք, խիստ անհրաժեշտ դեղորայք և հասցնում վիրավոր ազատամարտիկներին:

Վիրավորներին օգնություն ցույց տալու աշխատանքների կազմակերպումը 1992 թվականի նոյեմբերից հանձնվեց ԼՂՀ իշխանություններին, այսինքն՝ դրվեց պետական հիմքի վրա: Սակայն դա չէր նշանակում, թե «Արցախ» հայրենակցականը լրիվ հեռացավ

---

[1] *«Ձով Արցախ»*, մայիս 1993, հ. 2:

[1] Նույն տեղում, օգոստոս, հ. 4:

վիրավոր ազատամարտիկներին օգնություն ցույց տալու ծրագրից: Շատ դեպքում Մոսկվա կամ արտասահման բուժման ուղարկվող ծանր վիրավորների ծախսերի մի մասը հայրենակցականը վերցնում էր իր վրա:

«Արցախ» հայրենակցականն ամենօրյա կապի մեջ էր հիվանդանոցների այն բժիշկների հետ, որոնք անմիջապես բուժում էին վիրավոր ազատամարտիկներին: Նրանք պարզապես հրաշքներ էին գործում, աննահանջ պայքարում մահվան դեմ: Եվ նրանք քանի՜-քանի՜ կյանք փրկեցին: Թերթում եմ միության «Զով Արցախ», թերթը, ընթերցում հիվանդանոցներից խմբագրություն ուղարկված վիրավոր ազատամարտիկների նամակները և հուզվում: Մարտակերտ քաղաքի բնակիչ Անուշ Գրիգորյանը մի խումբ վիրավոր ազատամարտիկների անունից Լուսակերտի ֆիզիոթերապևտիկ հիվանդանոցից գրում և պատմում է, թե իրենց բուժող բժիշկները ինչպիսի ջանքեր են գործադրում, որպեսզի վիրավորները շուտ բուժվեն ու վերադառնան հայրենի Արցախը պաշտպանողների շարքերը: Հիվանդանոցի բժիշկներն ու բուժքույրերը, առանձնապես գլխավոր բժիշկ Դարբինյանը, բաժնի վարիչ Թարխանյանը, բուժող բժիշկ Գրիգորյանը օր ու գիշեր հանգիստ չունեն: «Նրանց հրաշագործ ձեռքերը,— պատմում է նամակի հեղինակը,— և բարի աչքերը մենք կհիշենք ամբողջ կյանքում»: Վիրավոր ազատամարտիկները շնորհակալություն են հայտնում նաև «Արցախ» հայրենակցականի նախագահ Յուրի Հովհաննիսյանին և Համլետ Հակոբյանին իրենց ցույց տված նյութական և բարոյական օգնության համար, որոնք սիստեմատիկ այցելում են հիվանդանոցներ և վիրավորներին հուսադրում ջերմ խոսքերով:[1] Առանց հուզմունքի չես կարող ընթերցել վիրավոր ազատամարտիկներ Վազգենի, Համլետի, Սաշայի, Վալերիկի, Նորիկի և մյուսների նամակները, իսկ Մարիա Անտոնյանը շնորհակալություն է հայտնում այն բանի համար, որ «Արցախ» հայրենակցականը հինգ անգամ օգնություն է ցույց տվել վերականգնողական հիվանդանոցում բուժվող վիրավոր ազատամարտիկներին[2]:

«Արցախ» հայրենակցականի գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում նաև զոհվածների և պատանդների ընտանիքներին

[1] Նույն տեղում, մարտ, հ. 1:

[2] Նույն տեղում, հունիս, հ. 3:

օգնության կազմակերպումը: Արցախում վիրավորված ազատամարտիկ հաշմանդամներին մասնակի օգնություն ցույց տալու գործը վերածվեց կայուն ծրագրի, որի իրագործումը շարունակվեց մինչև 1994 թվականի վերջը: Զորի Բալայանի նախագահությամբ ստեղծվեց «Վիրավոր և հաշմանդամ ազատամարտիկների օգնության ֆոնդը», որի անմիջական իրագործողը «Արցախ» հայրենակցական միությունն էր: Ամենամսյա ֆինանսական օգնություն էր ցույց տրվում Արցախում վիրավորված ավելի քան 1000 ազատամարտիկ-հաշմանդամների:

ՄԵՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ

«Արցախ» հայրենակցական միությունը կապեր ունի նաև Հյուսիսային Կովկասում, Մոսկվայում, Միջին Ասիայում, Ռուսատանի կենտրոնական շրջաններում, Ուկրաինայում, Բալթյան հանրապետություններում և այլուր գտնվող հայ համայնքների հետ, որոնք բավականին ֆինանսական և այլ բնույթի օգնություն ցույց տվեցին միությանը: Հայաստանում և նրա սահմաններից դուրս գտնվող հարյուրավոր կազմակերպություններ, ընկերություններ, ձեռնարկություններ, անհատներ արձագանքելով «Արցախ» հայրենակցականի կոչին, իրենց լուման ներդրեցին և սատար կանգնեցին Արցախի պաշտպանության գործին: «Զով Արցախ» թերթն իր համարներում պարբերաբար անդրադարձել է հայրենիքի պաշտպանությամբ մտահոգված մարդկանց, որոնք օգնում էին, որքանով կարողանում էին: Ահա մի քանի օրինակ. Լևոն Պապովյան (Աբովյան քաղաքից, 100000 ռ.), Հմայակ Էլբակյան (Գյումրիից, 100000 ռ.), Երևանից՝ Սամվել Պողոսյան (20000ռ.), Թորոս Օրուջյան (5000ռ.), թոշակառու Լարիսա Քամալյան (20ռ.), Վարուժան Գրիգորյան (Մարտակերտի Չափար գյուղից, 60.000), «Օլիմպիա» ֆիրմայի տնօրեն Արթուր Զաքարյան (50.000ռ.), Արմեն Մանգասարյան (1. 000.000 ռ.), Իրանի հայկական համայնք (2.000.000ռ.), Արցախի թեմի առաջնորդ Պարգև Սրբազան (1.000.000 ռ.) Հալեպի նոր գյուղի Ազգային ճեմարան (260.000ռ.) և ուրիշներ:

«Զով Արցախ» թերթից իմանում ենք, որ «Արցախ» հայրենակցական միության հաշվապահություն է բերվել 800.000 ռուբլի, որը Մոսկվայից ուղարկել են մեր համաերկրացիներ Փայլակ Բա-

լայանը և Սերժ Ջիլավյանը: Ամբողջը նվիրվեց հաշմանդամների ֆոնդին: Մոսկվայից Նորայր Մուրադյանը մեկ միլիոն ռուբլի է փոխանցել «Արցախ» հայրենակցական միության հաշվին՝ Արցախում հաշմանդամ դարձած ազատամարտիկներին օգնելու նպատակով: Հրատարակչության աշխատակից Արարատ Մելքոնյանն ամեն ամիս միության գանձարկղ է մուծում 500-2000-ական ռուբլի: Դեմոկրատական կուսակցության ղեկավար Արամ Սարգսյանը, ԱԻՄ-ի նախագահ Պարույր Հայրիկյանը, ԱՆԻ-ից Ջորջ Լելեքյանը, Արգենտինայից «Միսիոն Արմենիա» թերթի խմբագիր Ռուբեն Մարուսյանը, Գերմանիայից Գրիգոր Մինասյանը, Ֆրանսիայից «Սոս Արմենիա» բարեգործական կազմակերպության ներկայացուցիչը անձամբ ներկայացել են «Արցախ» հայրենակցականի նախագահություն, իրենց զգացմունքներն արտահայտել միության հայրենանվեր գործունեության նկատմամբ և հանձնել ֆինանսական միջոցներ:

Միությունը երախտապարտ է բոլորին՝ ցուցաբերած աջակցության համար:

«Արցախ» հայրենակցականը ֆինանսական և նյութական զգալի օգնություն է ստացել նաև ՀՀ քիմիական արդյունաբերության նախարարությանը ենթակա ձեռնարկություններից, «Պրոմեթևս» բաժնետիրական ընկերությունից, էլեկտրատեխնիկական, հաստոցաշինական գործարաններից, թռչնաբուծական և ձկնաբուծական ֆաբրիկների Սևանի մասնաճյուղերից, մի շարք կոոպերատիվներից: Միության ֆինանսական միջոցների գոյացման գործում մեծ ավանդ ունեն Ա. Մանուչարյանը, Կ. Գևորգյանը, Զ. Բալայանը, Յ. Հովհաննիսյանը, Հ. Հարությունյանը, Ա. Մուքանյանը, Հ. Հակոբյանը և ուրիշներ: Սիրով ու երախտագիտությամբ ենք մտաբերում Երևանի պետական համալսարանի դասախոս Հասմիկ Հարությունյանին, որը, չնայած իր պատկառելի տարիքին, ամեն կերպ աշխատում էր թեթևացնել վիրավորների, որբերի, կարիքավորների և փախստականների վիճակը: Առավոտից մինչև ուշ երեկո նա շարժման մեջ էր. լինում էր նախարարություններում, հիմնարկ-ձեռնարկություններում, պաշտոնյաների մոտ, մշակույթի հաստատություններում, «Արցախ» հայրենակցականի համար ձեռք էր բերում սննդամթերք, հագուստեղեն, դեղորայք, դրամ և այլ միջոցներ: Նվիրվածությամբ ու երիտասարդական ավյունով էր աշխատում մանկավարժ, թոշակառու Քնար Աթաբեկյանը, որն ամբողջ

օրն անցկացնում էր ծերանոցներում, հիվանդանոցներում, բռնագաղթվածների կողքին: Նա իր հոգատարությամբ և սկզբունքայնությամբ «Արցախ» հայրենակցականի շատ անդամների համար օրինակ էր հանդիսանում, հիացմունք պատճառում շատերին:

Անմոռանալի օրեր էին: Մարդիկ ժամերով հերթ էին կանգնում միության գանձարկղ մուծումներ կատարելու կամ բերած մթերքները պահեստ հանձնելու համար: Նրանց շարքերում կարելի էր տեսնել ոչ միայն հայերի, այլև եզդիների, քրդերի, ռուսների և այլազգիների: Արցախահայությունը երախտապարտ է նրանց բոլորին: «Արցախ» հայրենակցականն իր բոլոր բարերարներին հրապարակավ խորին շնորհակալություն է հայտնում երկրամասի ազատության համար մղվող պայքարին նեցուկ կանգնելու և ուժերի ներածին չափ Արցախին օգնություն ույց տալու համար...[1]

«Արցախ» հայրենակցականի հինգերորդ համաժողովի հաշվետվության մեջ կարդում ենք. «Հաշվետու ժամանակաշրջանում (1991 թվականի հունիսի մեկից մինչև 1993 թվականի նոյեմբերի մեկը ընկած ժամանակաշրջան— Հ. Ա. (միության հաշիվ է մտել 41.882.900 ռուբլի, որից զոհված ազատամարտիկների ընտանիքներին և հաշմանդամ ազատամարտիկներին տրվել է 23.500.000ռ. (կազմում է կատարված ծախսերի 55 տոկոսը), 5.000.000 ռուբլի ծախսվել է Արցախի պաշտպանության համար, 2.944.000 ռուբլի տրվել է Արցախի հիմնարկ-ձեռնարկություններին, 5.144.000 ռուբլին՝ կոլտնտեսություններին...»[2]:

ՔԱՐԱՎԱՆՆԵՐԸ ԵՏ ԵՆ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության նախագահի 1991 թվականի դեկտեմբերի 5-ի հրամանագրով կազմակերպվում է ՀՀ փախստականների հարցերի պետական վարչություն, որի նախագահ է նշանակվում անցյալում կուսակցական և պետական գործիչ Վլադիմիր Մովսիսյանը: Պետական այդ մարմինը զբաղվում էր բռնագաղթվածների և փախստականների ընդունման-տեղավորման-տեղաբաշխման, նրանց սոցիալ-տնտեսական վիճակը հոգալու, հայրենի օջախները վերադարձնելու, միևնույն ժամանակ՝ համակարգում

[1] Նույն տեղում, մարտ-մայիս, 1992, № 4:

[2] 5-րդ համաժողովի հաշվետվությունը, թ. 20:

փախստականների հետ առնչվող կազմակերպությունների և ընկերությունների աշխատանքով: «Ադրբեջանը,— բացատրում էր Վլադիմիր Մովսիսյանը,—ցանկանում է հսկայական զոհերի գնով նվաճել կորսված հեղինակությունը՝ օգտագործելով մուսուլմանական դիվանագիտության բոլոր հանրահայտ ձևերը: Եվ չնայած ԼՂՀ-ն Ադրբեջանի հետ գտնվում է պատերազմի մեջ, վարչությունը և «Արցախ» հայրենակցականը աշխատում են Արցախի հետ: Փախստականների վարչության տվյալներով, 1993 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում կային 57 հազար արցախցի բռնի տեղահանվածներ: 1994 թվականի սկզբի տվյալներով, այսինքն՝ մեկ տարի անց, 31 հազարը վերադարձել էին իրենց մշտական բնակության վայրերը: Միայն այդ միջոցառման վրա ծախսվել է 68 միլիոն ռուբլի (1993 վականի գործող գներով) :[1]

Առ այսօր հայրենի օջախներ են վերադարձել Բերդաձորի գյուղախմբից և Հադրութի շրջանից բռնագաղթվածները, ինչպես նաև Ստեփանակերտից, Մարտակերտի և Մարտունու շրջաններից փախստականներն ու բռնագաղթվածները: Դեռևս մնում են Մարտակերտի շրջանից չազատագրված գյուղերի և Շահումյանի շրջանի բռնագաղթվածների մի մասը, որոնք կարոտով սպասում են իրենց տունդարձին:

«Արցախ» հայրենակցականին ավելի շատ անհանգստացնում է Ռուսաստան և այլ վայրեր տեղափոխվածների ճակատագիրը: Հյուսիսային Կովկասի հայրենակցական համայնքների օգնությամբ և Փախստականների հարցերով վարչության ակտիվ մասնակցությամբ հնարավոր եղավ փախստականների մի մասին վերադարձնել և տեղափոխել հայրենի Արցախ: Սակայն, ցավալի է, որ շատ փախստականներ տաքուկ տեղ գտնելով հայրենիքից դուրս, դարձել են անտարբեր իրենց հայրենիքի ճակատագրի նկատմամբ:

«Արցախ» հայրենակցականը փախստականների վարչության հետ համատեղ շարունակում է աշխատանք տանել բոլոր փախստականներին հայրենիք վերադարձնելու համար: Միությունը համայանքներին ուղարկած իր նամակներում և կոչերում փախստականներին հորդորում է վերադառնալ հայրենի օջախները: Ահա այդ կոչերից մեկը, որը գրվել է 1993 թվականի սկզբին.

[1] *«Հայաստանի Հանրապետություն»*, 8 փետրվարի 1994, հ. 24:

«Կո՛չ Արցախից դուրս ապրող արցախցիներին

Այսօր մեր ազգի համար ստեղծված ճգնաժամային իրավիճակը ստիպում է մեզ մի անգամ ևս սթափ գնահատել Արցախում տիրող ծայրահեղ դրությունը և միաժամանակ ահազանգել, որ Արցախը վտանգի մեջ է, որ Ադրբեջանի կառավարությունը բանակի օգնությամբ կանգ չի առնում ոչ մի քստմնելի գործողության առաջ, նախիջևանյան տարբերակով այն հայաթափ անելու համար:

Այսօր ավելի, քան երբևիցե, ամեն մի արցախցի, որտեղ էլ որ նա ապրելիս լինի, իր սուրբ պարտքը պիտի համարի այս օրհասական պահին վերադառնալ Արցախ, շենացնելու պապական լքված օջախը, արհամարհելով տնտեսական, քաղաքական, բոլոր-բոլոր արհեստական խոչընդոտները:

Արցախցինե՛ր, սթափվեցե՛ք: Արցախը ձեզ է կանչում:

«Արցախ» հայրենակցական միություն»:[1]

Թե՛ «Արցախ» հայրենակցականի և թե՛ փախստականների վարչության ուշադրության կենտրոնում է Հյուսիսային Արցախից, մանավանդ Շահումյանի, Խանլարի, Դաշքեսանի և Շախմորի շրջաններից արտաքսվածների ճակատագիրը: Նրանց նկատմամբ ընդհանուր հոգատարությունից բացի, միջոցառումներ են ձեռնարկվում պապենական օջախ վերադարձնելու ուղղությամբ: Այդ հարցով ավելի շատ շահագրգռված և բավականին ջանքեր են գործադրում ԼՂՀ իշխանությունները: Եվ դա միանգամայն բնական է. Արցախից այդ տարածքների դուրս թողնելը և հայաթափելը Ադրբեջանի իշխանությունների հանցագործ վերաբերմունքի արդյունք է: Պատմական Արցախի ամբողջ տարածքի վերականգնումը ոչ միայն արցախահայության խնդիրն է, այլև՝ ամբողջ հայության:

Շահումյանի շրջանից բռնի տեղահանված բնակչության ներգաղթը խրախուսելու համար Արցախ տեղափոխվեցին ժամանակավոր տեղավորել են Մարտակերտի շրջանի Ակնաբերդ գյուղում: Լրացուցիչ ներգաղթի ընդունման հնարավորություն ստեղծելու համար ԼՂՀ կառավարությունը 1995 թվականի հունիսին որոշում է ընդունել բավարարել Շահումյանի շրջանի վարչակազմի խնդրանքը և ժամանակավորապես նրա իրավասությունը հանձնել Չարեքտար, Դադիվանք, Բաղլըփայա գյուղերը՝ դրանց հարակից

[1] *ՄԸԱ*, կոչերի և այլ փաստաթղթերի գործ:

տարածքներով: Այդ որոշման համաձայն սկսվել են Դադիվանք և Չարեքտար գյուղերի վերականգնման աշխատանքները, նպատակ ունենալով ամսական 10 ընտանիք վերաբնակեցնել:[1]

Փախստականների վարչության, «Հայաստան» համահայկական հիմնադրամի և ԼՂՀ կառավարության համատեղ ուժերով վերականգնվում են հրոսակների կողմից ավերված Վաղուհաս, Գետավան, Չափար, Գյուլաթաղ, Զարդախաչ, Կիչան, Զանյաթաղ գյուղերը: Միայն 1993 թվականին Ասկերանի շրջանի շրջկենտրոնում, Նախիջևանիկ և Փիրջամալ գյուղերում վերականգնվել է 300 տուն: Ծրագրված է վերականգնել ավերված 11 հազար տուն, որոնցից ավելի քան 2500-ը վերականգնվել է 1994 թվականին: Վերականգնման աշխատանքները շարունակվում են:

ՊԱՏՎԱՎՈՐ ՆԱԽԱԳԱՀԸ

«Արցախ» հայրենակցականի պատվավոր նախագահն է հանրաճանաչ Զորի Հայկի Բալայանը՝ Ղարաբաղյան շարժման, արցախահայության մերօրյա պայքարի հոգեբանական և գաղափարական նախապատրաստողներից, նրա առաջին զինվորներից մեկը: Զորի Բալայանն իր ակտիվ քաղաքական, հրապարակախոսական, գրական գործունեությամբ կարողացել է համաշխարհային հանրության ուշադրությունը բևեռել Ղարաբաղյան հիմնախնդրի վրա:

Զորի Բալայանը ծնվել է 1935 թվականի փետրվարի 10-ին ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում: Նրա հայրը ԼՂՀՄ-ի լուսավորության նախարարն էր, որը դարձավ ստալինյան-բաղիրովյան բռնությունների զոհը, կարիքի ու բազում հոգսերի մեջ թողնելով ընտանիքը:

1953-57 թվականներին Զ. Բալայանը ծառայում է Բալթյան նավատորմում, ապա սովորում է Ռյազանի բժշկական ինստիտուտում, որը ավարտելուց հետո, շուրջ 10 տարի աշխատում է Ծայր Հյուսիսում և Կամչատկայում: 1974 թվականից՝ Հայաստանում «Լիտերատուրնայա գազետայի» սեփական թղթակիցն է: Նա ԽՍՀՄ ժուռնալիստների միության և Հայաստանի պետական մրցանակների դափնեկիր է: 1989 թվականին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր է ընտրվել Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզից: 1991 թվականին ընտրվել է ԼՂՀ առաջին խորհրդարանի անդամ:

Զորի Բալայանն ամբողջ էությամբ արցախցի՝ է անմնացորդ կապված նրա հող ու ջրին: Առանց Արցախի նա չի պատկերացնում իր կյանքը: Որտեղ էլ լինի՝ Կամչատկայում, թե հեռավոր օվկիանոսներում, Միացյալ Նահանգներում, թե Մերձավոր Արևելքում, անգամ վիրահատության սեղանին պառկած, նրան թվում է, թե նա քայլում է հայրենի Արցախի կածաններով, նրա այնքան սիրած Ստեփանակերտի փողոցներով: Նրա համար աշխարհի ամենահմայիչ ծաղիկը, ամենագեղեցիկ երգող թռչունը, ամենաջերմ ու կենսատու արևը, ամենահամեղ պատառը կարելի է գտնել Արցախի երկնքի տակ, նրա կենսատու հողի վրա:



Զորի Բալայան

Զորի Բալայանն իր ողջ կյանքը նվիրաբերել է հայրենի Արցախն ազատ տեսնելու վեհ գաղափարին: Եվ ինչպես ինքն է ասում՝ հայրենի Արցախի վերքերն անցնում են իր սրտի միջով:

Զորի Բալայանն «Արցախ» հայրենակցականի ստեղծողներից մեկն է և ջանք չի խնայել միությունը դարձնելու Արցախի ազատագրական պայքարին աջակցող հզոր ուժ:

Զորի Բալայանն «Արցախ» հայրենակցականի առաջադիրքն է, նրա ոգեշնչողը: Նա կսկիծով ու ցավով է տանում հայրենիքի, հայ

[1] *«Հայաստանի Հանրապետություն»*, 7 հունիսի 1995, հ. 138:

ժողովրդի ազատագրության համար թափված յուրաքանչյուր կաթիլ արյունը, զոհվում է ամեն մի զոհվածի հետ, կրկին որբանում է ամեն մի որբի հետ: Զորի Բալայանի էությունը բարությունն է, բոլորին աջակից լինելը: Նրա ձայնը լսելի է Մոսկվայում, Լոնդոնում, Ստեփանակերտում, ամենուր: Նրա խոսքի հիմնական նյութը Արցախն է, ղարաբաղյան հիմնախնդիրը: Այդ մասին է նա խոսում Անգլիայի լորդերի պալատի փոխխոսնակ Քերոլայն Կոքսի հետ՝ ամեն անգամ նրան Արցախ ուղեկցելիս, այդ մասին է խորհում ճանապարհորդության ժամանակ կամ որևէ ակնարկ գրելիս: Նա այլ կերպ չի կարողանում ապրել, որովհետև նա Զորի Բալայանն է՝ «Արցախ» հայրենակցականի պատվավոր նախագահը:

* *
*

«Արցախ» հայրենակցականի լայն գործունեության ընդարձակ շարադրանքն սպասում է վաղվա պատմաբանին, իսկ այս համառոտ ակնարկով մենք փորձեցինք ընթերցողին ներկայացնել ծանր փորձություններով լեցուն նրա կատարած աշխատանքի մի քանի դրվագները միայն: Հեշտ ու հանգիստ չեն եղել այդ աշխատանքները: Դրանք ուղեկցվել են բազմաթիվ խոչընդոտներով ու արգելքներով, որոնց հաղթահարման համար մեծ ջանք ու եռանդ է պահանջվել: Երբ հետադարձ հայացք ես նետում անցած ճանապարհին, պարզորոշ երևում են այն սխալներն ու բացթողումները, որոնք տեղ են գտել հայրենակցականի գործունեության մեջ: Դրանք կարող էին և չլինել, եթե անողոք ժամանակը հնարավորություն ընձեռեր կրկին ու կրկին անգամ խորհել կատարելիք յուրաքանչյուր քայլի վրա, եթե մեզանից յուրաքանչյուրը բյուրեղյա մաքրությամբ ու անմնացորդ նվիրումով կատարեր իրեն վստահված գործը, եթե Արցախի ազատագրության համար հարմար պահը կորցնելու վտանգը դամոկլյան սրի պես կախված չլիներ մեր գլխին:

Ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի:

Իսկ մեզ նորանոր գործեր են սպասում:

Արցախը կանչում է:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԽՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ընկ. Վ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն ՀՍՍՀ սահմանադրության 49 և ՍՍՀՄ սահմանադրության 51 հոդվածների, 1988 թվականի նոյեմբերի 4-ին Երևանում ստեղծվել է «Արցախ» հայրենակցական-բարեգործական միություն, որի մասին 1988 թ. նոյեմբերի 9-ի նո. 0-3 գրությամբ տեղյակ է պահվել Ձեզ:

«Արցախ» հայրենակցական-բարեգործական միության նպատակն է՝ համակողմանիորեն նպաստել ԼՂԻՄ-ի վերակառուցման արագացմանը, սոցիալ-տնտեսական, մշակութային զարգացմանը, աջակցել ՍՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ ընդունած որոշումների իրականացմանը: Այդ ուղղությամբ արդեն աշխատանքներ են կատարվում: Ելնելով վերոհիշյալից, խնդրում ենք Ձեզ՝

1. Պաշտոնապես ճանաչել միությունը
2. Գործնական օգնություն ցույց տալ և միջնորդել Երևանի քաղաքային խորհրդի առջև «Արցախ» միությանը հատկացնելու համապատասխան տարածք՝ գրասենյակի և միջոցառումներ անցկացնելու համար:

«Արցախ» հայրենակցական-բարեգործական միության
տնօրեն, փիլիսոփայական գիտությունների
դոկտոր՝ **Ա. Մանասյան**
Քարտուղար՝ **Լ. Ալավերդյան**

«ԱՐՑԱԽ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Արցախ» հայրենակցական միության համաժողովը գտնում է, որ երկրում և մասնավորապես Արցախում քաղաքական վիճակը օրեցօր սրվում է՝ կապված կենտրոնական իշխանությունների հակահայկական քաղաքականության հետ, որի պայմաններում Ադրբեջանի կառավարությունը լայն հարձակում է ծավալել Արցախի ժողովրդագրական վիճակի փոփոխության և, իվերջո, արցախյան հարցը նախիջևանյան տարբերակով լուծելու համար...

Համաժողովը դատապարտում է Խորհրդային Միության պետական ու կուսակցական մարմինների վարած հակահայկական քաղաքականությունը, կենտրոնական մամուլի, հեռուստատեսության և լրատվության մյուս աղբյուրների հակահայկական հաղորդումների միջոցով Հայաստանում և մասնավորապես Արցախում կազմակերպվող արյունալի պրովոկացիաները:

Համաժողովն ըստ ամենայնի գնահատելով Հայաստանի պետական և կուսակցական ղեկավար մարմինների գործունեությունը Հայաստանի հետ Արցախի միավորման հարցում, միաժամանակ մտահոգություն է հայտնում որոշ դեպքերում դրսևորվող անվճռականության համար...

Համաժողովն իր գոհունակությունն է հայտնում Արցախի հիմնահարցի քաղաքական լուծման ուղությամբ տնտեսական, հասարակական և բարեգործական կազմակերպությունների ու շարժումների ծավալած գործունեության առթիվ:

ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայրենակցական միության գլխավոր խնդիրը համարել արցախցիների վերադարձը դեպի հայրենի օջախները և ամեն կերպ օժանդակել դրա իրականացմանը:

2. Շարունակել և կարճ ժամանակամիջոցում ավարտել գյուղական համայնքների կազմավորումը, ընդգրկելով հայաստանաբնակ բոլոր արցախցիներին և ակտիվացնել շրջանային համայնքների գործունեությունը:

3. Լայն գործունեություն ծավալել ներքին սփյուռքում ապրող արցախցիներին համախմբելու և հարազատ երկրամասի հետ կապելու համար:

4. Միության գործադիր մարմնի գործունեությունը առավել արդյունավետ դարձնելու համար

ա) ստեղծել տնօրինություն, բաղկացած 5-7 մարդուց, կանոնադրության մեջ կատարելով համապատասխան փոփոխություն,

բ) գործադիր մարմնին կից կազմակերպել կանանց խորհուրդ՝ ազգային խնդիրների լուծման գործում արցախցի կանանց ակտիվությունը բարձրացնելու համար,

գ) արցախցի ուսանողներին ներգրավել հայրենակցական միության աշխատանքներում,

5. շարունակել և ընդլայնել հայրենակցական միության տնտեսական գործունեությունը Արցախում՝ փոքր ձեռնարկությունների և մասնաճյուղերի ստեղծման, կոոպերատիվների կազմավորման և այլ ձևերով,

6. օժանդակել նոր կազմակերպված և թույլ տնտեսություններին նյութատեխնիկական բազայի ստեղծման, անհրաժեշտ հումքի և նյութերի ձեռք բերման բնագավառում,

7. լայն աշխատանքներ ծավալել Արցախի գյուղերի սոցիալական զարգացման համար՝ կապված գազիֆիկացման, ջրամատակարարման, ճանապարհների կառուցման հետ և այլն,

8. ամեն կերպ օժանդակել, որպեսզի Հայաստանի հետ Արցախի միավորումը միութենական ճանաչում ստանա,

9. մշտապես սատար կանգնել Արցախի ազգային ազատագրական շարժմանը՝ օգտագործելով պայքարի բոլոր ձևերը: Մեր կարգախոսն է՝ առանց իրական զարգացած հայկական Արցախի չի կարող գոյատևել արցախցին,

10. Հայաստանի Գերագույն խորհրդի պաշտպանական խորհուրդում ներկայացնել Արցախի պաշտպանության խնդիրը,

11. համագործակցել պետական մարմինների, քաղաքական, հասարակական և բարեգործական կազմակերպությունների և շարժումների հետ՝ հանուն ազգային ազատագրական պայքարի վերջնական հաղթանակի: Ամեն ինչ անել այդ պայքարում բոլոր ուժերին համախմբելու համար:

11/IV-1989թ.

ՄԸԱ, արձանագրությունների գործ

ԱՐՑԱԽՅԻ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ

Մեծարգո նախագահ Լևոն Տեր-Պետրոսյան:

Հարգարժան նախագահություն:

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցն արդեն դառնում է Հայաստանի և Ադրբեջանի բանակցությունների առարկա: Մենք՝ արցախցի մտավորականներս, Ձեզ ենք ներկայացնում մեր մտահոգություններն ու մտորումներն այդ առթիվ...

Մոսկվան Ղարաբաղի հիմնահարցը դիտել ու դիտում է որպես Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճ, որը կարող է լուծվել երկու կողմերի բանակցությունների միջոցով: Դրանով նա անտեսում է հիմնահարցի բուն էությունը, այն, որ դա Ադրբեջանի կողմից և Մոսկվայի թողտվությամբ ու օժանդակությամբ ստրկացված հայ ազգաբնակչության ազատագրվելու, ինքնորոշվելու կամքի ու իրավունքի արտահայտություն է: Այնպես որ, մենք ընդունելով հանդերձ Ղարաբաղի վերաբերյալ բանակցությունների գաղափարը, գտնում ենք, որ այդ բանակցություններում Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը պետք է ներկայացվի իրավաբանական սուբյեկտ, որպես տուժած ու տուժող կողմ, որպեսզի հնարավորություն ունենա ներկայացնելու և պաշտպանելու իր շահերը:

Մեզ հայտնի է, որ այժմ էլ Ղարաբաղի համար առաջարկվում է այնպիսի կարգավիճակ, ըստ որի նա քաղաքական առումով պետք է ենթարկվի Ադրբեջանին և ինքնուրույն լինի միայն տնտեսական ու մշակութային առումով: Նախ՝ ուրիշների շահերը ոտնահարողները հետևողականորեն «մոռանում» են, որ արցախահայության պայքարը հացի համար չէ, այլ քաղաքական, ազգային, մարդկային տարրական իրավունքների համար, իր դարավոր հայրենիքում, սեփական տանը մարդկային արժանապատվությամբ ապրելու համար:

Երկրորդ՝ ամբողջ աշխարհին է հայտնի, թե այս հասարակարգում ինչ կարող է նշանակել տնտեսական ինքնուրույնությունը քաղաքական կախվածության պայմաններում, այն էլ մի հանրապետության մեջ, որը խոսքով կարող է իրեն հռչակել «ամենաինտերնացիոնալիստական», իսկ գործով ծրագրված կերպով ու բացահայտորեն վարել ցեղասպանության քաղաքականություն ազգային փոքրամասնությունների ու հարևանների նկատմամբ:

Մարդկային առողջ բանականության տեսակետից անհասկանալի է այն իրողությունը, որ տասնյակ հազարավոր ռուս և ռուսախոս ընտանիքներ Ադրբեջանում խորհրդային հզոր բանակի զինված զորամասերի պաշտպանությունը անբավարար համարեցին իրենց կյանքի անվտանգության համար, դարձան փախստականներ, և դա նույն կենտրոնը համարեց ճիշտ քայլ, կազմակերպեց նրանց տեղահանությունը, բայց հայերին համառորեն ուզում է թողնել այդ նույն Ադրբեջանի իշխանության տակ: Մոսկովյան այդ քաղաքականության հեղինակներից ու կիրառողներից քանի՞սը իրենց կանանց, դուստրերին, հարազատներին կարող են վստահել Ադրբեջանին, առանց մտավախության, որ նրանց այնտեղ չեն անարգի, չեն խոշտանգի, չեն հրկիզի, չեն բռնաբարի: Իրավական պետության ստեղծում հռչակող Մոսկվան իրավական քանի՞ տեսակ նորմերով է ղեկավարվում... Բաքվի ու Մոսկվայի բոլոր որոշումները բխում են բռնապետության պահպանման շահերից, բռնակալական քաղաքականության արտահայտություն են, որոնց նպատակն է ճնշել Արցախի ազատատենչ ժողովրդի կամքը, իրավունքները...

Բանակցության նպատակով կայացած առաջին հանդիպման օրերին ադրբեջանական կողմի ծայրահեղ վայրագությունները բնավ էլ պատահական զուգադիպություններ չեն. դա նրանց գործնական պատասխանն է ու դիրքորոշումը այդ հարցում: Դա մի անգամ ևս հաստատում է, որ մեզ պետք է ոչ միայն տեսական սկզբունքայնություն, այլ գործնական վճռականություն: Գտնում ենք, որ ադրբեջանական կողմի հետ բանակցությունները պետք է իրականացնել միանգամայն նորմալ իրավիճակում ու որոշակի նախապայմաններով՝ ա) մարզային ու տեղական իշխանությունների վերականգնում, գ) ադրբեջանցի զինված գրոհայինների ու միլիցիայի հավելյալ անձնակազմի դուրս բերում մարզի սահմաններից, դ) զինված ուժերի դուրս բերում բնակավայրերից և նրանց տեղաբաշխում Ղարաբաղի սահմանի երկարությամբ:

Ինչ վերաբերում է մարզի տեղական խորհուրդների հետագա ընտրություններին, ապա գտնում ենք, որ ընտրությունները պետք է անցկացնել լիակատար ժողովրդավարության ու խաղաղ պայմաններում, առանց գրոհայինների ու զինվորական իշխանությունների ներկայության: Ընտրություններին պետք է ներկա դարձնել միջազգային դիտորդների:

Մեր ամբողջ ժողովուրդը, այդ թվում և Արցախի հայությունը մեծ հույսեր է կապում հայոց նոր, ազգային խորհրդարանի հետ՝ մեր ազգի ապագայի կերտման սուրբ ու պատմական գործում: Ինչպես Նախիջևանի ադրբեջանականացումը, այնպես էլ արցախահայության տեղահանման ծրագրի իրականացումը բնավ էլ Ադրբեջանի վերջնական նպատակը չէ: Պատահական չէ, որ Բաքվում հիմնվել է «Զանգեզուր» կազմակերպություն: Նույնիսկ այլազգի դիտողները հասկացել են, որ Ղարաբաղը «Հայաստանի միջնաբերդն է», նրա «արևելյան դարպասը»: Ուզում ենք համոզված լինել, որ թե՛ բանակցությունների ընթացքում և թե՛ հետագա ձեռնարկումներում մեր խորհրդարանը կելնի Արցախի ստրատեգիական նշանակությունից, արցախահայության ու մեր ողջ ժողովրդի սպասումներից, հայոց համազգային շահերից:

Նամակը ստորագրել են գիտության և մշակույթի 16 նշանավոր գործիչներ:

«Խորհրդային Ղարաբաղ», 13-ը դեկտեմբերի 1990 թ., հ. 266

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

(Լրատվական բոլոր միջոցներին, բոլոր կազմակերպություններին, հեռուստատեսությանը)

Արցախի հայաթափումով սկսվել է մեր ժողովրդի ցեղասպանության մի նոր փուլ:

Ադրբեջանական կողմը օրերս վերսկսել է հարձակումը: Հայաթափվում են Շահումյանի, Հադրութի և այլ շրջանների հայկական գյուղերը: Ժողովրդին մեկ բան է մնում.

Դարձյալ համախմբվել և միանալ՝ **ԱՐՑԱԽԸ ՓՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ:**

Ոչ մի ուժ մեզ չի կարող ետ պահել մեր ժողովրդի մի հատվածին օգնության հասնելու վճռականությունից ու սրբազան **ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ:**

Ահա այս պարտականությամբ էլ «Արցախ» հայրենակցական միությունը կոչ է անում քաղաքական-հասարակական կազմակերպություններին և ամբողջ հայությանը՝ Արցախի պաշտպանության գործին, որը հայրենիքի իրական ազատության ու անկախության գործն է:

Հիմնվելով Արցախը պաշտպանելու մեր ժողովրդի անկոտրում վճռականության վրա, «Արցախ» հայրենակցական միությունը պահանջում է ստեղծել Արցախի փրկության միջկուսակցական համակարգիչ խորհուրդ, որի մեջ պիտի մտնեն հասարակական-քաղաքական բոլոր ազդեցիկ ուժերի ներկայացուցիչները:

Մեր նպատակը մեկն է.

Պահանջել, որպեսզի բոլորը կատարեն իրենց սրբազան պարտքը ազգի ու հայրենիքի հանդեպ:

Մեր պահանջն է.

Անհապաղ հրավիրել Գերագույն խորհրդի արտակարգ նիստ՝ Արցախի համահայկական պաշտպանությունը կազմակերպելու համար:

Ժողովրդական և հասարակական-քաղաքական կազմակերպություններին կոչ ենք անում՝ բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում, գործարաններում, բուհերում և այլ հաստատություններում անցկացնել ժողովներ, ընդունել Հայաստանի Գերագույն խորհրդին ուղղված դիմումներ վերոհիշյալ պահանջով՝

—Ստեղծել տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած մի հանձնախումբ, որը ձեր անունից բանակցություններ վարի քաղաքական ազդեցիկ կազմակերպությունների հետ՝ *ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ* մեկ-երկու օրում ձևավորելու համար:

— «Արցախ» հայրենակցական միությունը Ազատության հրապարակում սկսել է նստացույց՝ արտահերթ նիստ հրավիրելու պահանջով:

— Արցախի հայաթափումը կասեցնելու հստակ ծրագիրը կներկայացվի ձեզ, երբ հաջողվի ստեղծել *ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ԽՈՐՀՈՒՐԴԸ*, որը և պետք է ստորագրի այդ փաստաթղթի տակ:

— Մեր ժողովրդին և հասարակական-քաղաքական կազմակերպություններին կոչ ենք անում իրենց առաջարկությունները և մտքերը ներկայացնել հետևյալ հասցեով՝

Մոսկովյան-11, 4-րդ հարկ, «Արցախ» հայրենակցական միություն:

Իշխանություններից պահանջում ենք սույն հայտարարությունը հրապարակել պետական մամուլում և հաղորդել հեռուստատեսությամբ:

8 հունիսի, 1991թ., *ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ*

«Արցախականչ», հունիս 1991, հ.9

«Արցախ» հայրենակցական միության չորրորդ համաժողովի հայտարարությունը Լեռնային Ղարաբաղի, Շահումյանի և Գետաշենի իրադրության վերաբերյալ

Արցախում իրադրությունը հասցվել է ծայրահեղորեն վտանգավոր աստիճանի: Ադրբեջանական կողմը ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների թողտվությամբ ու հովանավորությամբ Արցախի հայ ազգաբնակչության դեմ հետևողականորեն կիրառում է ցեղասպանություն, հայրենական հողից, սեփական օջախից տեղահանելու հակահրավական, անմարդկային բոլոր միջոցները: Ադրբեջանի իշխանությունների դաժան գործողությունների հետևանքով, որոնք իրագործվում են հատկապես ՕՄՕՆ-ի միջոցով, հաշվեհարդար է տեսնվում իրենց դարավոր բնօրրանում ապրող հայ բնակչության հետ: Իրեն իրավական պետություն հռչակած երկրում հոսում է անմեղ մարդկանց արյունը, սպանվում են տարբեր տարիքի ու սեռի քաղաքացիներ, այդ թվում՝ կանայք, երեխաներ միայն նրա համար, որ հայ են: Անձնագրային ռեժիմի ստուգման և այսպես կոչված գրոհայինների դեմ պայքարի պատրվակով բոլոր բնակավայրերից կալանավորված են ժողովրդի սերուցքը կազմող շուրջ չորս հարյուր անմեղ անձինք, գյուղերի ղեկավարներ, ժողովրդական պատգամավորներ, բժիշկներ, մտավորականներ, որոնք տեղափոխված են ադրբեջանական բանտերը, որտեղ ենթարկվում են խոշտանգումների: Նրանց հետագա ճակատագիրը մնում է անորոշ:

Դատարկվում են ստրատեգիական նշանակություն ունեցող հայկական գյուղերը, որն ուղեկցվում է հայ ազգաբնակչության ունեցվածքի հատուկ կազմակերպված կողոպուտով, հայկական գյուղերի ավերումով: Զենքի սպառնալիքով հավաքվում են ստորագրություններ՝ իբրև Ադրբեջանի իշխանություններին կամավոր ենթարկվելու, սեփական օջախները կամավոր լքելու վերաբերյալ: ԽՍՀՄ ներքին գործերի զորքերի թողտվությամբ և մասնակցությամբ դատարկվել են Գետաշենը, Մարտունաշենը, Բերդաձորը, Հադրութի շրջանի տասնյակի հասնող գյուղեր: Ամենուրեք ոտնահարվում են մարդու իրավունքների և ազգերի ինքնորոշման միջազգային նորմերը, կատարվում են չտեսնված բարբարոսություններ:

Չնայած հայ ժողովրդի գործադրած հսկայական ջանքերին, այնուամենայնիվ, պետք է իրատես գտնվենք և Արցախի ներկա վիճակը համարենք եթե ոչ օրհասական, ապա գոնե՝ բախտորոշ:

«Արցախ» հայրենակցական միության համաժողովը

1. Վճռականորեն դատապարտում է արցախահայության, հայ ժողովրդի դեմ կիրառվող ցեղասպանության նոր փորձը,

2. պահանջում է անհապաղ դադարեցնել արյունահեղությունը և բռնության ցանկացած դրսևորումը Արցախում, Հայաստանի սահմանամերձ շրջաններում, ստեղծել անհրաժեշտ բոլոր պայմանները, որպեսզի տեղահանված հայ ազգաբնակչությունը վերադառնա սեփական օջախները,

3. պահանջում է, որ ադրբեջանական կողմը անհապաղ ազատ արձակի ապօրինաբար ձերբակալվածներին, մարզին, Շահումյանի շրջանին, Գետաշենի ենթաշրջանին, նրանց բնակչությանը հատուցի պատճառած տնտեսական հսկայական վնասները (անասնագողություն, թալան, հրդեհված տներ և այլն),

4. պահանջում է կենտրոնական իշխանություններից՝ վերա կանգնելու մարզային, շրջանային օրինական իշխանությունները և նոր ֆեդերացիայի կազմում

մարզը (նրա մեջ ընդգրկելով Շահումյանի շրջանը, Գետաշենի ենթաշրջանը) ճանաչել որպես միութենական իրավական սուբյեկտ,

5. գտնում է, որ Արցախի հիմնահարցի լուծումն այնքան առաջնային է ու բախտորոշ, որ այդ հիմնահարցի արդարացի լուծման ձախողումը խիստ բացասաբար կանդրադառնա մեր ժողովրդի ապագայի վրա ընդհանրապես,

6. անհրաժեշտ է համարում գործնականորեն նպաստել Արցախի ժողովրդագրական ներկա վիճակի պահպանմանը, որը հայկական Արցախի գոյատևման գլխավոր պայմանն է,

7. ստեղծված իրավիճակն անհրաժեշտաբար պահանջում է, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները կենտրոնի ու հարևան պետությունների հետ վարեն առավել ճկուն ու շրջահայաց քաղաքականություն, որպիսի հանգամանքը անհրաժեշտ է թե՛ Արցախի և թե՛ ողջ Հայաստանի ապահովության համար,

8. կոչ է անում «Արցախ» հայրենակցական միության բոլոր անդամներին, համայն հայությանը՝ շարունակել վճռական հանուն արցախահայության արդար պայքարի հաղթանակի, ապահովելու համար արցախահայության ազատ, անկախ գոյությունը իր հայրենի բնօրրանում:

«*Արցախականչ*», հունիս 1991, № 9:

«ԱՐՑԱԽ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Արցախ» հայրենակցական միության համաժողովը որոշում է.

1. «Արցախ» հայրենակցական միության վարչության հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքները գնահատել բավարար:

2. «Արցախ» հայրենակցական միության նորընտիր վարչությանը, նրա նախագահությանը, շրջանային, տարածքային, գյուղական բոլոր համայնքների նախագահներին, միության բոլոր անդամներին՝ հավատարիմ մնալով Արցախի հիմնահարցի, նրա համազգային կենսական խնդիրների անշեղ իրագործման գաղափարներին, այսուհետև ավելի հստակորեն առաջնորդվել միության կանոնադրական պահանջներով:

3. Նկատի ունենալով այն, որ վերջին տարիներին զգալիորեն փոխվել են միության գործունեության ոլորտները և ներկայիս գործող կանոնադրությունը շատ կետերում չի համապատասխանում դրան, բացի այդ, միությունը մինչև հիմա չունի մշակված ծրագիր, ուստի առաջարկել նորընտիր վարչությանը նախապատրաստել ծրագրի նախագիծը և կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ առաջարկությունները ներկայացնել միության շրջանային, տարածքային և գյուղական համայնքների ներկայացուցիչների հավաքի քննարկմանը, ոչ ուշ, չորս ամսվա ընթացքում:

4. Պահանջել «Արցախ» հայրենակցական միության նորընտիր վարչությունից և նրա նախագահությունից՝ արագորեն վերակառուցել իրենց աշխատանքները, պետական բոլոր կառույցների, նախ և առաջ Հատուկ ծրագրերի պետական վարչության, Արցախի ղեկավար իշխանությունների և մյուս հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ ստեղծել ազգային շահերից բխող մի այնպիսի համակարգ, որը կծառայեցվի Արցախի հիմնահարցի լուծման գործընթացին:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ համարել՝

ա) կոնկրետ միջոցներ ձեռնարկել նորընտիր վարչության և նախագահության գործունեությունը թարմացնելու և ներկա պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ.

բ) հանձնաժողովների աշխատանքներին գործնական բնույթ տալու համար նրանցում ներգրավել գործարար հատկանիշներով այնպիսի մարդկանց, որոնք կարողանան գործել արագորեն վերափոխվող պայմաններին համապատասխան.

գ) պահանջել նորընտիր վերստուգիչ հանձնաժողովից՝ կանոնադրությամբ սահմանված ժամկետներում գործուն վերահսկողություն իրականացնել ֆինանսական միջոցների ծախսման ու հումանիտար օգնությունների առաքման և բաշխման աշխատանքների նկատմամբ.

դ) բարոյահոգեբանական տարբեր միջոցներով ի ցույց դնել և աշխատանքում ներգրավել Հայաստանում, ներքին և արտաքին սփյուռքում գտնվող համայնքների այն անդամներին, հատկապես մտավորականության ներկայացուցիչներին, որոնք տևական ժամանակով չեն համագործակցել «Արցախ» հայրենակցական և նրա մեջ մտնող շրջանային ու տարածքային կազմակերպությունների հետ:

5. Պահանջել նորընտիր վարչությունից և նախագահությունից հատուկ քնարկել շրջանային և տարածքային համայնքների ֆինանսա-տնտեսական միջոցները միության ֆինանսա-տնտեսական միջոցների հետ միավորելու և շրջանային համայնքները միատեղ կենտրոնացնելու հարցը և գտնել դրական լուծում:

6. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հետզհետե նվազում են միության և շրջանային կազմակերպությունների ֆինանսական միջոցները, դա կանխելու համար

ա) կապերն ամրապնդել բարերարների և մեկենասների հետ ու նրանց ներգրավել միության աշխատանքներում.

բ) կազմակերպել մանր ձեռնարկություններ ու կոոպերատիվներ ու ամեն կերպ նպաստել նրանց գործունեությանը.

գ) հատուկ ուշադրություն դարձնել անդամավճարների ու մուտքավճարների գանձմանը:

7. Պահանջել նորընտիր վարչությունից և նախագահությունից կապերը ամրապնդել ներքին ու արտաքին սփյուռքի բոլոր համայնքների, գործարար մարդկանց և Արցախի հիմնահարցով զբաղվող հասարակական-քաղաքական և բարեգործական կազմակերպությունների ու ընկերությունների հետ:

8. Քարոզչական, գաղափարաքաղաքական լայն աշխատանք տանել մասսաների շրջանում «Արցախ» հայրենակցականի համայնքները նոր անդամներով համալրելու, դրանով իսկ նրա աշխատանքները ակտիվացնելու և միության հեղինակությունն էլ ավելի բարձրացնելու ուղղությամբ:

9. Հատուկ ուշադրություն դարձնել միության տպագիր օրգանների գաղափարական բովանդակությանը և ստեղծել հրատարակչություն:

10. Ի գիտություն ընդունել հաշվետու ժամանակաշրջանում «Արցախ» հայրենակցականի հասցեին ներկա համաժողովում արված քննադատական դիտողությունները և պահանջել վարչության և նրա նախագահության նորընտիր կազմից առաջիկա նիստերից մեկում հատուկ անդրադառնալ այդ հարցին:

11. Կանոնադրության մեջ մինչև նոր փոփոխություններ մտցնելը, վարչությանը և նրա նախագահությանը իրավունք վերապահել նախագահության և վարչության կողմից ազատել նրանց, ովքեր անհարգելի պատճառով սիստեմատիկ կբացակայեն վարչության և նախագահության նիստերից և իրենց հեռու կպահեն միության աշխատանքներին մասնակցելուց:

6.11.93թ.

ՄԸԱ, արձանագրությունների գործ

«Շահումյան-Գետաշեն» հայրենակցականի նախաձեռնությամբ շրջանի բընակաղթված բնակչության անունից Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին ուղարկած դիմումը

Մեծարգո նախագահ.

Մոտ յոթանասուն տարի մենք մեն-մենակ դիմացել ենք կոմունիստական Ադրբեջանի հայահալած քաղաքականությանը, գոյատևել, պահպանել ենք մեր հայությունը, չնայած կոմունիստական Հայաստանը մեր տեղը նույնիսկ չի էլ իմացել:

Հենք վարանել և վհատվել նաև արցախյան շարժման անցած տարիների ընթացքում: Դիմակայել ենք հարյուրապատիկ անգամ գերակշռող թշնամուն, իսկ Գետաշենի անկումից հետո՝ նաև խորհրդային զորքերին: Մենք անչափ սիրում ենք մեր հողն ու ջուրը, մեր չքնաղ լեռնաշխարհը, և ոչ մեկի մտքով չի անցնում լքել այն: Հինգ տարի մարտնչել ենք, դիմացել բազում զրկանքների դաժան շրջափակման, այնպես որ, մեր խիղճը մաքուր է հայ ժողովրդի, սերունդների և պատմության առաջ:

Բայց դառն իրականությունն այն է, որ մենք՝ բազմահազար շահումյանցիներս, դարձել ենք փախստականներ և մոտ երկու տարի է մեր չքնաղ ծննդավայրում չենք: Մեզնից ոմանք, չդիմանալով ծանր պայմաններին, հաճախ՝ անտարբեր ու ոչ բարյացակամ վերաբերմունքին, որին արժանի չէր շահումյանցին, հեռացել են օտար ափեր: Մնացած մասը, այսինքն՝ մենք, հանգրվանած ու պատսպարված մեր գորշ, մռայլ ու սառը կացարաններում, բարեկամների ու ծանոթների տներում, հասած ծայրահեղ աղքատության աստիճանի, մի կերպ քարշ ենք տալիս մեր գոյությունը:

Դիմանում ենք բոլոր դժվարություններին, ցավերին ու վիրավորանքներին, հույսով ու հավատով սպասում մեր հայրենիքի ազատագրմանը, որպեսզի վերադառնանք ու շենացնենք մեր ավերված օջախները, տեր կանգնենք մեր լքված շիրիմներին...

Երկու տարի համբերությամբ զինված սպասում ենք:

Ցավոք, դեպքերի ընթացքը ցույց է տալիս, որ այսօրվա քաղաքական ու ռազմական բախումների մեջ շրջանի ազատագրման հարցը կարծես դուրս է մնացել իշխանությունների տեսադաշտից: 1992թ. հունիսի 13-ից ցայսօր ԼՂՀ-ի վերաբերյալ միջազգային, միջպետական և դիվանագիտական թերևս ոչ մի փաստաթղթում չի հիշատակվում Շահումյանի շրջանի անունը: Կարծես չի եղել 1991թ. սեպտեմբերի 2-ի Հռչակագիրը, չի եղել հնգամյա մեր հերոսական պայքարը, չի եղել հինգ հարյուր զոհ տված, իր քաջությամբ ու դիմացկունությամբ աշխարհին ու ողջ հայությանը զարմացրած, տասնվեց հազար ընտիր հայություն ունեցող շրջանը:

Մենք կանք: Մեր զավակները դեռ մարտնչում ու զոհվում են հանուն Արցախի, հանուն իրենց ծննդավայրի...

Պարոն նախագա՛հ, մենք չենք պատկերացնում Արցախն առանց Շահումյանի (իսկ արդյո՞ք որևէ մեկը պատկերացնում է): Նախ՝ այդ տարածքը Արցախի պատմական անբաժանելի մասն է, հետո՝ այն հանդիսանում է ԼՂՀ հյուսիսային դարպասը, որում մենք համոզվել ենք և՛ մեր ազատագրական շարժման նախորդ ժամանակաշրջանում, և՛ այս հինգ տարիների ընթացքում:

Թախանձագին խնդրում ենք՝ հաշվի առնելով մեր ցանկություններն ու նվիրվածությունը, հայ ազգային-ազատագրական պայքարի անցած ու նորօրյա պատմության մեջ Շահումյանի տեղը, գործադրել բոլոր հնարավոր միջոցները՝ մեր պատմական հայրենիքը ազատագրելու համար:

«Մռավի ղողանջներ», 24 մարտի 1994, հ. 3

Հրանտ Բարսեղի Աբրահամյան

ԵՐԲ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՎՏԱՆԳԻ ՄԵՋ Է

(Էջեր «Արցախ» հայրենակցական միության անցած ուղուց)

Խմբագիր՝ **Ս. Հ. Ռաշիդյան**
Տեխն. խմբագիր. **Ռ. Ե. Ախիրյան**
Նկարիչ՝ **Գ. Խ. Գյուլամիրյան**
Գեղ. խմբագիր՝ **Վ. Ա. Ջրաղացպանյան**

Հանձնված է շարվածքի 16.04.97թ.:
Ստորագրված է տպագրության 20.05.97թ.:
Տառատեսակը՝ «Արարատ»:
Գինը՝ պայմանագրային:
«Լույս» հրատարակչություն, Երևան-9, Իսահակյան 28